



*Հերազուրական խմբի ղեկավար՝
ԹԱԹՈՒԼ ՄԿՐՏՉՅԱՆ*
Կնարեսագիտության դոկտոր, դոցենտ

*Հերազուրական խմբի անդամներ՝
ԷՐԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ*
Կնարեսագիտության թեկնածու, դոցենտ
ԳՈՒՐԳԵՆ ՕՀԱՆՅԱՆ
Կնարեսագիտության թեկնածու, դոցենտ
ՄԵԼԱՆՅԱ ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դասախոս
ՆԱՐԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՏՀ Ֆինանսների ամբիոնի ասպիրանտ
ՄՈՎՍԵՍ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀՊՏՀ «Ֆինանսներ» մասնագիտության մագիստրանտ

ՀՀ ԹՌԶՆԱՄՄԻ ՇՈՒԿԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.52174/978-9939-61-250-8

Ե Ր Ե Վ Ա Ն
«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 339.13:637.54
ԳՄԴ 65.42+36.93
Հ 247

Հրատարակության է երաշխավորել
ՀՊՏՀ գիտական խորհուրդը

Մասնագիտական խմբագիր՝

Դ. Հախվերդյան
տ.գ.դ., պրոֆեսոր

Գրախոսներ՝

Ս. Ավետիսյան
տ.գ.դ., պրոֆեսոր

Հ. Ծախեցյան
տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

Դ. Գալոյան
տ.գ.դ., պրոֆեսոր

Թ. Մկրտչյան
տ.գ.դ., դոցենտ

Դ. Հախվերդյան
տ.գ.դ., պրոֆեսոր

Գ. Նազարյան
տ.գ.թ., դոցենտ

ՀՀ թռչնամսի շուկայի հետազոտություն/ Թ. Մկրտչյան և ուրիշներ.- Եր.:
Հ 247 Տստեսագետ, 2022.- 130 էջ.- («Ամբերդ» մատենաշար 53):

Հետազոտության շրջանակում դիտարկվել են թռչնամսի միջազգային շուկայի զարգացման հիմնական միտումները, ինչպես նաև իրականացվել է ՀՀ թռչնամսի ներքին շուկայի մրցակցային վիճակի համալիր ուսումնասիրություն, դրա մասնակիցների, նրանց մասնաբաժինների, գերիշխող դիրքի, դրանով պայմանավորված՝ հնարավոր չարաշահումների և հակամրցակցային գործողությունների բացահայտում: Մրցակցության ապահովման պետական քաղաքականության արդյունավետության բարձրացման նկատառումով կատարվել են համապատասխան առաջարկություններ, որոնք նախանշվել են որպես այս հետազոտության հիմնական նպատակներ:

ՀՏԴ 339.13:637.54
ԳՄԴ 65.42+36.93

ISBN 978-9939-61-250-8

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2022 թ.
© «Տստեսագետ» հրատարակչություն, 2022 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

**Գլուխ 1. ԹՈՉՆԱՄՄԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ
ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 7**

- 1.1. Թոչնամանի համաշխարհային արտադրության և սպառման ծավալների շարժընթացը: Սպառողական նախաստիքությունների փոփոխությունները 7
- 1.2. ՀՀ թոչնամանի շուկայի զարգացման միտումները..... 17

**Գլուխ 2. ՀՀ ԹՈՉՆԱՄՄԻ ՇՐՋԱՆԱԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄԸ 23**

- 2.1. Ապրանքային շուկայի հատկորոշման նպատակը 23
- 2.2. «Հավի միս» ապրանքային շուկայի ընտրությունը 25
- 2.3. ՀՀ «Հավի միս» ապրանքային շուկայի ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները, տնտեսվարող սուբյեկտների կազմը և ծավալները 26

**Գլուխ 3. ՀԱՎԻ ՄՄԻ ՇՐՋԱՆԱԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ 34**

- 3.1. ՀՀ հավի մսի շրջանառության ոլորտը կարգավորող ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը 34
- 3.2. Հավի մսի շրջանառության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, ՄՄ հանձնաժողովի և ՀՀ կառավարության որոշումները 38
- 3.3. Հավի մսի շրջանառության ոլորտի հարկային և մաքսային կարգավորումները ՀՀ-ում 44
- 3.4. Հավի մսի շրջանառության ոլորտի այլ կարգավորումները ՀՀ-ում.... 47

Գլուխ 4. ՀՀ «ՀԱՎԻ ՄԻՍ» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ..50

- 4.1. ՀՀ «Հավի միս» ապրանքային շուկայի տնտեսվարող սուբյեկտները և շուկայի կառուցվածքային տեղաշարժերը 50
- 4.2. Հավի մսի ներմուծման, արտադրության և իրացման ծավալները ՀՀ-ում..... 51
- 4.3. ՀՀ «Հավի միս» ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը 57

Գլուխ 5. ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ԳՆԱՅԻՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՀԱՎԻ ՄՄԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ 59

5.1. Հավի մսի միջազգային գների շարժընթացը 59

5.2. Հավի մսի հայաստանյան շուկայի գնային միտումները: Ընդհանուր գներ 61

5.3. Հավի մսի իրացման գների շարժընթացը և իրացման մակարդակները ՀՀ-ում..... 64

5.4. Հավի մսի ինքնարժեքը և իրացման գները ձևավորող բաղադրիչները ՀՀ-ում..... 70

5.5. ՀՀ հավի մսի շուկայում գնային տատանումներ առաջացնող գործոնների մոդելավորումը..... 72

5.6. Հավի մսի միջազգային և ՀՀ ներքին գների միջև խզումների գնահատումը 79

5.7. ՀՀ-ում հավի մսի գների փոփոխության ազդեցությունն իրացման ծավալների վրա 82

5.8. ՀՀ ներմուծվող հավի մսի գների հնարավոր փոփոխությունները զարգացման տարբեր սցենարների պարագայում 84

5.8.1. Բազային սցենարի մշակում 84

5.8.2. Մաքսատուրքերի բարձրացման ազդեցությունների սցենարներ 86

Եզրակացություն..... 89

Օգտագործված գրականություն 98

Համառոտագրեր..... 99

Մսի և մսամթերքի համաշխարհային շուկան պարենի համաշխարհային շուկայի ամենամեծ հատվածներից է ինչպես առևտրի և տեսականու ծավալներով, այնպես էլ մասնակիցների քանակով, ուստի դրա զարգացման հիմնական ուղղությունների և ժամանակակից միտումների ուսումնասիրությունը չափազանց կարևորվում է: Այս շուկայի առանձնահատկությունը ոչ միայն համապատասխան խմբի ապրանքների արտադրության և սպառման զգալի ծավալների, այլև դրանց՝ բնակչության սննդակարգում որպես կենդանական սպիտակուցների հիմնական աղբյուր հանդես գալու մեջ է:

Բնակչության կողմից սպառվող մսի ամենատարածված տեսակներից են կարմիր միսը (տավարի միս, ոչխարի միս), սպիտակ միսը (հիմնականում՝ թռչնամիս և որոշ դեպքերում՝ խոզի միս) և ծովամթերքը (ձուկ և խեցեմորթ), որոնց սպառման ծավալներն աշխարհում շարունակաբար աճում են: Ընդ որում, մսի սպառման ծավալների աճը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից հիմնականն աշխարհի բնակչության թվաքանակի և եկամուտների ընդհանուր մակարդակի շարունակական աճն է, ինչն էլ, իր հերթին, նպաստում է բնակչության գնողունակության աստիճանի բարձրացմանը: Արդյունքում, սպառողական սննդակարգում սկսել է գերակշռել միսը, որը համարվում է կալորիաներով ավելի հարուստ սննդի աղբյուր՝ հացահատիկային հիմքով սննդակարգի համեմատ: Մսի սպառման ծավալների փոփոխությունն ավելի տեսանելի է եղել կարմիր մսի տեսակների (տավարի միս, ոչխարի միս և այլն), իսկ սպիտակ մսի տեսակներից՝ խոզի մսի դեպքում, որոնք համարվում են թանկ սննդամթերքներ և ներառվում հիմնականում եկամտային միջին և բարձր մակարդակ ունեցող երկրների և բնակչության խմբերի սննդակարգում: Իսկ ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում և բնակչության խմբերում առավելապես գերակշռում է թռչնամսի սպառումը, քանի որ վերջինս, մսի մյուս տեսակների համեմատ, ամենաէժեքան է: Մակայն, վերջին մի քանի տասնամյակում մսի տեսակների նկատմամբ նախապատվությունը զգալի փոփոխություն է կրել, որը, կարծես թե, պայմանավորված չէ եկամուտների մեծությամբ: Մասնավորապես՝ աշխարհում նկատվում է սպիտակ մսի, առավելապես՝ թռչնամսի նախապատվության ընդգծված միտում, որն առկա է եկամտային բոլոր խմբերում ներառված երկրներում, ինչը չենք կարող պայմանավորել միայն վերջինիս ցածր գնով. ակնհայտ է, որ այս դեպքում դա կապված է սպառողների այն ընկալման հետ, որ սպիտակ միսն ավելի առողջ, սննդարար և, միաժամանակ, դիետիկ սննդամթերք է: Բացի դրանից, թռչնամսի սպառման առումով, բացակայում են կրոնական, մշակութային և այլ սահմանափակումները, ինչպիսիք առկա են, օրինակ, խոզի մսի պարագայում՝ մուսուլմանական երկրներում:

Թեև Հայաստանի Հանրապետությունում մսի տեսակների սպառման տեսանկյունից չկան կրոնական, մշակութային, ավանդական և այլ տիպի սահմանափակումներ, և նախընտրելի են դրա բոլոր տեսակները, այնուամենայնիվ, համաշխարհային սպառման կառուցվածքային փոփոխություններն իրենց արտացոլումն են գտել նաև մեր երկրում: Վերջին տարիներին մսի սպառման ծավալներում աճի ամենաբարձր ցուցանիշն ապահովել է թռչնամիսը:

Լինելով փոքր տնտեսությամբ երկիր, որը ներմուծում է սպառվող թռչնամսի շուրջ 70-75%-ը, ՀՀ-ն արձագանքում է համաշխարհային տնտեսությունում ընթացող՝ մսի սպառման նախասիրությունների ինչպես մշակութային ու վարքագծային փոփոխություններին, այնպես էլ գնային տատանումներին: Ուստի, այս առումով, էպպես կարևորվում են թռչնամսի համաշխարհային և տեղական շուկաների, դրանցում դրսևորվող հիմնական միտումների ուսումնասիրությունը, ՀՀ տնտեսություն դրանց փոխանցման ուղիների, թռչնամսի սպառման նախասիրությունների, սպառողական վարքագծի, գների տատանումների, ինչպես նաև ներքին շուկայի կառուցվածքային տեղաշարժերի ու մրցակցային միջավայրի պայմանների փոփոխությունների բացահայտումը:

Տեսագոտելով միջազգային շուկաներում մսի տարբեր տեսակներին առնչվող մի շարք ցուցանիշների փոփոխություններն ու զարգացման միտումները՝ հնարավոր կլինի վեր հանել ներքին տնտեսության առաջընթացը կանխորոշող հիմնական գործոնները, առկա խնդիրները, ինչպես նաև համապատասխան լուծումների առաջադրմամբ մշակել պետության տնտեսական քաղաքականության նոր մոտեցումներ:

Տեսագոտության շրջանակում փորձ է արվել դիտարկելու թռչնամսի միջազգային շուկայի զարգացման հիմնական միտումներն ու պատճառները, դրանց՝ ՀՀ տնտեսություն փոխանցման ուղիներն ու կառուցակարգերը՝ հնարավոր ազդեցության գնահատմամբ, ինչպես նաև կատարելու ՀՀ թռչնամսի ներքին շուկայի մրցակցային վիճակի համալիր ուսումնասիրություն, դրամասնակիցների, նրանց մասնաբաժինների, գերիշխող դիրքի, դրանով պայմանավորված՝ հնարավոր չարաշահումների և հակամրցակցային գործողությունների բացահայտում՝ ներկայացնելով մրցակցության ապահովման պետական քաղաքականության արդյունավետության բարձրացման առաջարկություններ, որոնք նանխանշվել են որպես այս հետազոտության հիմնական նպատակներ:

**ԹՌՉՆԱՄՍԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

**1.1 Թռչնամսի համաշխարհային արտադրությունն
ու սպառման ծավալների շարժընթացը:
Սպառողական նախասիրությունների
փոփոխությունները**

Աշխարհի յուրաքանչյուր երկրում միսն ու մսամթերքն էական տեղ են զբաղեցնում բնակչության սպառողական զամբյուղում: Ավանդաբար, բնակչության սպառման կառուցվածքում առավելապես գերակշռել են մսի կարմիր տեսակները (տավարի միս, ոչխարի միս և այլն), իսկ սպիտակ տեսակներից՝ խոզի միսը՝ որպես թանկարժեք սննդամթերք, ու ներառվել եկամտային միջին և բարձր մակարդակ ունեցող երկրների և բնակչության խմբերի սննդակարգում: Ավելի ցածր եկամուտ ունեցող երկրների կամ բնակչության խմբերի սպառման կառուցվածքում հիմնականում գերակշռել է ոչ մսային, առավելապես՝ հացահատիկային հիմքով էժան սննդակարգը: Ընդ որում, մսի տեսակներից սպառման ծավալներով աչքի է ընկել մասնավորապես թռչնամսիսը՝ որպես ցածր գին ունեցող սննդամթերք: Սակայն, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, վերջին տարիներին ամբողջ աշխարհում «Միս» ապրանքային խմբի սպառման կառուցվածքն էապես փոփոխվել է առավելապես թռչնամսի, իսկ դրա մեջ՝ հավի մսի մասնաբաժնի ավելացման ուղղությամբ: Եվ այս միտումը նկատելի է զարգացման տարբեր աստիճան ունեցող երկրների սպառման կառուցվածքում: Մա պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնցից հարկ է մատնանշել ժողովրդագրական փոփոխությունները, ուրբանիզացման աճը, եկամուտների մակարդակն ու դրա աճի տեմպերը, թռչնամսի և մսի այլ տեսակների գների տարբերությունները, ձևավորված ավանդույթները, կրոնական համոզմունքները, մշակութային նորմերը և բնապահպանական ընկալումները, տարբեր կրոններ դավանող երկրների բնակչության թվաքանակի աճի տեմպերի հարաբերակցությունը և այլն: Այսօր արդեն ակնհայտ է սպառողների կողմից սպիտակ մսին տրվող նախապատվությունը՝ մսի այլ տեսակների համեմատ, քանի որ այն ընկալվում է որպես ավելի առողջ, սննդարար, համեղ, ցածր կալորիականությամբ սննդամթերք: Դա արտահայտվում է ամբողջ աշխարհում թռչնամսի սպառման ծավալների աճի բարձր տեմպերով՝ արդեն իսկ գերազանցելով մսի մյուս՝ սպառման տեսանկյունից ավանդական համարվող տեսակների սպառ-

ման ծավալները՝ «Միս» ապրանքային խմբի սպառման մեջ ապահովելով 40% մասնաբաժին:

Ընդ որում, վերը նշված հանգամանքները պայմանավորել են աշխարհում մսի բոլոր տեսակների արտադրության ծավալների զգալի աճ, որի շրջանակում աճի ամենաբարձր տեմպն արձանագրել է հենց թոչնամսի արտադրությունը: Այսպես՝ վերջին 60 տարվա ընթացքում մսի բոլոր տեսակների արտադրության ծավալներն աճել են մոտ 3.5 անգամ, իսկ վերջին 20 տարում՝ 1.6 անգամ:

Աղյուսակ 1.1.1



Մսի համաշխարհային արտադրության ծավալներն ու աճի տեմպերը¹ (մլն տոննա)

Մսի տեսակը	1990	1995	2000	2005	2010	2015	2020	1990-2020 թթ. աճի միջին տարեկան փոփոխությունը
Տավարի	53.9	56.3	59.1	63.0	65.9	66.2	70.5	1.2
Խոզի	68.4	78.9	89.5	98.4	108.6	119.5	108.3	2.53
Ոչխարի	9.6	10.4	11.5	12.8	13.5	14.7	16.0	1.8
Թոչնամիս	33.1	54.1	68.0	80.9	99.8	116.0	133.6	4.47
Ընդամենը՝ միս	165.0	199.7	228.1	255.1	287.8	316.4	328.4	2.6

Աղյուսակ 1.1.1-ի տվյալներից ակնհայտ է, որ մսի բոլոր տեսակների համաշխարհային արտադրության ծավալները 2020 թ.-ին գրեթե կրկնապատկվել են՝ 1990 թ.-ի համեմատ: Դիտարկվող ժամանակահատվածում մսի համաշխարհային արտադրության ծավալները աճել են տարեկան միջինում 2.3%-ով, ընդ որում, տավարի, խոզի և ոչխարի մսի արտադրությունը, համապատասխանաբար՝ 0.9%-ով, 1.6%-ով և 1.7%-ով, իսկ թոչնամսինը՝ 4,8%-ով: Արդյունքում, էականորեն փոխվել է մսի համաշխարհային արտադրության կառուցվածքը: Այսպես՝ թոչնամսի արտադրության մասնաբաժինը մսի արտադրության ընդհանուր ծավալում 1990-2020 թթ.-ին աճել է ավելի քան 2 անգամ՝ 21.1%-ից հասնելով 40.7%-ի՝ ի տարբերություն տավարի և խոզի մսերի, որոնց մասնաբաժինները նվազել են, համապատասխանաբար՝ 32.7%-ից մինչև 21.5% և 41.5%-ից մինչև 33.0% (գծապատկեր 1.1.1):

Ըստ վերոնշյալ փոփոխությունների՝ թոչնամսի արտադրության ծավալը դիտարկվող ժամանակահատվածում «Միս» ապրանքային խմբի ընդհանուր ծավալում երրորդից բարձրացել է առաջին տեղ, իսկ տավարի մսի արտադրության մասնաբաժինը նվազել է 33.8%-ով, խոզի մսինը՝ 20.5%-ով: Ինչ վերաբերում է ոչխարի մսի արտադրության մասնաբաժնին, ապա դիտարկվող 30 տարվա ընթացքում դա համեմատաբար կայուն է՝ նվազելով ընդամենը 0.9%-ով:

¹ Աղբյուրը՝ FAO, World Agriculture: Towards 2015/2030. An FAO Perspective. <http://www.fao.org/docrep/005/y4252e/y4252e07.htm>



Գծապատկեր 1.1.1

Մսի համաշխարհային արտադրության կառուցվածքը²

Դատելով մսի տարբեր տեսակների համաշխարհային արտադրության աճի տեմպերից՝ թռչնամսի արտադրության ծավալների առաջանցիկ աճը շարունակվելու է նաև ապագայում, և առաջիկա տասնամյակում թռչնամիսը լինելու է սպիտակուցային մսի արտադրության, հետևաբար նաև սպառման համաշխարհային բացարձակ առաջատար:

Այդ աճը պայմանավորված է հետևյալ հիմնական հանգամանքներով.


- թռչնամսի գինը զգալիորեն ցածր է մսի մյուս տեսակների, հատկապես՝ տավարի և խոզի մսի գներից,
- թռչունների աճի ժամանակահատվածը (1 օրականից մինչև մորթ) ավելի կարճ է, քան մյուս մսատու կենդանատեսակներինը,
- թռչնամսի արտադրության գործընթացի կազմակերպումն ավելի հեշտ է և նվազ ծախսատար՝ ի տարբերություն մսի մյուս տեսակների արտադրության (անհրաժեշտ տարածքի, օգտագործվող ջրի, կերի ու այլ առումներով),
- հավի մսի սննդային որակների վերաբերյալ մարդիկ ունեն դրական ընկալում (համեղ է, ցածր կալորիականությամբ և սննդարար),
- գործնականում բացակայում են թռչնամսի սպառման կրոնական և մշակութային սահմանափակումները, որոնք առկա են մսի այլ տեսակների, օրինակ՝ խոզի մսի պարագայում:

Բացի վերոնշյալ գործոններից, պետք է նշել, որ ներկայում աշխարհի բազմաթիվ երկրների կառավարություններ իրականացնում են թռչնամսի արտադրության խթանման՝ հովանավորչության սահմանների ընդլայնման հասցեական քաղաքականություն: Դա պայմանավորված է նրանով, որ թռչնամսի արտադրությունը դիտարկվում է որպես ներառական, արագ աճ

² Աղբյուրը՝ World Agriculture: Towards 2015/2030 An FAO Perspective.

ապահովող, բնական հիմքով արդյունավետ արտադրությունների կազմակերպման ոլորտ (ԱՄՆ, Կանադա, Չինաստան, ԵՄ բազմաթիվ երկրներ), որի զարգացման ժամանակակից միտումներն արտահայտվում են արտադրական գործընթացի տարբեր օղակների համակենտրոնացման բարձր հակվածությամբ: Այսպես, լոգիստիկ ծախսերի օպտիմալացման և բուսասանիտարական պահանջների կառավարելիության նկատառումներից ելնելով, թոչնամանի արտադրության ոլորտն աշխարհում աչքի է ընկնում մասնագիտացած խոշոր համալիրներում արտադրության բոլոր կենսափուլերի համախմբմամբ՝ որպես մեկ արտադրական միավոր, որն ինքնին դառնում է համակարգաստեղծ ոլորտ՝ բազմարկչային մեծ էֆեկտով, քանի որ հումքային կախվածությունը ներմուծումից փոքր է:

Մսի որոշ տեսակների համաշխարհային արտադրության ծավալների աճն ու «Միս» ապրանքային խմբի կառուցվածքային տեղաշարժերը, որոնք պատկերված են գծապատկեր 1.1.2-ում, հիմնականում պայմանավորված են սպառման ծավալների և նախասիրությունների փոփոխություններով:



Գծապատկեր 1.1.2

Մսի որոշ տեսակների համաշխարհային սպառման ծավալները 1990-2020 թթ.³ (մլն տոննա)

Ինչպես տեսնում ենք, դիտարկվող ժամանակահատվածի սկզբին՝ 1990 թ., մսի նշված տեսակների մեջ սպառման ամենամեծ ծավալն աշխարհում ունեցել է խոզի միսը, որը սպառման բացարձակ մեծությամբ շուրջ 31%-ով գերազանցել է տավարի, 2.2 անգամ՝ թռչնամսի և 7.9 անգամ՝ ոչխարի մսի սպառման ծավալները: Իսկ արդեն դիտարկվող ժամանակահատվածի վերջին՝ 2020 թ., խոզի մսի համաշխարհային սպառման ծավալը գերազանցել է տավարի մսի սպառումը՝ 54%-ով, ոչխարի մսինը՝ 8.2 անգամ, իսկ հավի մսի սպառման ծավալին զիջել շուրջ 22%-ով: Ընդ որում, արդեն 2016 թ.-ին խոզի մսի և թռչնամսի համաշխարհային սպառման ծավալները գրեթե հա-

³ https://stats.oecd.org/viewhtml.aspx?datasetcode=HIGH_AGLINK_2021&lang=en#

վասարվել են՝ կազմելով շուրջ 118.0-ական մլն տոննա, որից հետո խոզի մսի համախառն սպառումն աշխարհում սկսել է նվազել, իսկ թռչնամսի սպառման ծավալի աճը շարունակվել է նաև դրանից հետո: Այսպես՝ եթե դիտարկվող 30-ամյա ժամանակահատվածում տավարի մսի համաշխարհային սպառումն աճել է 1.5, խոզինը՝ 1.7, իսկ ոչխարինը՝ շուրջ 2 անգամ, ապա թռչնամսի սպառումն աճել է 4.6 անգամ: Արդյունքում, սպառման տարեկան աճի միջին տեմպը կազմել է ընդամենը մսի դեպքում՝ 2.7%, տավարի մսի դեպքում՝ 1.3%, խոզի մսի դեպքում՝ 1.9%, ոչխարի մսի դեպքում՝ 2.4%, իսկ թռչնամսի դեպքում՝ 5.4%:

Այսպիսով՝ 1990 թ.-ից ի վեր մսի տեսակներից, ըստ սպառման ծավալների, աչքի է ընկել թռչնամսը, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ այս միտումն առաջիկա տասնամյակում շարունակվելու է՝ պայմանավորված վերը թվարկված հանգամանքներով (նախասպիրությունների, մշակույթի և ավանդույթների փոփոխություն): Իհարկե, թռչնամսի սպառման աճը պայմանավորել են նաև այլ գործոններ, որոնցից կարելի է նշել հավի մսից պատրաստվող ուտեստների մասնագիտացած ռեստորանների տարածումն աշխարհում (օրինակ՝ KFC) կամ վերջին 30 տարվա ընթացքում թռչնամսի արտադրության և իրացման ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունները՝ կապված նոր արտադրատեսակների ստեղծման հետ, որոնք հիմնականում վերամշակված արտադրանք են և հանդես են գալիս որպես թռչնամսի ավանդական արտադրանքի այլընտրանք:

Աղյուսակ 1.1.2

Թռչնամսի համաշխարհային սպառման առաջատար երկրները և նրանց մասնաբաժիններն ընդհանուր սպառման մեջ 1990-2020 թթ.⁴ (տոկոս)


	1990	1995	2000	2005	2010	2015	2016	2017	2018	2019	2020
<i>ԵՄ</i>	6.1	7.1	8.0	9.2	9.8	11.0	11.4	11.4	11.8	11.8	12.0
<i>ԱՄՆ</i>	10.1	11.8	13.8	15.9	16.0	17.4	17.8	18.1	18.4	18.9	19.1
<i>Բրազիլիա</i>	2.1	3.7	5.2	5.2	8.5	9.3	9.2	9.4	9.3	10.1	10.0
<i>Չինաստան</i>	3.9	8.4	12.2	13.4	16.8	18.3	19.1	19.0	20.0	22.7	24.8
<i>Հնդկաստան</i>	0.4	0.6	0.9	1.4	2.2	3.3	3.5	3.8	4.1	4.2	3.8
<i>ՌԴ</i>	1.5	1.8	1.5	2.8	3.2	4.3	4.3	4.6	4.6	4.5	4.6
<i>Ջարգացող երկրներ</i>	16.3	27.2	30.8	36.7	39.7	45.0	46.1	46.7	48.0	48.5	49.2
<i>Ջարգացած երկրներ</i>	12.1	27.2	37.4	43.6	59.7	69.6	71.3	74.3	76.8	81.6	82.8
<i>OECD</i>	16.3	27.3	32.0	37.3	39.8	44.8	46.2	46.8	48.2	48.8	49.4
<i>Աշխարհ</i>	28.4	54.3	68.1	80.4	99.4	114.5	117.8	121.0	124.7	130.1	132.0

Այսպես՝ մինչև 2000-ական թվականները թռչնամսը, առավելապես՝ հավի միսը հիմնականում վաճառվել է ամբողջական հավի տեսքով (օրինակ՝

⁴ https://stats.oecd.org/viewhtml.aspx?datasetcode=HIGH_AGLINK_2021&lang=en#

այդ ժամանակահատվածում ԱՄՆ-ում հավի մսի իրացման շուրջ 85 տոկոսը վաճառվել է հենց այդպես): Իսկ վերջին 10 տարվա ընթացքում հավի մսի՝ ամբողջական հավի տեսքով իրացումն ընդհանուր իրացման 10 տոկոսից էլ փոքր մասն է կազմում: Ներկայում սպառողներն իրենց սիրելի ուտեստի պատրաստման նպատակով նախընտրում են ձեռք բերել հավի առանձին հատվածներ, և այս միտումը տարածվել է ամբողջ աշխարհում: Թերևս, այս հանգամանքը ևս հավի մսի սպառման ծավալների աճի լրացուցիչ խթան է:

Թռչնամսի սպառման ծավալների աճը, հիմնված նախասահիթությունների, ավանդույթների, ինչպես նաև սպառողների շրջանում թռչնամսի որակական և սննդային հատկությունների մասին պատկերացումների վերանայման արդյունքում տեղի ունեցած վարքագծային փոփոխությունների վրա, զգալիորեն թուլացրել է մսի տեսակների ընտրության կախվածությունը եկամուտների մեծությունից (քանի որ հայտնի է, որ բարձր եկամուտ ունեցող երկրների և բնակչության խմբերի համար ավանդաբար նախապատվելի են եղել մսի առավելապես կարմիր տեսակները): Դիտարկվող 30 տարվա ընթացքում զգալիորեն աճել են թռչնամսի սպառման ծավալները հենց զարգացած և բարձր եկամուտ ունեցող երկրներում (ՏԶՀԿ դասակարգմամբ): Այսպես՝ եթե 1990 թ.-ին զարգացած և զարգացող երկրներում թռչնամսի սպառման ծավալներն ապահովել են թռչնամսի համաշխարհային սպառման համապատասխանաբար՝ 42.6%-ը և 57.4%-ը, ապա այդ համամասնությունն արդեն 1995 թ.-ին հավասարվել է, իսկ 2020 թ.-ին զարգացած երկրներն ապահովել են թռչնամսի համաշխարհային սպառման 62.7%-ը, իսկ զարգացող երկրների մասնաբաժինը նվազել է մինչև 37.3% (գծապատկեր 1.1.3):



Գծապատկեր 1.1.3

Զարգացող և զարգացած երկրներում թռչնամսի սպառման մասնաբաժինը համաշխարհային սպառման ընդհանուր ծավալում 1990-2020 թթ.⁵

⁵ Տվյալների աղբյուրը՝ https://stats.oecd.org/viewhtml.aspx?datasetcode=HIGH_AGLINK_2021&lang=en#, հաշվարկները կատարել են հեղինակները:

Եթե զարգացած և զարգացող երկրներում թոչնամանի սպառման ծավալները համադրենք այդ երկրների բնակչության թվաքանակի և վերջինիս աճի տեմպերի հետ, ապա միտումը, որ բարձր եկամուտ ունեցող երկրներում մսի բոլոր տեսակներից նախապատվությունը տալիս են հենց թոչնամանի սպառմանը, և որ դա պայմանավորված չէ վերջինիս ցածր գնով, ավելի ընդգծված կդառնա:

Այսպես՝ 1990-2020 թթ. աշխարհում բնակչության մեկ շնչի հաշվով մսի տարեկան սպառման ծավալն աճել է գրեթե 60%-ով՝ 21.3 կգ-ից հասնելով 34 կգ-ի:

Աղյուսակ 1.1.3

Աշխարհում բնակչության մեկ շնչի հաշվով մսի տարբեր տեսակների սպառումը (կգ), 1990-2020 թթ.⁶


	1990		2000		2010		2020	
	Սպառումը, կգ	Մասնաբաժինը, %	Սպառումը, կգ	Մասնաբաժինը, %	Սպառումը, կգ	Մասնաբաժինը, %	Սպառումը, կգ	Մասնաբաժինը, %
Տավարի միս	6.07	28.5%	6.75	22.8%	6.57	19.9%	6.33	18.6%
Խոզի միս	9.3	43.6%	11.38	38.5%	12.17	36.8%	10.88	32.0%
Ոչխարի միս	1.26	5.9%	1.65	5.6%	1.7	5.1%	1.82	5.4%
Թռչնամիս	4.69	22.0%	9.81	33.1%	12.64	38.2%	14.98	44.0%
Ընդամենը	21.32		29.59		33.08		34.01	

Ինչպես տեսնում ենք, դիտարկվող ժամանակահատվածում բացարձակ մեծությամբ մեկ շնչի հաշվով սպառման ծավալի շարունակական աճ առկա է միայն թոչնամանի և ոչխարի մսի պարագայում, իսկ տավարի և խոզի մսի սպառումը տարբեր տարիների նվազել է: Ընդ որում, պետք է նշել, որ 2020 թ.-ին COVID-19 համավարակով պայմանավորված սահմանափակումները միևնույն ազդեցությունն են ունեցել մսի բոլոր տեսակների սպառման վրա: Միաժամանակ, կարող ենք վկայել, որ 2020 թ.-ին տավարի և խոզի մսի սպառման ծավալները գրեթե համընկնում են 2019 թ.-ի ցուցանիշներին (2020 թ.-ին առկա է աննշան անկում), ուստի վերջինով չի կարող պայմանավորված լինել մսի այս երկու տեսակների սպառման ծավալների անկումը: Մեկ շնչի հաշվով՝ տավարի մսի սպառումն աշխարհում սկսել է նվազել դեռևս 2000-ականների կեսերին (առավելագույն սպառում արձանագրվել է 2006 թ.-ին՝ 6.88 կգ), իսկ խոզի մսինը՝ դեռևս 2017 թ.-ին (առավելագույն սպառում գրանցվել է 2016 թ.-ին՝ 12.62 կգ): Ավելին, ամբողջ աշխարհում COVID-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների հետևանքով անգամ 2020 թ.-ին, 2019 թ.-ի համեմատ, մսի բոլոր տեսակներից միայն թոչնամանի պարագայում է սպառման աճ արձանագրվել. մեկ շնչի հաշվով մսի մյուս բոլոր տեսակների սպառումը նվազել է: Այսինքն՝ կարող ենք ասել, որ դիտարկվող ժամա-

⁶ https://stats.oecd.org/viewhtml.aspx?datasetcode=HIGH_AGLINK_2021&lang=en#

նակահատվածում բնակչության մեկ շնչի հաշվով մսի սպառման ծավալների 59.5% աճի շուրջ կեսն ապահովվել է թռչնամսի սպառման հաշվին:

Ինչպես արդեն նշել ենք, մեկ շնչի հաշվով մսի սպառման ծավալներն ըստ երկրի զարգացման մակարդակի զգալիորեն տարբերվում են: Այսպես՝ զարգացած երկրներում մսի սպառման միջին ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով 2020 թ.-ին շուրջ 2.6 անգամ գերազանցում է զարգացող երկրների համանուն ցուցանիշը: Իսկ դիտարկվող՝ 1990-2020 թթ. ընդգրկող ժամանակահատվածի որոշակի տարիներին այդ տարբերությունը կազմել է գրեթե 4 անգամ:



Գծապատկեր 1.1.4

Զարգացած և զարգացող երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով մսի սպառումը⁷ (կգ)


Դիտարկվող 30 տարում զարգացող երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով մսի սպառումը գրեթե կրկնապատկվել է՝ կազմելով 99.4%, որն ամենաբարձր ցուցանիշն է մյուս խմբի երկրների համեմատ: Այսպես՝ զարգացած երկրներում մեկ շնչի հաշվով մսի սպառման աճը կազմել է 35.3%, ՏՀԶԿ (OECD) անդամ երկրներում՝ 35.5%, համաշխարհային միջինի աճը՝ 59.4%, այդուհանդերձ, զարգացած և զարգացող երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով մսի սպառման ծավալների միջև խզումը չափազանց մեծ է՝ միջինում 3 անգամ: 2020 թ.-ին զարգացած երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով մսի տարեկան սպառումը կազմել է 68.6 կգ: Գրեթե նույնքան է սպառումը նաև ՏՀԶԿ անդամ երկրներում՝ 69.3, իսկ զարգացող երկրներում այս ցուցանիշի միջին արժեքը կազմել է 26.2 կգ: Արդյունքում բնակչության մեկ շնչի հաշվով մսի համաշխարհային միջին սպառումը տարեկան կազմել է 34.0 կգ:

Մսի սպառման ծավալների միջև էական խզում նկատելի է նաև ըստ առանձին երկրների: Այսպես՝ ԱՄՆ-ում մեկ շնչի հաշվով տարեկան սպառվում է 95 կգ միս, Չինաստանում՝ 50 կգ, իսկ Հնդկաստանում՝ 2.9 կգ: Հայաս-

⁷ Աղբյուրը՝ OECD-FAO Agricultural Outlook 2016-2025.

տանում այս ցուցանիշը 19.7 կգ է: Տարբերությունները պայմանավորված են մի շարք գործոններով՝ եկամուտների մակարդակ, սովորույթներ, ավանդույթներ, որոշ երկրներում՝ կլիմայական պայմաններ (օրինակ՝ Բրազիլիայում)⁸:

Ինչ վերաբերում է բնակչության մեկ շնչի հաշվով թոչնամսի սպառմանը, ապա պետք է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում մսի համաշխարհային սպառման ծավալներում թոչնամսի սպառման մասնաբաժինն աճի ամենաբարձր տեմպն ունի բոլոր երկրներում: Այսպես՝ զարգացող երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով սպառման աճի տեմպը (5.2%) ավելի բարձր է, քան զարգացած երկրներում (3.3%), ինչի արդյունքում միջին խզումը (տարբերությունը) այդ երկրների խմբերի միջև ավելի փոքր է մսի բոլոր տեսակների և ընդամենը մսի սպառման համեմատ: Բացի դրանից, զարգացած երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով թոչնամսի սպառման ծավալների աճի տեմպը շուրջ 3 անգամ ավելի բարձր է մսի բոլոր տեսակների գումարային սպառման ծավալների աճի տեմպից: Այդ պատճառով այդ երկրներում մեկ շնչի հաշվով թոչնամսի սպառման ծավալների միջև խզումը փոքրացել է՝ 1990 թ. 2.6 անգամից 2020 թ.-ին հասնելով մոտ 2 անգամի:




Գծապատկեր 1.1.5

Բնակչության մեկ շնչի հաշվով թոչնամսի սպառման շարժընթացը զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում (կգ/տարի)

Այսպես՝ զարգացած երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով թոչնամսի սպառումը դիտարկվող ժամանակահատվածում աճել է 2.5 անգամ, իսկ մսի ընդհանուր սպառումը՝ 35.5%: Նմանապես՝ զարգացող երկրներում բնակչության

⁸ Մշակույթի ազդեցության գնահատականը սպառման ծավալների վրա հետազոտվել է հետևյալ աշխատության մեջ՝ Swatland, H.J., 2010, Meat Products and Consumption Culture in the West, Meat Science, 86, p. 80-85, http://ssu.ac.ir/cms/fileadmin/user_upload/Mtahghighat/tfood/ARTICLES/meat/Meat_products_and_consumption_culture_in_the_East.pdf

չություն մեկ շնչի հաշվով թոչնամսի սպառումն անել է 4.3 անգամ այն դեպքում, երբ տվյալ ցուցանիշի համաշխարհային միջինն ավելացել է 3.2 անգամ:



Գծապատկեր 1.1.6

Բնակչության մեկ շնչի հաշվով թոչնամսի սպառման մասնաբաժինը մսի բոլոր տեսակների ընդհանուր սպառման մեջ, 2020 թ. ⁹ (կգ)


Թոչնամսի սպառման նախապատվությունը մսի այլ տեսակների նկատմամբ հիմք է տալիս կանխատեսելու, որ մսի համաշխարհային սպառման կառուցվածքի փոփոխության վերը նշված միտումը շարունակվելու է նաև առաջիկա տասնամյակում: Համաձայն Գյուղատնտեսության և պարենի համաշխարհային կազմակերպության (FAO) 2016 թ.-ի կանխատեսման՝ թոչնամսի համաշխարհային արտադրության և սպառման ծավալների աճի տեմպերը պետք է հանգեցնեն նրան, որ 2030 թ. աշխարհում մսի արտադրության և իրացման ծավալներում թոչնի միսը կազմեր սպիտակուցի պարունակությամբ մսի ընդհանուր ծավալի 40%-ն այն դեպքում, երբ տավարի միսը պետք է կազմեր 20%, խոզի միսը՝ 34%, իսկ ոչխարի միսը՝ 5%: Սակայն, արդեն 2020 թ.-ին թոչնի միսն ապահովում է մսի համաշխարհային արտադրության 40.7%-ը, խոզի միսը՝ 33.0%-ը, տավարի միսը՝ 21.5%-ը և ոչխարի միսը՝ 4.9%-ը: Այսինքն՝ միայն վերջին 5 տարում թոչնամսի արտադրության ոլորտը դրսևորել է «հարձակողական» աճի բավական բարձր տեմպ, ինչը, անշուշտ, շարունակվելու է նաև ապագայում:

⁹ Աղբյուրը՝ OECD-FAO Agricultural Outlook 2016-2025.

1.2

ՀՀ թոչնամսի շուկայի զարգացման միտումները

Թոչնամսի միջազգային շուկայում նկատվող հիմնական միտումները գրեթե նույնությամբ դրսևորվում են նաև հայաստանյան շուկայում: Վերջին 15 տարվա ընթացքում Հայաստանում թոչնամսի, մասնավորապես՝ հավի մսի պահանջարկը շարունակաբար աճում է՝ կազմելով 55-57 հազ. տոննա, որից, սակայն, միայն 20-25%-ն է ապահովվում տեղական արտադրության հաշվին: Այսպես՝ մսի դիտարկված 4 տեսակից, միասին վերցրած, Հայաստանում արտադրվում է միջինում 100-110 հազ. տոննա:





Գծապատկեր 1.2.1

Մսի առանձին տեսակների արտադրությունը ՀՀ-ում 2005-2020 թթ.¹⁰ (հազ. տոննա)

Ինչպես տեսնում ենք, դիտարկվող ժամանակահատվածում հանրապետությունում մսի արտադրության ծավալները գրեթե կրկնապատկվել են (աճը՝ 92%), այդ թվում՝ տավարի մսի արտադրությունն աճել է 99.4%-ով, խոզի մսինը՝ 67.0%-ով, ոչխարի մսինը՝ 42.1%-ով, իսկ թոչնամսի արտադրությունը՝ շուրջ 2.7 անգամ: Արտադրության ծավալի միջին տարեկան աճն ըստ տեսակների կազմում է՝ տավարի մսի դեպքում՝ 4.9%, խոզի մսի դեպքում՝ 5.7%, ոչխարի մսի դեպքում՝ 2.6% և թոչնամսի դեպքում՝ 7.9%:

Մսի առանձին տեսակների արտադրության ծավալների և ընդհանուրի մեջ վերջիններիս ունեցած մասնաբաժինների առումով, ՀՀ-ում առաջատարը տավարի միսն է: Ընդ որում, դիտարկվող ժամանակահատվածում զգալի կառուցվածքային տեղաշարժեր չեն գրանցվել:


¹⁰ Ցուցանիշները հաշվարկել են հեղինակները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՄՍՍՍ) հրապարակած, մասնավորապես՝ ArmStatBank-ի տվյալների բազայի հիման վրա: Պարենային ապահովություն: ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:



Գծապատկեր 1.2.2

ՀՀ-ում մսի առանձին տեսակների արտադրության մասնաբաժինն ընդհանուրում¹¹

Ինչպես նկատելի է, դիտարկվող 15 տարվա ընթացքում խոզի և ոչխարի մսի արտադրության մասնաբաժինները նվազել են, իսկ տավարի մսինը և թռչնամսինը՝ աճել: Սակայն, ըստ արտադրության ծավալների, մսի առանձին տեսակների նախապատվության և սպառողների վարքագծային փոփոխությունների վերաբերյալ պատկերացումները մասնակի են, իսկ ինքնաբավության մակարդակը՝ չավագանց տարբեր. մսի որոշ տեսակների սպառման ծավալների մի զգալի մասն սպահովվում է ներմուծման հաշվին: Ուստի, այս առումով, անհրաժեշտ է դիտարկել մսի սպառման ծավալներն ու ինքնաբավությունը:



Գծապատկեր 1.2.3


Մսի տեսակների ինքնաբավությունը ՀՀ-ում, 2005-2020 թթ. ¹²
(լրոկոս)

¹¹ Ցուցանիշները հաշվարկել են հեղինակները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՍՍ) հրապարակած, մասնավորապես՝ [ArmStatBank](#)-ի տվյալների բազայի հիման վրա: **Պարենային սպահովություն:** ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:

¹² Նույն տեղում:

Այսպես՝ եթե ոչխարի մսի ինքնաբավությունը 2005-2013 թթ.-ի ընթացքում կազմել է 100%, իսկ դրանից հետո էլ ավելի է բարձրացել, և Հայաստանը սկսել է նաև արտահանել, ապա թոչնամսի դեպքում ինքնաբավությունը ամենացածրն է և դիտարկվող ժամանակահատվածում կազմել է միջինում 20%:

Սպառման ծավալների առումով նույնպես, դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում առկա է զգալի աճ մսի բոլոր տեսակների մասով: Եթե 2005 թ.-ին մսի բոլոր տեսակների սպառումը կազմել է շուրջ 92.0 հազ. տոննա, ապա 2020 թ.-ին՝ 175.0 հազ. տոննա՝ աճելով մոտ 90%-ով: Սակայն, ի տարբերություն արտադրության ծավալների, երբ կառուցվածքային տեղաշարժերն էական չեն, մսի սպառման ծավալների աճի տեմպերն ու դրանցով պայմանավորված՝ կառուցվածքային տեղաշարժերը զգալի են:





Գծապատկեր 1.2.4

Մսի սպառման ծավալների շարժընթացը ՀՀ-ում¹³
(հազ. տոննա)

Դիտարկվող ժամանակահատվածում բացարձակ մեծությամբ սպառման ծավալների աճը զգալի է մսի բոլոր տեսակների պարագայում: Սակայն, աճի ամենաբարձր տեմպն արձանագրվել է թոչնամսի սպառման ոլորտում (դիտարկվող 15 տարվա ընթացքում՝ 2.2 անգամ): Տավարի մսի սպառումն աճել է 75.9%-ով, ոչխարի մսինը՝ 41%-ով, խոզի մսինը՝ 2.1 անգամ (թեև վերջինիս աճը չափազանց տատանողական բնույթ է ունեցել): Արդյունքում, թոչնամսի սպառումը շուրջ 2 անգամ գերազանցում է տավարի և խոզի մսի և մոտ 5 անգամ՝ ոչխարի մսի սպառման աճի միջին տեմպերը:

¹³ Ցուցանիշները հաշվարկել են հեղինակները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՄՏՍՍ) հրապարակած, մասնավորապես՝ [ArmStatBank](#)-ի տվյալների բազայի հիման վրա: [Պարենային ապահովություն](#): ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:




Գծապատկեր 1.2.5 | Մսի սպառման կառուցվածքը ՀՀ-ում¹⁴

Որպես հետևանք՝ ՀՀ-ում մսի սպառման կառուցվածքը 2005-2020 թթ.-ին էականորեն փոխվել է. մոտ 4 տոկոսային կետով նվազել է տավարի և 2 տոկոսային կետով՝ ոչխարի մսի սպառումը, փոխարենը՝ մեծացել է թռչնամսի սպառման մասնաբաժինը:

ՀՀ-ում մեկ շնչի հաշվով սպառման ծավալների փոփոխության շարժընթացն ավելի համահունչ է մսի համաշխարհային սպառման փոփոխություններին: Հայաստանը, ըստ ՏՀԶԿ դասակարգման, համարվում է զարգացող կամ եկամտունների միջին մակարդակ ունեցող երկիր: Այստեղ բնակչության մեկ շնչի հաշվով մսի սպառման ծավալները դիտարկվող՝ 2005-2020 թթ.-ն ընդգրկող ժամանակահատվածում աչքի են ընկել աճի բավական տպավորիչ ցուցանիշներով: Եթե 2005 թ. բնակչության մեկ շնչի հաշվով մսի ընդհանուր տարեկան սպառումն ավելի քան 2 անգամ ցածր էր զարգացած երկրների միջին սպառման մակարդակից և համընկնում էր նշված ցուցանիշի համաշխարհային միջին մեծությանը՝ կազմելով մոտ 30 կգ, ապա արդեն 2020 թ.-ին ՀՀ-ն այս ցուցանիշով ընդհուպ մոտեցել է զարգացած երկրների միջին ցուցանիշին:

ՀՀ-ում մսի արտադրության և սպառման ծավալների տարբերությունն ապահովվել է ներմուծման հաշվին, քանի որ ՀՀ-ից մսի արտահանում չի իրականացվել, բացառությամբ՝ ոչխարի մսի: Ակնհայտ է, որ ներմուծման ծավալներով մսի տեսակներից առաջատարը թռչնամիսն է:


¹⁴ Գուցանիշները հաշվարկել են հեղինակները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՄՍՍՍ) հրապարակած, մասնավորապես՝ ArmStatBank-ի տվյալների բազայի հիման վրա: [Պարենային ապահովություն](#): ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:



Գծապատկեր 1.2.6

Մսի առանձին տեսակների սպառումը ՀՀ-ում՝ բնակչության մեկ շնչի հաշվով¹⁵

2005-2020 թթ. ՀՀ-ում թոշնամսի ամբողջական առաջարկի մեջ ներմուծման մասնաբաժինը մշտապես գերազանցել է ներքին արտադրությունը (միջինում՝ 4.4 անգամ): Ներմուծում/արտադրություն հարաբերակցության ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2006 թ.-ին՝ 2.1, իսկ ամենաբարձրը՝ 2011 թ.-ին՝ 7.2: Արդեն 2020 թ.-ին ներմուծման ծավալները գերազանցել են արտադրության ծավալները ավելի քան 3.5 անգամ: Արդյունքում, ներմուծումն ապահովել է թոշնամսի ամբողջական առաջարկի (57.9 հազ. տոննա) ընդամենը 77.5%-ը¹⁶:



Գծապատկեր 1.2.7

Թոշնամսի արտադրության, ներմուծման, ամբողջական առաջարկի ծավալները և ինքնաբավության մակարդակը ՀՀ-ում, 2005-2020 թթ.¹⁷

¹⁵ Գծապատկերը կազմված է ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՏՍՍ) հրապարակած, մասնավորապես՝ [ArmStatBank](#)-ի տվյալների բազայի հիման վրա: [Պարենային ապահովություն](#): ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:

¹⁶ Ցուցանիշը հաշվարկել են հեղինակներն ըստ գծապատկեր 2-ի տվյալների:

¹⁷ Գծապատկերը կազմված է ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՏՍՍ) հրապարակած, մասնավորապես՝ [ArmStatBank](#)-ի տվյալների բազայի հիման վրա: [Պարենային ապահովություն](#): ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:

Ինչպես տեսնում ենք, դիտարկվող ժամանակաշրջանում թոչնամսի արտադրության ծավալները դրսևորել են կայուն աճի միտում (միջին տարեկան աճի տեմպը՝ 8.3%) և ըստ տարիների կտրուկ տատանումներ չեն ունեցել, բացառությամբ 2009 թ., երբ նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են ավելի քան 30 տոկոսով՝ պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամով: Թեև ներմուծման ծավալները դրսևորել են ընդգծված տատանողական վարքագիծ, այդուհանդերձ, մսի մյուս տեսակների համեմատ, թոչնամսի սպառման ծավալների աճի բարձր տեմպը նույնպես ակնհայտ է: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ առնվազն առաջիկա տասնամյակում Հայաստանում ևս, ինչպես ամբողջ աշխարհում, թոչնամսի սպառման նախապատվությունը հանգեցնելու է դրա նկատմամբ պահանջարկին, որն էլ, իր հերթին, կարող է հանգեցնել, ինչպես ներմուծման, այնպես էլ տեղական արտադրության ծավալների աճին: Այս տեսանկյունից, չափազանց կարևորվում են շուկայական իրադրության ուսումնասիրությունն ու առկա մրցակցային վիճակի գնահատումը՝ ոլորտի զարգացման նախադրյալների տեսանկյունից:

Որպես կանոն, թոչնամսիսը ՀՀ ներմուծվում է սառեցված կամ պաղեցված, իսկ տեղական արտադրության թոչնամսին իրացվում է հիմնականում թարմ, մասնակի՝ նաև պաղեցված վիճակում: Ակնհայտ է, որ հայաստանյան թոչնամսի շուկան միատարր չէ և հանդես է գալիս ըստ տարբեր արտադրատեսակների՝ ներմուծված և տեղական արտադրության, թարմ, պաղեցրած և սառեցված, ամբողջական հավի և դրա առանձին մասերի տեսքով: Ուստի ապրանքային շուկայի հատկորոշման անհրաժեշտություն է առաջանում՝ պարզելու՝ արդյոք այս բոլոր ապրանքատեսակները ներառված են միևնույն ապրանքային շուկայում, փոխադարձ փոխարինելի են, իսկ դրանց արտադրող կամ ներմուծող սուբյեկտները՝ միմյանց մրցակից: Հետազոտության հաջորդ հատվածում կատարվել է թոչնամսի ապրանքային շուկայի հատկորոշում:

**ՀՀ ԹՌԶՆԱՄՍԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ
ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄԸ**

**2.1 Ապրանքային շուկայի հատկորոշման
նպատակը**

Առանձին ոլորտային ուսումնասիրությունների դեպքում, հատկապես դրանց շրջանակում մրցակցային միջավայրի գնահատման առումով, անհրաժեշտ նախապայման է համապատասխան ապրանքային շուկայի(ների) հատկորոշումը:

Ապրանքային շուկայի հատկորոշումը թույլ է տալիս հստակեցնել և նույնականացնել ոլորտային ուսումնասիրության շրջանակը, ինչի արդյունքում հնարավոր է դառնում առավել արդյունավետ և ճշգրիտ կերպով գնահատել մրցակցային միջավայրը, իսկ անհրաժեշտության դեպքում թիրախային միջամտություն իրականացնել հավանական հակամրցակցային գործընթացները կանխելու նպատակով: Օրինակ՝ տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինները և շուկայի ընդհանուր ծավալները հաշվարկվում են ապրանքային շուկայի հատկորոշումից հետո, մրցակցության պաշտպանության օրենսդրության մի շարք կարգավորումներ վերաբերում են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներին, իսկ գերիշխող դիրքի առկայությունը կամ բացակայությունը հնարավոր է որոշել միայն ապրանքային շուկայի հատկորոշումից հետո: Տնտեսվարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցության օրենսդրության խախտման դեպքում դրա ազդեցությունը կամ այդպիսի ազդեցության բացակայությունը նույնպես անհրաժեշտ է գնահատել արդեն իսկ հատկորոշված ապրանքային շուկայի սահմաններում: Հետևաբար՝ ապրանքային շուկայի հատկորոշումը կարևոր գործընթաց է տնտեսական մրցակցության պաշտպանության տեսանկյունից՝ շուկայական գործընթացների, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների վարքագծի դրսևորումների վերաբերյալ ճշգրիտ պատկեր ստանալու և որոշումներ ընդունելու համար:

Ի հավելումս վերոգրյալի՝ նշենք, որ ճիշտ հատկորոշված ապրանքային շուկան հաճախ թույլ է տալիս գործընթացի հենց սկզբնական փուլում բացահայտել տնտեսական մրցակցության օրենսդրության խախտման կամ դրա բացակայության դեպքերը:

Ոլորտային ուսումնասիրությունների շրջանակում ապրանքային շուկայի հատկորոշումն ինքնին վերջնանպատակ չէ, սակայն ուսումնասիրության հաջողությունը կանխորոշող առանցքային ուղենիշներից է:

Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության տեսանկյունից, ապրանքային շուկան որոշակի տարածքում ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտն է, որի սահմանները որոշվում են համապատասխան տարածքում այդ ապրանքի ձեռքբերման, իրացման կամ արտադրման, տնտեսական կամ այլ հնարավորություններով կամ նպատակահարմարությամբ և դրա սահմաններից դուրս այդպիսի հնարավորությունների կամ նպատակահարմարության բացակայությամբ:

Ապրանքային շուկայի հատկորոշումը կատարվում է՝ սահմանելով դրա անբաժանելի բնութագրիչները, մասնավորապես՝

- ապրանքատեսակային սահմանը,
- աշխարհագրական սահմանը,
- դիտարկվող ժամանակահատվածը,
- տնտեսվարող սուբյեկտների կազմը,
- ապրանքային շուկայի ծավալը:

Ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման. տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների ամբողջությունն է:

Ապրանքային շուկայի աշխարհագրական սահման. որոշակի աշխարհագրական տարածք է (այդ թվում՝ ճանապարհ, օդային, ջրային, ցամաքային և այլ երթուղի), որի շրջանակում տնտեսապես հնարավոր կամ նպատակահարմար է ձեռք բերել, իրացնել կամ արտադրել տվյալ ապրանքը և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքները, և առկա չէ այդ հնարավորությունը կամ նպատակահարմարությունը տվյալ տարածքից դուրս:

Ապրանքային շուկայի սուբյեկտներ. տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների արտադրողները, իրացնողներն ու ձեռքբերողներն են:

Ապրանքային շուկայի ծավալ. ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանում տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացման կամ ձեռքբերման ընդհանուր ծավալն է՝ բնեղեն և (կամ) արժեքային արտահայտությամբ:


Վերոգրյալ հասկացությունների համակարգային դիտարկման արդյունքում կարելի է վկայել, որ, բովանդակային տեսանկյունից, ապրանքային շուկան շուկայական մի շարք բնութագրիչների ամբողջություն է, ինչը հնարավորություն է տալիս առավելագույնս հստակեցնելու դիտարկվող ոլորտի շրջանակը՝ ստանալով հետևյալ հարցերի պատասխանները. ո՞ր ապրանքախումբն է դիտարկվել որպես ապրանքային շուկա և ինչո՞ւ, ի՞նչ ապրանքատեսակներ են ներառված ապրանքախմբում և ինչո՞ւ, ո՞ր աշխարհագրական տարածքում են շրջանառվում այդ ապրանքատեսակները, ովքե՞ր են այդ ապրանքատեսակներն արտադրող, իրացնող տնտեսվարող սուբյեկտները, դրանք ձեռքբերողները, և որքա՞ն է այդ ապրանքախմբի իրացման կամ ձեռքբերման ծավալը:

2.2

«Հավի միս» ապրանքային շուկայի ընտրությունը

Ինչպես վերը նշեցինք, վերջին տարիներին ամբողջ աշխարհում «Միս» ապրանքային խմբի սպառման կառուցվածքն էականորեն փոփոխվել է՝ առավելապես թռչնամսի մասնաբաժնի ավելացման ուղղությամբ:

Թռչնամսի բազմաթիվ տեսակներից արտադրության և սպառման ավելի մեծ ծավալներ ապահովում է հենց հավի միսը՝ որպես սպիտակ, համեղ, ցածր կալորիականությամբ, սննդարար, ինչպես նաև էժան ու հասանելի մթերք: Բացի դրանից, հավի միսն ունի բազմաթիվ օգտակար հատկություններ, որոնցից հիմնականը սպիտակուցի մեծ քանակի պարունակությունն է: Հավի միսը դյուրամարս է, ապահովում է նորմալ նյութափոխանակություն, բարենպաստ ազդեցություն է ունենում կենտրոնական նյարդային համակարգի աշխատանքի վրա: Ներկայացված հատկանիշների ամբողջությունը հավի մսին, որպես ապրանք, տալիս է այնպիսի առանձնահատկություններ, որոնք վերջինս, սպառողական տեսանկյունից, տարանջատում են ինչպես մսի, այնպես էլ թռչնամսի այլ տեսակներից: Ասվածը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ թռչնամսի համաշխարհային արտադրության շուրջ 90%-ը բաժին է ընկնում հենց հավի մսին (տե՛ս գծապատկեր 2.2.1):



Գծապատկեր 2.2.1

Թռչնամսի առանձին տեսակների համաշխարհային արտադրության ծավալները 2015-2019 թթ.¹⁸ (կգ)

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ մսի բոլոր տեսակներից թռչնամիսը, իսկ թռչնամսի տեսակներից՝ հավի միսն ամենատարածված և ամենալայն սպառում ունեցող արտադրանքն է, որի սպառման ծավալների աճն ինչպես աշխարհում, այնպես էլ առանձին երկրներում պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնք կարելի է խմբավորել տնտեսական, սննդային, մշակութային, բնապահպանական և այլ խմբերում:

¹⁸ Աղբյուրը՝ <http://www.fao.org/faostat/ru/#compare>

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն ուսումնասիրության շրջանակում դիտարկվել է «Հավի միս» ապրանքային շուկան:

2.3

ՀՀ «Հավի միս» ապրանքային շուկայի ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները, տնտեսվարող սուբյեկտների կազմը և ծավալները

Հավի միսն իրացվում է տարբեր ձևերով, մասնավորապես՝ ամբողջական կամ մասնատված, թարմ կամ սառեցված, ինչ-ինչ եղանակներով վերամշակված, բազմազան որակական հատկանիշներով և այլն: Ուստի այս դեպքում օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջանում պարզելու՝ արդյո՞ք հավի մսի այս բոլոր տեսակները, սպառողական տեսանկյունից, փոխարինելի են միմյանցով, և արդյո՞ք դրանք գտնվում են միևնույն ապրանքային շուկայում: Նշված հարցադրումների պատասխանները հնարավոր է ստանալ ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանների որոշման գործընթացի շրջանակում:

Ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանների որոշումը հիմնված է ձեռքբերողների տեսանկյունից ապրանքների փոխադարձ փոխարինելիության վրա: Ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանի որոշման համար ընտրվում է ուսումնասիրվող ապրանքը, բացահայտվում են դրա սպառողական հատկությունները (գործածության նշանակությունը, կիրառման, որակական, տեխնիկական, գնային կամ այլ հատկանիշները), որոնք հաշվի են առնվում ապրանքների փոխադարձ փոխարինելիությունը դիտարկելիս:

Ըստ վերոգրյալ հատկությունների՝ ապրանքները համարվում են փոխադարձ փոխարինելի, եթե մեկ ապրանքի գնի փոքր, բայց ոչ ժամանակավոր աճը կարող է սպառողներին ստիպել փոխարինել դա մեկ այլ ապրանքով:

Ապրանքների փոխադարձ փոխարինելիությունը դիտարկվում է այնքան ժամանակ, մինչև որ հնարավոր է գալ եզրակացության, որ դիտարկվող բոլոր ապրանքների գների համատեղ, փոքր, բայց ոչ ժամանակավոր աճը չի կարող հանգեցնել վերջիններիս փոխարինմանն այնպիսի ապրանքներով, որոնք չեն դիտարկվում որպես համապատասխան ապրանքային շուկայի մաս:

Այնուհանդերձ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ սպառողների վարքագծի վրա հաճախ կարող են ազդել նաև կողմնակի գործոններ (նախասիրություններ, սովորույթներ, ավանդույթներ, համոզմունքներ և այլն):

Վերոնշյալի համատեքստում՝ հավի մսի տարբեր տեսակների փոխադարձ փոխարինելիությունը պարզելու նպատակով հարկավոր է առավել մանրամասն անդրադառնալ դրանցից յուրաքանչյուրի հատկանիշներին և առանձնահատկություններին:

Հավի մսի շրջանառության ոլորտային կարգավորում նախատեսող միասնական տեխնիկական կանոնակարգ դեռևս մշակված չէ: Հայաստանի Հանրապետության տարածքում հավի մսի շրջանառությունը կազմակերպվում է սննդամթերքի անվտանգությանը ներկայացվող ընդհանուր պահանջներին համապատասխան և Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N880 որոշմամբ հաստատված «Մսնդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) և Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 881 որոշմամբ հաստատված «Մսնդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011) տեխնիկական կանոնակարգերի հիման վրա: Փաստորեն, հավի մսի տեխնիկական կանոնակարգերի բացակայությունը և ստանդարտներին համապատասխանելու ոչ պարտադիր լինելը հնարավոր են դարձնում դրա շրջանառությունը նաև այն դեպքում, երբ պահպանվել են միայն վերոնշյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջները:

Այնուհանդերձ, Ստանդարտացման և չափազիտության ազգային մարմնի պաշտոնական կայքէջում¹⁹ առկա տեղեկության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է ԳՕՍՍ 31962-2013 «Հավի միս (հավի, ճուրղայրների մսեղիք և դրանց մասեր): Տեխնիկական պայմաններ» ստանդարտը, որի կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է «Մսնդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջների պահպանումը: Միաժամանակ, այս ստանդարտում առկա են դրույթներ հավի մսի տեսակների, պահպանման ժամկետների, տեղափոխման, փաթեթավորման, մակնշման և այլ հարցերի վերաբերյալ:

Իսկ ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի «Առանձին ապրանքների, այդ թվում՝ օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների արտադրության, շրջանառության ֆիզիկական ծավալների, իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հաշվետվությունները հարկային մարմին ներկայացնելու կարգը և այդ ապրանքների ցանկերը սահմանելու մասին» N802-Ն որոշման (այսուհետ՝ ԹԻՎ 802 որոշում) 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված է այն ապրանքների ցանկը, որոնց արտադրության, շրջանառության ֆիզիկական ծավալների և գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հարկ վճարողները հաշվետվություններ են ներկայացնում հարկային մարմին՝ համաձայն N2 հավելվածի (այսուհետ՝ Հավելված 2):

¹⁹ <https://www.sarm.am/>

Հավելված 2-ում սահմանված ցանկում ընդգրկված արտադրանքի դասակարգմամբ, ըստ գործունեության տեսակների, ՀՀ դասակարգչի (ԱԴԳՏ) 10.12.10, 10.12.20 և 10.12.40 ծածկագրերին դասվող ապրանքները բնութագրվում են որպես.

ԱԴԳՏ 10.12.10 - միս՝ ընտանի թռչունների՝ թարմ կամ պաղեցրած,

ԱԴԳՏ 10.12.20 - միս՝ ընտանի թռչունների՝ սառեցրած,

ԱԴԳՏ 10.12.40 - ենթամթերք՝ ընտանի թռչունների, սննդային:

Ըստ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային միասնական անվանացանկի՝ ներմուծվող թռչնամիսը (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) դասվում է 0207 ապրանքային խմբին:

Առանձնացված են հետևյալ ծածկագրերը.

Հավ՝ ԱՏԳ ԱԱ 020711 – չմասնատված թարմ կամ պաղեցրած,

020712 – չմասնատված սառեցրած,

020713 – մսեղիքի մասեր՝ թարմ կամ պաղեցրած,

020714 – մսեղիքի մասեր և ենթամթերք՝ սառեցրած:

Հնդկահավ՝ 020724, 020725, 020726, 020727:

Բադ՝ 020741, 020742, 020743, 020744, 020745:

Սազ՝ 020751, 020752, 020753, 020754, 020755:

Խայտահավ՝ 020760:

Հավի մսի որոշ տեսակներ հիմնականում տարանջատվում են ըստ ջերմային հատկանիշների և մասնատվածության:

Դիտարկենք հավի մսի և դրա որոշակի տեսակների տեխնիկատեխնոլոգիական, մանրէաբանական, որակական և այլ հատկանիշներն ու առանձնահատկությունները:

Արտադրողականությունից կախված՝ հավերը դասակարգվում են որպես.

- Մսատու (կորնուական, բրամա, լոհման), որոնք ունեն ծանր քաշ, արագ աճ և վաղ հասունություն: Այս առումով, առանձնահատուկ են բրոյլեր մսատու ցեղատեսակի հավերը, որոնք 60 օրական հասակում ունենում են մինչև 1.6 կգ քաշ, իսկ միսը պարունակում է մոտ 20% սպիտակուց և 5.2-12.3% ճարպ:
- Չվատու (ռուսական սպիտակամորթներ, նյու հեմփշիր, լեգորնս, պոլտավա, մոսկովյան սպիտակ), որոնք 1 տարում ունենում են 220-260 ձու արտադրողականություն:
- Ընդհանուր օգտագործման (զագորսկ, պլիմուտրոկ, լիվենս, մոսկովյան սև), որոնք չափերով և քաշով ձվատուներից ավելի մեծ են, բայց ունեն ավելի ցածր ձվատվություն:

Ըստ տարիքային չափանիշի՝ հավերը լինում են երիտասարդ և մեծահասակ: Երիտասարդ հավերի կրծքավանդակն աճառային է, իսկ կտուցը՝ ավելի նորր: Մեծահասակ հավերն ունեն կոշտացած կտուց, իսկ կրծքավանդակը կարծր ոսկրացած է:


Տեխնոլոգիական վերամշակման տեսանկյունից, հավի միսը վաճառվում է ամբողջական կամ մասնատված (բացառությամբ ճտերի)՝ կես հավ, առջևի և հետևի քառորդներ, կրծքամիս, ոտքեր, թևեր, սրունքներ և ազդրեր: Հարկ է նշել, որ հավի միսը վաճառվում է ինչպես փորոտված վիճակում, այնպես էլ վերամշակված փորոտիքի և պարանոցի հետ միասին:

Կախված մկանների խորքում ջերմային տարբերություններից՝ տարանջատվում են հավի թարմ, պաղեցված, սառեցված և խոր սառեցված տեսակները: Մասնավորապես՝ թարմ է համարվում այն միսը, որի մկանների խորքում ոչ ավելի, քան $+25^{\circ}\text{C}$ ջերմաստիճան է, պաղեցված՝ -2°C -ից $+4^{\circ}\text{C}$: Միսը սառեցված է, երբ մկանների խորքում ջերմաստիճանը բարձր չէ -12°C -ից, իսկ խոր սառեցվածի պարագայում այդ ցուցանիշը բարձր չէ -18°C -ից:

Որակական (յուղայնություն և վերամշակում) տեսանկյունից, տարանջատվում են հավի մսի 1-ին և 2-րդ կարգերը: Դրանք միմյանցից տարբերվում են մանրէաբանական (միկրոկենսաբանական) որոշ ցուցանիշներով և վերամշակման եղանակներով: Մասնավորապես՝ 1-ին կարգի հավի 100 գրամ մսի պարագայում սպիտակուցների նվազագույն քանակը պետք է կազմի 17 գրամ, ճարպերի նվազագույն քանակը՝ 20 գրամ, իսկ էներգետիկական արժեքը՝ 250 կկալ: 2-րդ կարգի հավի մսի դեպքում նույն ցուցանիշները համապատասխանաբար պետք է լինեն՝ 19 գրամ, 11 գրամ և 175 կկալ: Հավի մսի՝ առաջին կամ երկրորդ կարգին պատկանելությունը կախված է նաև վերամշակման եղանակից: Այն դեպքում, երբ, ըստ միկրոկենսաբանական և որակական ցուցանիշների, հավի միսը համապատասխանում է 1-ին կարգին, իսկ վերամշակման եղանակով՝ 2-րդին, ապա դա դասակարգվում է որպես երկրորդ կարգի:

Կախված հավի մսի մկանների խորքում ջերմային տարբերություններից և տեխնոլոգիական վերամշակման տեսակներից՝ նախատեսվում են նաև պահպանման տարբեր պայմաններ և հավի մսի պիտանելիության տարբեր տևողություններ: Օրինակ՝ թարմ մսի պիտանելիության ժամկետը կարող է սահմանվել մինչև 24 ժամ, մինչդեռ սառեցվածինը՝ մի քանի ամիս: Պաղեցված հավի մսի պիտանելիության ժամկետը -2°C -ից մինչև 2°C սառնարանային խցիկի օդի ջերմաստիճանի պարագայում պետք է լինի ոչ ավելի, քան 5 օր, իսկ մասնատված հավի մսի պարագայում՝ ոչ ավելի, քան 2 օր: Սառեցված հավի ամբողջական միսը սառնարանային խցիկում օդի ոչ ավելի, քան -12°C -ի պայմաններում ենթակա է պահպանման մինչև 8 ամիս, խմբային փաթեթում՝ ոչ ավելի, քան 4 ամիս, իսկ մասնատվածը՝ մինչև 1 ամիս: Սառնարանային խցիկում օդի ոչ ավելի, քան -12°C -ի պայմաններում սառեցված հավի ամբողջական միսը ենթակա է պահպանման մինչև 12 ամիս, խմբային փաթեթում՝ ոչ ավելի, քան 8 ամիս, իսկ մասնատվածը՝ մինչև 3 ամիս: Պահպանման վերոնշյալ ժամկետներն ավելի երկար են՝ մինչև 14 ամիս, երբ սառնարանային խցիկում օդի ջերմաստիճանը առնվազն -25°C է:

Միաժամանակ, տարբերվում են նաև թարմ կամ պաղեցված և սառեցված հավի մսերի իրացման գները: Մասնավորապես, համաձայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, թարմ կամ պաղեցված հավի մսի մանրածախ իրացման գինը (ամբողջական հավի դեպքում) 2018, 2019 և 2020 թվականների ընթացքում գերազանցել է սառեցված հավի մսի մանրածախ իրացման գինը, համապատասխանաբար՝ միջինում 11,35, 19,97 և 11,43 տոկոսով:



Գծապատկեր 2.3.1

Թարմ կամ պաղեցված և սառեցված ամբողջական հավի մսի միջին մանրածախ ամսական գները ՀՀ-ում 2018-2020 թթ. (ՀՀ դրամ/կգ)՝ համաձայն ՀՀ ԱՎԿ տվյալների

Կիրառվող մի շարք ստանդարտներ միասնական են թռչնամսի և հավի մսի բոլոր տեսակների համար:

Հաշվի առնելով հավի մսի և դրա տեսակների վերը նշված բոլոր առանձնահատկություններն ու տարբերությունները, այնուհանդերձ, անհրաժեշտ է փաստել, որ կիրառման և օգտագործման նշանակության տեսանկյունից, հավի մսի բոլոր տեսակները հնարավոր է փոխարինել մեկը մյուսով: Մակայն, միաժամանակ, կան որոշ հատկանիշներ, որոնց առումով առկա են էական տարբերություններ (օրինակ՝ իրացման գին, պիտանելիության ժամկետ), որոնք կարող են ազդեցություն ունենալ սպառողների վարքագծի վրա:

Հավի մսի տարբեր տեսակների տարբերությունների ազդեցությունը կամ այդ ազդեցության բացակայությունը սպառողների վարքագծի վրա բացահայտելու նպատակով սույն ուսումնասիրության շրջանակում կիրառվել է նաև «Հիպոթեզային մենաշնորհյալի» թեստը:

Հարկ է նշել, որ այս թեստն ամբողջ աշխարհում մրցակցային մարմինների կողմից ավելի լայնորեն օգտագործվող գործիքներից մեկն է՝ փոխադարձ փոխարինելիությանն առնչվող հարցերը պարզելու համար:

«Հիպոթեզային մենաշնորհյալի» թեստի միջոցով որոշվում է, թե այս կամ այն ապրանքի գնորդներն ինչպես արձագանքում դրա գնի բարձրացմանը: Օրինակ՝ եթե Ա ապրանքի գինը երկարատև (1 տարի և ավելի) բարձրացվում է մոտավորապես 5-ից 10 տոկոսով (ընդ որում, ապրանքի գնի այդ փո-

փոխությունը գների ընդհանուր մակարդակի աճի ազդեցությամբ է), հարցման միջոցով որոշվում է Ա ապրանքի գնորդների արձագանքն այդ երևույթին: Եթե հարցման արդյունքում պարզվում է, որ գնորդների գերակշիռ մասը Ա ապրանքը պատրաստ է փոխարինելու այլ ապրանքներով, ապա տեղի կունենա Ա ապրանքի վաճառքի ծավալների նվազում, ինչի հետևանքով դրա գնի բարձրացումը շահավետ չի լինի: Ուստի այն ապրանքները, որոնց հետ գնորդը պատրաստ է փոխարինելու Ա ապրանքը, հարկավոր է Ա ապրանքի հետ միասին ընդգրկել փոխադարձ փոխարինելի ապրանքների խմբում: Նշված գործընթացն իրականացվում է այնքան ժամանակ, քանի դեռ չի հայտնաբերվել այն ապրանքների խումբը, որի գինը կարող է բարձրացվել՝ առանց «Հիպոթեզային մենաշնորհյալի» համար շահույթի նվազեցման: Նշված խմբում ընդգրկված ապրանքները ճանաչվում են փոխադարձ փոխարինելի: «Հիպոթեզային մենաշնորհյալի» թեստ անցկացնելիս փոխադարձ փոխարինելի ապրանքների խումբ հարկավոր է համարել ապրանքների այն ամենափոքր լրակազմը, որի համար «Հիպոթեզային մենաշնորհյալը» կարող է կատարել գնի բարձրացում՝ առանց իրացման ծավալների նվազեցման և շահույթի կորստի:

Թեստի արդյունքում պարզ է դարձել, որ հարցվածների (սպառողների) գերակշիռ մասը պաղեցված հավի մսի գնի մինչև 10% բարձրացման պարագայում պատրաստ է դա փոխարինել համանման այլ ապրանքով, և հակառակը:

Սպառման տեսանկյունից, առանձին դեպքերում փոխադարձ փոխարինելիության որոշման համար կիրառվում է պահանջարկի խաչաձև առաձգականությունը, ուստի ստացված արդյունքները վերահաստատելու նպատակով ուսումնասիրության շրջանակում գնահատվել է նաև ներմուծված հավի մսի պահանջարկի զգայունության աստիճանն արտադրված հավի մսի գնի փոփոխության նկատմամբ²⁰: Իրականացված հաշվարկները ցույց են տվել, որ ներմուծված հավի մսի պահանջարկը ճկուն է արտադրված հավի մսի գնի փոփոխության նկատմամբ, և արտադրված հավի մսի գնի 1% բարձրացումը միջինում հանգեցնում է ներմուծված հավի մսի պահանջարկի 1,54% բարձրացմանը: Այս դեպքում ևս փոխադարձ փոխարինելիության մասով ստացված արդյունքները վերահաստատվում են:

Փաստորեն, թեև հավի մսի մի քանի տեսակների համեմատության պարագայում առկա են որոշ առանձնահատկություններ և տարբերություններ, այնուհանդերձ, դրանք այնքան էական չեն, որ ազդեցություն ունենան սպառողների մեծամասնության վարքագծի վրա: Այսպիսով՝ հավի առանձին մասերի միջև կարող է լինել ավելի մեծ գնային տարբերություն, սակայն ամբողջական հավի մսի պարագայում դա ավելի փոքր է: Հաշվի առնելով վե-

²⁰ Հաշվարկների ավելի մանրամասն նկարագիրը տե՛ս 5.7 բաժնում:

րոգրյալը՝ «Հավի միս» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման են հանդիսանում հավի մսի բոլոր տեսակները:

Միևնույն մոտեցումն ամրագրված է նաև Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 536-Ա որոշման մեջ, որտեղ ևս միևնույն ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման են ճանաչվել հավի մսի բոլոր տեսակները: Համանման մոտեցում (հավի մսի տեսակները տարաջատված չեն) կիրառել են մի շարք այլ երկրների՝ Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի, Մեքսիկայի, ԵՄ հակամենաշնորհային ծառայությունները՝ հավի մսի ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքների մասին հաշվետվություններում, ինչպես նաև ՏՀԶԿ-ն՝ վերլուծական տարբեր գեկույցների շրջանակում:

Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը որոշվում է՝ հաշվի առնելով որոշակի աշխարհագրական տարածքում գնորդի համար տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների ձեռքբերման տնտեսական կամ այլ հնարավորությունն ու նպատակահարմարությունը և դրա սահմաններից դուրս այդպիսի հնարավորությունների և նպատակահարմարության բացակայությունը: Եթե որևէ ապրանքի գնի փոքր, բայց ոչ ժամանակավոր աճը մի աշխարհագրական տարածքում կարող է ստիպել, որ զգալի թվով գնորդներ գնեն տվյալ ապրանքն այլ աշխարհագրական տարածքում, ապա այդ աշխարհագրական տարածքները դիտարկվում են որպես ապրանքային շուկայի միևնույն աշխարհագրական սահման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում իրացվող հավի միսը ձեռքբերման համար հավասարապես հասանելի է երկրի ողջ տարածքում, և գոյություն չունեն հավի մսի՝ Հայաստանի Հանրապետության մարզեր տեղափոխելու հետ կապված խոչընդոտներ, հետևաբար՝ ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը Հայաստանի Հանրապետության տարածքն է:

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների տվյալների՝ 2018 թ. ընթացքում հավի միս է արտադրել 14 տնտեսվարող սուբյեկտ, իսկ արտադրության ծավալը կազմել է 10,939,557 կգ, ներմուծում է իրականացրել 50 տնտեսվարող սուբյեկտ, իսկ ներմուծման ընդհանուր ծավալը կազմել է 32,783,011 կգ, միաժամանակ, առաջնային շուկայում հավի միս է իրացրել 63 տնտեսվարող սուբյեկտ, իսկ իրացման ընդհանուր ծավալը կազմել է 40,397,642 կգ:

2019 թվականի ընթացքում հավի միս է արտադրել 16 տնտեսվարող սուբյեկտ, իսկ արտադրության ծավալը կազմել է 12,160,181 կգ, ներմուծում է իրականացրել 54 տնտեսվարող սուբյեկտ, իսկ ներմուծման ընդհանուր ծավալը կազմել է 43,370,125 կգ, միաժամանակ, առաջնային շուկայում հավի միս է իրացրել 69 տնտեսվարող սուբյեկտ, իսկ իրացման ընդհանուր ծավալը կազմել է 45,264,936 կգ:

2020 թվականի տվյալները հետևյալն են. հավի միս է արտադրել 19 տնտեսվարող սուբյեկտ, իսկ արտադրության ծավալը կազմել է 12,759,793 կգ, ներմուծում է իրականացրել 52 տնտեսվարող սուբյեկտ, իսկ ներմուծման ընդհանուր ծավալը կազմել է 32,919,746 կգ, միաժամանակ, առաջնային շուկայում հավի միս է իրացրել 70 տնտեսվարող սուբյեկտ, իսկ իրացման ծավալը կազմել է 42,956,514 կգ:

Ներմուծում իրականացրած որոշ տնտեսվարող սուբյեկտներ ներմուծված հավի միսը մասնակի կամ ամբողջությամբ օգտագործում են նաև սեփական կարիքների համար (արտադրական կամ այլ գործընթացներում), ուստի շուկայի ծավալների գնահատման նպատակով դիտարկվում է իրացման ցուցանիշը: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկությունները չեն ներառում տվյալներ գյուղացիական տնտեսություններում արտադրվող անձնական կամ ընտանեկան օգտագործման համար նախատեսված, ինչպես նաև գյուղատնտեսական շուկաներում իրացվող արտադրանքի վերաբերյալ:

Որպես իրացման ծավալների գնահատման հիմք է ընդունվել բնեղեն ցուցանիշը, քանի որ շուկան միատարր է, և իրացման բնեղեն ծավալների չափման միավորը միասնական է շուկայում գործող բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար:

Ապրանքային շուկայի առաջին 3 խոշոր իրացնող ընկերությունների մասնաբաժինները միասին 2018-2020 թթ. ընթացքում կազմել են համապատասխանաբար՝ մոտ 53%, 57% և 49%:

Ապրանքային շուկայում ներառված ապրանքատեսակների ձեռքբերողների կազմը բաժանվում է հետևյալ հիմնական խմբերի.

- խոշոր առևտրային ցանցեր,
- սեփական կարիքների համար ձեռքբերող տնտեսվարող սուբյեկտներ,
- փոքր և միջին իրացման ծավալներ ունեցող առևտրի կետեր,
- վերավաճառք իրականացնող տնտեսվարող սուբյեկտներ,
- վերջնական սպառողներ:

ՀԱՎԻ ՄՍԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Ոլորտի ամբողջական ուսումնասիրության, այդ թվում՝ մրցակցային միջավայրի լիարժեք գնահատման նպատակով կարևոր է դիտարկել ՀՀ-ում թոչնամանի շրջանառությունը կարգավորող օրենսդրական դաշտը, ինչպես նաև այս բնագավառին առնչվող այլ իրավական կարգավորումները, քանի որ երբեմն հենց վերջիններիս անկատարությունը կարող է սահմանափակել ապրանքային շուկայում տեղի ունեցող բնականոն տնտեսական գործընթացները:

Հայաստանի Հանրապետությունում թոչնամանի արտադրության, պահպանման, տեղափոխման, փաթեթավորման, մակնշման, իրացման, ներմուծման և օգտագործման գործընթացներին ներկայացվող պահանջները հիմնականում կանոնակարգվում են Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության) տեխնիկական կանոնակարգերով, որոնց կիրառումը և կատարումը պարտադիր են Մաքսային միության միասնական մաքսային տարածքում, ինչպես նաև ՀՀ օրենքներով, Մաքսային միության հանձնաժողովի, ՀՀ կառավարության, առանձին գերատեսչությունների որոշումներով, հանձնարարականներով և այլ իրավական ակտերով:

3.1

ՀՀ հավի մսի շրջանառության ոլորտը կարգավորող ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը

Ստորև ներկայացված են հավի մսի շրջանառության ընդհանուր պայմաններին առնչվող՝ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված առավել էական կարգավորումները, որոնց համակարգային դիտարկումը թույլ է տալիս հնարավորինս ամբողջական պատկերացում կազմել «Հավի մսի» ապրանքային շուկայի վրա այս կարգավորումների ազդեցության վերաբերյալ.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N880 որոշմամբ հաստատված՝ «Մանդամթերքի անվտանգության մասին Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ»²¹, ըստ որի՝ սահմանվում են.

- կիրառության ոլորտը և տեխնիկական կանոնակարգման օբյեկտները,
- տեխնիկական կանոնակարգման օբյեկտների շուկայում շրջանառության կանոնները,

²¹ www.eurasiancommission.org

- տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման ձևերը և ընթացակարգերը,
- տեխնիկական կանոնակարգման օբյեկտների անվտանգության նորմատիվները (մանրէաբանական և այլն):

Համաձայն ՀՀ կառավարության 1560-Ն որոշման Հավելվածի 74-րդ կետի՝ Մաքսային Միության հանձնաժողովի «Մանդամթերքի անվտանգության մասին Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի» պահանջներին մսի և մսամթերքի արտադրանքների համապատասխանությունը գնահատելու համար արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ունենան Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N56-Ն որոշմամբ սահմանված՝ համապատասխանության հայտարարագրման սխեմաներից որևէ մեկով հավաստված **համապատասխանության հայտարարագիր**:

Համապատասխանության հայտարարագրման, գնահատման և վերահսկողության գործընթացն ըստ Եվրասիական տնտեսական միության օրենսդրության ենթադրում է.

ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Միության տարածքում շրջանառության մեջ դրվող արտադրանքը պետք է լինի անվտանգ»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Այն արտադրանքը, որի համար ուժի մեջ է մտել Միության տեխնիկական կանոնակարգը, Միության տարածքում շրջանառության մեջ է դրվում պայմանով, որ այն անցել է Միության տեխնիկական կանոնակարգով սահմանված համապատասխանության գնահատման անհրաժեշտ ընթացակարգերը»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողությունն (վերահսկողությունն) իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Պայմանագրի Հավելված 9-ում սահմանված են տեխնիկական կարգավորումները ԵԱՏՄ շրջանակում: Մասնավորապես՝ Հավելված 9-ի 5-րդ կետում նշվում է. «Միության տեխնիկական կանոնակարգերում սահմանված տեխնիկական կարգավորման օբյեկտների համապատասխանության գնահատումն իրականացվում է գրանցման (պետական գրանցման), փորձարկումների, համապատասխանության հավաստման, փորձաքննության և (կամ) այլ ձևով:

Համապատասխանության պարտադիր հավաստումն իրականացվում է համապատասխանության հայտարարագրման և սերտիֆիկացման ձևով:

Շրջանառության մեջ դրվող արտադրանքի՝ Միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության գնահատումն իրականացվում է մինչև դրա շրջանառության մեջ դրվելը»:

«Մանդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հսկիչ կետում ներմուծվող ապրանքի, բացառությամբ կենդանիների և սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի փաստաթղթային ստուգումը, գնումը և (կամ) նմուշառումն իրականացվում են կառավարության սահմանած՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող *սննդամթերքի ռիսկայնության* հիման վրա հսկողության մեթոդաբանությամբ սահմանված դեպքերում և կարգով:

ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի ռիսկայնության հիման վրա հսկողության մեթոդաբանությունը հաստատելու մասին» N218-Ն որոշումը փաստում է, որ միսը և մսից սննդային ենթամթերքները դասվում են բարձր ռիսկայնության ապրանքների շարքում:

Այսպիսով՝ ԵԱՏՄ կանոնակարգում թոչնի մսի և դրա վերամշակումից ստացվող մթերքների վերաբերյալ կարգավորումները բացակայում են (թոչնի մսի վերաբերյալ Մաքսային միության «Թոչնի մսի և դրա վերամշակման արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի նախագիծը դեռևս ընդունված չէ), և միության անդամ յուրաքանչյուր երկիր թոչնամսի անվտանգության նկատմամբ կիրառում է սեփական կարգավորումները:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N58 որոշմամբ սահմանված՝ «Մանդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ»²² Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ:

Այս տեխնիկական կանոնակարգը մշակվել է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում սննդային հավելումներին, բուրավետիչներին և տեխնոլոգիական օժանդակ միջոցներին ու սննդամթերքում դրանց պարունակությանը ներկայացվող՝ կիրառման և կատարման համար պարտադիր միասնական պահանջներ սահմանելու, Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների ազատ տեղավորումն ապահովելու նպատակով:

Ըստ սույն տեխնիկական կանոնակարգի՝ սահմանվում են.

- 1) տեխնիկական կանոնակարգման օբյեկտները,
- 2) տեխնիկական կանոնակարգման օբյեկտների անվտանգությանը ներկայացվող պահանջները,
- 3) տեխնիկական կանոնակարգման օբյեկտների նույնականացման կանոնները,

²² www.eurasiancommission.org

4) տեխնիկական կանոնակարգման օբյեկտների՝ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) ձևերը և ընթացակարգերը:

Վերոնշյալ կանոնակարգի ընդունման նպատակներն են.

- 1) մարդու կյանքի և առողջության պաշտպանությունը,
- 2) ձեռքբերողներին մուրրության մեջ գցող գործողությունների կանխումը,
- 3) շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Կանոնակարգի պահանջների կատարումն ապահովելու համար սահմանվել են պետական լիազոր մարմիններ: Համաձայն **ՀՀ կառավարության 2015 թվականի N71-Ն** որոշման՝ պետական վերահսկողական լիազոր մարմիններ են²³.

- ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմինը,
- Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը,
- Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը:

ՀՀ կառավարության 2015 թվականի N71-Ն որոշմամբ՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը լիազոր է սահմանվել ներքոնշյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման համար.

- «Սննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ,
- «Սննդամթերքի մակնշման մասին» տեխնիկական կանոնակարգ,
- «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ,
- «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» տեխնիկական կանոնակարգ:

3. Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N881 որոշմամբ սահմանված՝ **«Սննդամթերքի մակնշման մասին Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ»**²⁴:

Սույն տեխնիկական կանոնակարգի գլխավոր նպատակը սննդամթերքի մասին սպառողներին հավաստի տեղեկություններով ապահովման իրավունքի իրացումն է: Դրա համաձայն՝ սննդամթերքը շուկայում շրջանառության մեջ է դրվում, եթե վերջինիս մակնշվածքը համապատասխանում է Մաքսային միության սույն տեխնիկական կանոնակարգին, ինչպես նաև այն տեխնիկական կանոնակարգերին, որոնց գործողությունը տարածվում է սննդամթերքի վրա:

4. Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N769 որոշմամբ հաստատված՝ **«Փաթեթավորման ան-**

²³ <https://www.arlis.am/>

²⁴ www.eurasiancommission.org

վտանգության մասին Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ»²⁵, որով սահմանվում են փաթեթավորման և մի շարք այլ հարակից պահանջներ և դրանց պարտադիր կիրառման պայմանները:

3.2

Հավի մսի շրջանառության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, ՄՄ հանձնաժողովի և ՀՀ կառավարության որոշումները

Հավի մսի շրջանառության ընդհանուր պայմանների կանոնակարգման նպատակով կիրառվում են նաև որոշ ՀՀ օրենքներ և այլ իրավական կարգավորումներ, մասնավորապես.

1. **«Սննդամթերքի անվտանգության մասին»²⁶ ՀՀ օրենքը** (ընդունվել է 2014 թվականի հունիսի 21-ին) կարգավորում է սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, սննդի շղթայի և առևտրի ու հանրային սննդի ոլորտում ծառայությունների մատուցման փուլերում անվտանգությանն առնչվող հարաբերությունները, ինչպես նաև ամրագրում պետության կողմից նախատեսվող՝ մարդու առողջության պաշտպանության երաշխիքները:

Այս օրենքը չի տարածվում անձնական կամ ընտանեկան օգտագործման համար նախատեսված սննդամթերքի՝ տնային պայմաններում պատրաստման, վերամշակման, օգտագործման կամ պահման, Հայաստանի Հանրապետության տարածքում տարանցիկ փոխադրվող սննդամթերքի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ տարանցիկ փոխադրումը կարող է վտանգ սպառնալ բնակչության առողջությանը և շրջակա միջավայրին, ինչպես նաև գիտահետազոտական և ուսումնական նպատակներով իրականացվող՝ սննդամթերքի մշակման և պատրաստման աշխատանքների արդյունքում ստացված սննդամթերքի վրա, որը ենթակա չէ շուկայահանման:

2. **«Անասնաբուժության մասին»²⁷ ՀՀ օրենքով** կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժության իրականացմանն ու կառավարմանն առնչվող հարաբերությունները: Օրենքը տարածվում է անասնաբուժության ոլորտում ծագած հարաբերություններին մասնակից բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ համապատասխան գործունեություն իրականացնող անձանց վրա: Օրենքով կարգավորվում են նաև անասնաբուժական և անասնաբուժական լաբորատոր գործունեությանը, հակահամաճարակա-

²⁵ www.eurasiancommission.org

²⁶ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=104105>

²⁷ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=101830>

յին միջոցառումներին, կենդանական ծագման հումքին, մթերքին և անասնաբուժական դեղամիջոցներին, **մարդկանց կողմից** սպառման համար չնախատեսված կողմնակի արտադրանքի տնօրինմանը, կենդանիների առողջության պաշտպանությանը, բարեկեցության պահպանմանը, ինչպես նաև կենդանիների սպանդին ու մորթին ներկայացվող պահանջները:

3. ԵԱՏՄ հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի N318 որոշման և **«Մանդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի**²⁸ համաձայն՝ կարգավորվում են սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուժասանիտարիայի բնագավառներում պետական վերահսկողության հիմնական սկզբունքները, առանձնահատկությունները, պետական վերահսկողություն իրականացնող անձանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչպես նաև պետական վերահսկողության հետ կապված այլ հարաբերություններ: Սույն օրենքի գործողությունը տարածվում է սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի անասնաբուժական և բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների, ինչպես նաև պետսիցիդների և ագրոքիմիկատների արտադրության, վերամշակման և շրջանառության բոլոր փուլերում լիազոր մարմնի կողմից իրականացվող պետական վերահսկողության հարաբերությունների վրա:

4. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի **«Մաքսային միությունում անասնաբուժասանիտարական միջոցների կիրառման մասին»**²⁹ N317 որոշմամբ սահմանվել են անասնաբուժական հսկողության ենթակա ապրանքների միասնական ցանկը, Մաքսային միության մաքսային սահմանին և Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողություն իրականացնելու միասնական կարգի մասին հիմնադրույթը, անասնաբուժական հսկողության ենթակա օբյեկտների՝ համատեղ ստուգումներ անցկացնելու և ապրանքների փորձանմուշներ վերցնելու միասնական կարգի մասին հիմնադրույթը, անասնաբուժական հսկողության ենթակա ապրանքներին ներկայացվող միասնական անասնաբուժասանիտարական պահանջները, ինչպես նաև անասնաբուժական սերտիֆիկատների միասնական ձևերը: Այս որոշման Հավելված 1-ի համաձայն՝ սահմանվում է անասնաբուժական հսկողության ենթակա ապրանքների միասնական ցանկը.

- 0105՝ ընտանի թռչուն՝ կենդանի, այսինքն՝ ընտանի հավեր (Gallus domesticus), բադեր, սագեր, հնդկահավեր և խայտահավեր,
- 0207՝ 0105 ապրանքային դիրքում նշված ընտանի թռչունների միս և սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած,

²⁸ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=91593>

²⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=98978>

- 020900՝ անյուղ մսից առանձնացված խոզի ճարպ և չհալեցրած կամ այլ եղանակով չստացված ընտանի թռչունների ճարպ՝ թարմ, պաղեցրած, սառեցրած, աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի «**Մանդամթերքի հիգիենային ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին**»³⁰ N34-Ն որոշմամբ սննդի շղթայի օպերատորների համար սահմանվում են սննդամթերքի հիգիենային ներկայացվող ընդհանուր պահանջներ (հիգիենիկ պատշաճ գործելակերպի կանոններ): Սույն որոշման մեջ սահմանվում են սննդի շղթայի օպերատորների պարտավորությունները, հիգիենայի ընդհանուր պահանջները, սննդի կառույցներին, ինչպես նաև սննդի շղթայի առանձին փուլերին ներկայացվող հիգիենայի ընդհանուր պահանջները:

- Մանդամթերքի հիգիենային ներկայացվող պահանջները չեն տարածվում.
- անձնական կամ ընտանեկան սպառման համար նախատեսված նախնական արտադրության արտադրանքի վրա,
 - անձնական կամ ընտանեկան սպառման համար նախատեսված սննդամթերքի տնային պայմաններում պատրաստման, վերամշակման, օգտագործման կամ պահման վրա:

6. Ըստ ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «**Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին**» N1560-Ն³¹ որոշման՝ սահմանվում են մսի և մսամթերքի անվտանգությունը բնութագրող ցուցանիշները, դրանց մակնշմանը, փաթեթավորմանը, պահմանը, փոխադրմանը ներկայացվող պահանջները և համապատասխանության հավաստման ընթացակարգերը, որոնք պետք է պահպանվեն թռչնամսի շրջանառության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից:

Մասնավորապես, N1560-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի համաձայն, Հայաստանի Հանրապետության տարածքում մսի և մսամթերքի իրացման ժամանակ պետք է պահպանվեն համապատասխանության գնահատման ենթակա արտադրանքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանները:

Հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության գնահատման ենթակա և շրջանառության մեջ գտնվող միսն ու մսամթերքը պետք է ուղեկցվեն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը հավաստող հայտարարագրով կամ ունենան տեխնիկական կանոնակարգերի պահանջ-

³⁰ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=65384>

³¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=42260>

ներին համապատասխանությունը հավաստող համապատասխանության ազգային նշանի մակնշում:

Հավելվածի 27.1. կետի համաձայն՝ թոչնամսի հալեցման ժամանակ անջատված խոնավության զանգվածային բաժինը չպետք է գերազանցի 4%-ը:

Հավելվածի 59-րդ կետի համաձայն՝ մսի կամ մսամթերքի փաթեթավորման կամ դրան փակցված պիտակի վրա կատարված հստակ և ընթեռնելի մականշվածքը պետք է պարունակի «Մսնդամթերքի անվտանգության մասին» օրենքով սահմանված տեղեկություն՝ հայերենով (մսի և մսամթերքի մակնիշները կարող են ներկայացվել նաև լատիներեն)։

- ա) մսի կամ մսամթերքի անվանումը (նշել կենդանու կամ թոչնի տեսակը),
- բ) մսի կամ մսամթերքի գտաքաշը,
- գ) մսամթերքի հիմնական բաղադրիչների ցանկը,
- դ) մսամթերքի մեջ օգտագործված սննդային հավելումների ցանկը, եթե այդպիսիք կան,
- ե) մսամթերքի, մսամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների օգտագործման վերաբերյալ ցուցումներ, եթե առանց դրանց այն չի կարող պատշաճորեն օգտագործվել, առանձնակի հանձնարարականներ դրանց օգտագործման վերաբերյալ (եթե այդպիսիք կան), տեղեկություն դրանց օգտագործման, հակացուցումների մասին (եթե այդպիսիք կան),
- զ) արտադրողի անվանումը, գտնվելու վայրը, գործունեության իրականացման լիցենզիայի համարը,
- է) մսի կամ մսամթերքի ծագման երկիրը,
- ը) հատուկ նշանակության մսամթերքի սննդային արժեքը,
- թ) «Գենետիկորեն ձևավոխված մսամթերք», եթե դա այդպիսին է,
- ժ) մսամթերքի խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանը՝
- ժա) մսի կամ մսամթերքի արտադրության տարեթիվը, ամիսը, օրը, պահման պայմանները, պիտանիության ժամկետը, մսամթերքի պահման մասին առանձնակի ցուցումներ (եթե այդպիսիք կան),
- ժբ) օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 28-ի «Մսնդամթերքի տվյալ խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանի և մականշվածքի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N1392-Ն որոշմամբ սահմանված են սննդամթերքի տվյալ խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանի և մականշվածքին ներկայացվող պահանջները:

ՀՀ կառավարության N1560-Ն որոշման Հավելվածի 62-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող մսի և մսամթերքի, դրանց հետ շփվող նյութերի, սննդային հավելումների մակնշումը հայերենով

պետք է պարունակի տեղեկություններ, որոնց ձևերին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, ըստ առանձին տեսականու, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Իսկ կառավարության 2002 թվականի մարտի 21-ի «Ներմուծվող ընտանի թռչնի մսի վերաբերյալ սպառողներին տեղեկատվությամբ ապահովելու մասին»³² N275 որոշման 1-ին կետով սահմանվում է, որ ներմուծվող ընտանի թռչնի մսի և դրա ենթամթերքի (ԱՏԳ ԱՍ 0207) մակնիշը պետք է պարունակի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տեղեկություն՝ հայերենով:

Այսինքն՝ կարգավորումներով սահմանված են և՛ ներմուծված, և՛ արտադրված թռչնամսի մակնշմանը ներկայացվող պահանջները:

Սակայն, մյուս կողմից, Հավելվածի 60-րդ կետի համաձայն՝ 59-րդ կետի դրույթները չեն տարածվում վաճառքի կետերում վերջնական սպառողին հանձնված՝ չփաթեթավորված թռչնամսի վրա, որը կարող է փաթեթավորվել գնորդի պահանջով կամ չափաձրարվել անմիջապես վաճառքից առաջ:

Տվյալ խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանին և մակնշվածքին ներկայացվող պահանջները ևս չեն տարածվում վաճառքի կետերում վերջնական սպառողին հանձնված չփաթեթավորված աննդամթերքի վրա, որը փաթեթավորվում է գնորդի պահանջով կամ չափաձրարվում անմիջապես վաճառքից առաջ:

Մանրածախ առևտրի վաճառակետերում վաճառվում է և՛ սառեցված, և՛ թարմ կամ պաղեցված չփաթեթավորված թռչնամիս, որը կամ մակնշված չէ, կամ դրա վրա բացակայում է արտադրության ամսաթիվը (վերջինիս փոխարեն նշվում է փաթեթավորման ամսաթիվ), ինչպես նաև արտադրողի վերաբերյալ տեղեկությունը:

Արդյունքում, **վաճառակետերում իրացվող չփաթեթավորված, առանց մակնշման թռչնամիս գնելիս վերջնական սպառողը չի ստանում ամբողջական տեղեկություն մասնաթերքի արտադրության և պահպանման վերաբերյալ:**

7. Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի «Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը և ներկայացվող պահանջները սահմանելու մասին»³³ N993-Ն որոշման՝ կարգավորվում են սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների և թռչունների սպանդի կազմակերպման հետ կապված հարաբերությունները և սպանդին ներկայացվող պահանջները: Ըստ այդմ՝ սպանդանոցներում սպանդի գործընթացը կազմակերպվում է անասնաբուժության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառա-

³² <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=42840>

³³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102113>

յության եզրակացությամբ և հսկողությամբ, ինչպես նաև սպանող կատարվում է սպանդային սրահում կամ մասնաշենքում՝ ըստ կենդանատեսակների, հերթափոխերով (մասնավորապես՝ սպանդանոցում գործում են անասնաբուժասանիտարական փորձաքննության օրգանոլեպտիկ (ներքին օրգանների և եզրափակիչ) զննման հոսքագծի տեղեր՝ ըստ կենդանատեսակի (թոչունների համար՝ 2 տեղ):

8. Համաձայն ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 31-ի «**Կենդանիների սպանդից գոյացած մթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին**»³⁴ N426-Ն որոշման՝ կենդանիների սպանդից գոյացած մթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման կարգով սահմանվում են կենդանիների մսեղիքի ու կենդանիների սպանդից գոյացած մթերքի անասնաբուժական անվտանգության նորմերը, անասնաբուժասանիտարական փորձաքննության անցկացման, լաբորատոր հետազոտությունների, վարակազերծման ենթակա մսեղիքի և կենդանիների, ինչպես նաև սպանդից գոյացած մթերքի վերամշակման, վարակազերծման ու ոչնչացման գործընթացները: Կարգի պահանջների կատարումը պարտադիր է այն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ անկախ սեփականության ձևից և գերատեսչական ենթակայությունից, որոնք գործունեություն են իրականացնում մսեղիքի և մսամթերքի վերամշակման, արտադրության, իրացման և առևտրի ոլորտներում: Սույն որոշման համաձայն՝ ընտանի և վայրի թոչունների մսեղիքը թույլատրվում է զննել միայն այն դեպքում, երբ ամբողջապես հեռացված է փորոտիքը: Թոչունների սպանդից գոյացած մթերքը (այդ թվում՝ նաև արտերկրից ներմուծված), որ մտել է շուկա կամ իրացման կետ, ենթակա է պետական անասնաբուժական վերահսկողության: Այդ դեպքում ուշադրություն է դարձվում կից անասնաբուժական փաստաթղթերին, թարմության ցուցանիշներին և իրացման ժամկետներին: Շուկաներում, առևտրի և հանրային սննդի օբյեկտներում, վերամշակման արտադրամասերում անասնաբուժասանիտարական փորձաքննությունը ներառում է օրգանոլեպտիկ և մանրադիտակային էքսպրես հետազոտությունները: Անասնաբուժասանիտարական փորձաքննության արդյունքները, բավարար կասկածների առկայության դեպքում, 10-20 օրվա ընթացքում վերահաստատվում կամ հերքվում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից տրված եզրակացությամբ: Արգելվում է ընդունել և իրացնել նախօրոք կտրատված միսը և տնային պայմաններում պատրաստված կիսապատրաստվածքները:

9. Կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի «**Ձկան, ջրային կենդանիների ու ձկնամթերքի, մսի և կենդանիների սպանդից գոյացած մթերքի, կաթի և կաթնամթերքի, ձվի, մեղրի անասնաբուժասանիտա-**

³⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=84102>

րական փորձաքննության կարգը սահմանելու» Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 31-ի N426-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N156-Ն որոշմամբ կարգավորվում են չվերամշակված ձկան, ջրային կենդանիների ու ձկնամթերքի, մսի և կենդանիների սպանդից գոյացած մթերքի, կաթի և կաթնամթերքի, մեղրի, ձվի անասնաբուժասանիտարական փորձաքննության անցկացման կարգն ու պայմանները, փորձաքննական գործընթացի մասնակից սուբյեկտների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները: Սույն որոշմամբ սահմանվում են փորձաքննության հիմնական սկզբունքները, փորձաքննության օբյեկտների խմբաքանակից նմուշառումը (մասնավորապես՝ հասակավոր հավի, ճագարի, կուղբի, սագի, բադի յուրաքանչյուր 5-րդ մետղիք՝ մինչև 100 գրամ, մանր բուծվող կենդանիների, հավի, բադի, սագի ճտերի, լորի յուրաքանչյուր տեսակի 10 գլխից՝ 1 մետղիք):

10. Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «**Վտանգավոր սննդամթերքի և վտանգավոր կերի օգտահանման ու ոչնչացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի N824-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**» N1060-Ն որոշմամբ կարգավորվում են վտանգավոր սննդամթերքի և վտանգավոր կերի օգտահանման ու ոչնչացման հետ կապված հարաբերությունները: Սույն կարգի դրույթները տարածվում են նաև սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող վտանգավոր նյութերի օգտահանման և ոչնչացման հետ կապված հարաբերությունների վրա: Սույն կարգը կիրառվում է սննդամթերքի և կերի արտադրության ու շրջանառության փուլերում գործող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի, օրենքով սահմանված կարգով հավատարմագրված լաբորատորիաների, ինչպես նաև օգտահանում կամ ոչնչացում իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից: Սույն որոշման համաձայն՝ սահմանվել են նաև վտանգավոր արտադրանքի օգտահանման և ոչնչացման կարգերը:

3.3

Հավի մսի շրջանառության ոլորտի հարկային և մաքսային կարգավորումները ՀՀ-ում

«Հավի միս» ապրանքային շուկայում տնտեսվարման գործընթացի վրա, թերևս, նշանակալի ազդեցություն ունեն մաքսային և հարկային կարգավորումները՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ, 2014 թվականի մայիսին, անդամակցելով Եվրասիական տնտեսական միությանը, ՀՀ-ն միացավ նաև միասնական մաքսային սակագներին:

Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագներին միանալու անցումային դրույթների համաձայն, ըստ համապատասխան հավելվածով սահմանված ցանկի, Հայաստանի Հանրապետությունում մի շարք ապրանքների համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր, որոնք տարբերվում են միասնական մաքսային սակագնի դրույքաչափերից՝ մինչև ԵԱՏՄ միասնական մաքսային սակագներին անցնելը:

Այսպես՝ ոչ ԵԱՏՄ անդամ երկրներից ընտանի թռչնի մսի ներմուծման դեպքում ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը մինչև 2017 թվականը կազմել է 10 տոկոս, 2018 թվականին՝ 18 տոկոս, 2019 թվականին՝ 22 տոկոս:

0207 ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրին դասվող ընտանի թռչնի մսի մաքսատուրքի դրույքաչափի փոփոխությունը **Աղյուսակ 3.3.1**

2018	2019	2020	2021	2022
18%	22%	25%	Քվոտայի շրջանակում՝ 25%	Քվոտայի շրջանակում՝ 25%, բայց ոչ պակաս 0,2 եվրո՝ 1 կգ-ի համար
			Քվոտայից դուրս՝ 50%	Քվոտայից դուրս՝ 80%, բայց ոչ պակաս 0,7 եվրո՝ 1 կգ-ի համար

2020 թվականին մաքսատուրքը բարձրացել է ևս 3 տոկոսային կետով (22%-ից՝ 25%), իսկ 2021 թվականին կազմել 50 տոկոս: 2022 թվականից պետք է գործի միասնական մաքսային սակագինը, ըստ որի՝ դրույքաչափը պետք է կազմի 80 տոկոս:

Հարկ է նշել, որ ծագման երկրի հավաստագրի առկայության պարագայում Ուկրաինայից (ՀՀ-ն այս երկրի հետ ունի ազատ առևտրի համաձայնագիր) ընտանի թռչնի մսի ներմուծման ժամանակ գանձվում է 0% մաքսատուրքի դրույքաչափ: 0% մաքսատուրքի դրույքաչափ է կիրառվում նաև ԵԱՏՄ երկրներից ներմուծման դեպքում:

2021 թվականից սկսած՝ Հայաստանի Հանրապետությունն իրավունք ունի օգտվելու ԵԱՏՄ անդամ պետությունների միջև բաշխվելիք սակագնային քվոտաներից, որոնց շրջանակում ԵԱՏՄ անդամ պետությունները երրորդ երկրներից ընտանի թռչնի միսը շարունակում են ներմուծել 25% մաքսատուրքի դրույքաչափով: Մաքսատուրքի դրույքաչափի բարձրացումը կազդի միայն քվոտավորված ծավալից դուրս ներմուծման ծավալի վրա:

Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու մասին» N2209-Ն որոշմամբ սահմանվել է 2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին տեսակի գյուղատնտեսական ապ-

րանքների (այդ թվում՝ թռչնամանի) նկատմամբ սակագնային քվոտայի կիրառումը:

Թիվ 2209 որոշման N2 հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ ապրանքի ներմուծման թույլատրելի ծավալը բաշխվում է հետևյալ կերպ.

- 1) պատմական գնորդների համար՝ ներմուծման թույլատրելի ընդհանուր ծավալի 75 տոկոսը,
- 2) այլ արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար՝ ներմուծման թույլատրելի ընդհանուր ծավալի 25 տոկոսը:

Հավելված 2-ի 3-րդ կետի համաձայն՝ արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներ են համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված կամ հաշվառված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը: Պատմական գնորդներ են համարվում հաշվարկված ժամանակաշրջանում ներքին սպառման համար ապրանք (թիվ 2209 որոշման հավելված 1-ում նշված առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանք) ներմուծող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան արտաքին տնտեսական գործունեության մասնակիցները:

Հավելված 2-ի 8-րդ կետի համաձայն՝ ներմուծման մասին հայտ ներկայացրած պատմական գնորդի համար ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$Vi = Vid \times D,$$

որտեղ՝

Vi-ն i-րդ պատմական գնորդին հատկացվող ներմուծման թույլատրելի ծավալն է,

Vid-ն բոլոր պատմական գնորդների՝ համապատասխան տարվա համար ապրանքի ներմուծման թույլատրելի ծավալն է,

D-ն գործակից է, որն արտացոլում է հաշվարկված ժամանակաշրջանում ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալում պատմական գնորդի մասը:

D գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով, ընդ որում, գործակցի մեծությունը կլորացվում է մինչև տասնորդական միավորը.

$$D = Vipt / Vt,$$

որտեղ՝

Vipt-ն պատմական գնորդի կողմից հաշվարկված ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքի բնախրային ծավալն է,

Vt-ն բոլոր պատմական գնորդների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքի բնախրային ծավալն է:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ Ուկրաինայից և ԵԱՏՄ երկրներից 0 տոկոս, իսկ 2022 թվականին՝ 3-րդ երկրներից 80 տոկոս (քվոտայի շրջա-

նակում՝ 25 տոկոս) մաքսային դրույքաչափերի տարբերությունը կարող է հանգեցնել ներմուծման երկրների շրջանակի փոփոխության և ներմուծման ծավալների վերաբաշխման:

Ինչ վերաբերում է հավի մսի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին, ապա վերջիններս գործում են ընդհանուր հարկման դաշտում:

ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 13-ի N1467Ն որոշմամբ սահմանված «*Հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամրից նվազեցվող գույքի բնական կորուստների չափերը սահմանելու մասին*»³⁵ որոշման 5-րդ հավելվածով սահմանվում են հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամրից նվազեցվող մսի և մսամթերքի պահպանման ընթացքում առաջացող բնական կորուստների չափերը, որոնք հետևանք են դրանցում ընթացող ֆիզիկաքիմիական գործընթացների և օդերևութաբանական գործոնների ազդեցության, տրանսպորտային միջոցների օգտագործման, ինչպես նաև պահպանման ժամանակ դրանց որակական ու քանակական պարամետրերի փոփոխության (պակասություն): Թռչնի մսի (հավ, հնդկահավ, սագ, բադ՝ ամբողջական մետղիքով) պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափը (տոկոսներով՝ քանակի նկատմամբ) սպանդից անմիջապես հետո՝ բնական պաղեցման կամ սառնարանում մինչև 4 C աստիճան սառեցման ժամանակահատվածում, 1.0 տոկոս է, իսկ սառեցված միսը սառնարանում պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափը՝ 0.30 տոկոս: Մույն որոշման 10-րդ հավելվածով սահմանվում են նաև գյուղատնտեսական թռչունների պահման, փոխադրման, հարկադիր սպանդի ժամանակ առաջացող բնական կորուստների չափերը:

3.4

Հավի մսի շրջանառության ոլորտի այլ կարգավորումները ՀՀ-ում

ՀՀ և միջազգային թռչնամսի շուկայի կարգավորման գործում մեծ ազդեցություն ունեն նաև FAO-ի (ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության միջազգային կազմակերպություն) և WHO-ի (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն) կողմից հաստատված *Codex Alimentarius սննդի միջազգային սրահարպրները*, քանի որ ՀՀ-ն 1993 թվականից անդամակցում է ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության միջազգային կազմակերպությանը:

Մասնավորապես՝ Codex Alimentarius սննդի միջազգային ստանդարտներից են.

³⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=127175>

- «**CLASSIFICATION OF FOODS AND ANIMAL FEEDS**»³⁶ (Արտադրանքի և կենդանիների մսի կողմնադասակարգում) ստանդարտ՝ հաստատված FAO-ի (Պարենի և գյուղատնտեսության միջազգային կազմակերպություն) և WHO-ի (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն) կողմից, որտեղ ամփոփված են առևտրում տեղաշարժվող սննդամթերքի և կենդանիների կերերի ապրանքագրերի դասակարգումը և դրանց նկարագրությունները, ինչը նպատակ ունի նպաստելու ապրանքների նկարագրման համար օգտագործվող տերմինների ներդաշնակեցմանը: Ստանդարտում CLASS B TYPE 7 GROUP 036-ը վերաբերում է թռչնամսի դասակարգմանը, Group 037-ը՝ թռչնամսի ճարպայտույան արտադրանքներին և այլն:

- «**STANDARD FOR LUNCHEON MEAT**»³⁷ (Ճաշի և այլ ուտեստներում ներառվող մսի ստանդարտ)՝ հաստատված FAO-ի (Պարենի և գյուղատնտեսության միջազգային կազմակերպություն) և WHO-ի (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն) կողմից: Ստանդարտը հիմնական շեշտը դնում է արտադրանքների հանրային առողջության, մասնավորապես՝ դրանց պահեստավորման, փոխադրման և վաճառքի պայմանների վրա: Ըստ այս ստանդարտի՝ թռչնաբուծական միս են կոչվում սպանդանոցում համապատասխան պայմաններում մորթված յուրաքանչյուր ընտելացված թռչունի (հավ, հնդկահավ, բադ, սագ, աղավնի) ուտելի մասերը: «STANDARD FOR LUNCHEON MEAT»-ը (Ճաշի և այլ ուտեստներում ներառվող մսի ստանդարտ) սահմանում է մթերքում առկա ճարպի առավելագույն տոկոսը: Ստանդարտը սերտորեն կապված է սննդի հիգիենայի ընդհանուր (CXC 1-1969), մսի հիգիենիկ պահպանման (CXC 58-2005) սկզբունքների, ինչպես նաև սննդամթերքի հետ կապված մանրէաբանական չափանիշների հաստատման և կիրառման ուղեցույցի (CXG 21-1997) հետ:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ թռչնամսի շուկան կարգավորող ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը, ՀՀ օրենքները և այլ իրավական ակտեր սահմանում են **Պարենի և գյուղատնտեսության համաշխարհային կազմակերպության (FAO) և Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից հաստատված, միջազգային ստանդարտներին համապատասխանող** թռչնամսի արտադրության և ներմուծման հետ կապված բոլոր սանիտարահիգիենիկ անվտանգության նորմերը: Սակայն, ըստ ԵԱՏՄ «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի (09.10.2013) 4-րդ հոդվածի «գ» կետի, պահանջները չեն տարածվում թռչնամսի վրա, և զուգահեռ գործում է ՀՀ կառավարության «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» որոշումը, որով կարգավորվում են նաև ԱՏԳԱԱ 0207 կոդով ապրանքների (ընտանի թռչնի միսը և սննդային ենթամթերքը՝ թարմ, պաղեցված կամ

³⁶ <http://www.fao.org/fao-who-codexalimentarius/codex-texts/list-standards/en/>

³⁷ <http://www.fao.org/fao-who-codexalimentarius/codex-texts/list-standards/en/>

սատեցված) սպանդային անվտանգության պահպանման, իրացման ու ուտիլիզացման պայմանները: Փաստորեն, ԵԱՏՄ անդամ յուրաքանչյուր պերու-թյուն ինքնուրույն է սահմանում թոշնամսի և թոշնամթերքի անվտանգության հարույկ նորմերը և պահանջները, քանի որ միասնական կարգավորում չկա: Այսինքն՝ ԵԱՏՄ-ից ներմուծվող և տեղական արտադրության թոշնամսի նկատմամբ տարբեր պահանջները գործնականում կարող են տարբեր լինել, ինչը, բացի անդամթերքի անվտանգության խնդիրներից, կարող է հանգեցնել անգամ մրցակցային անհավասար պայմանների:

Մեկ այլ, ոչ պակաս կարևոր հանգամանք է այն, որ թիվ 1560-Ն որոշման Հավելվածի համաձայն՝ մսի կամ մսամթերքի փաթեթավորման կամ դրան փակցված պիրակի վրա կարարված հարակ և ընթերնետի մականշվածքի պահանջը չի տարածվում վաճառքի կետերում վերջնական սպառողին հանձնված չփաթեթավորված մսի վրա: Արդյունքում, վաճառակետերում իրացվող չփաթեթավորված թոշնամսին առանց մակնշման իրացման պարագայում վերջնական սպառողը չի տրանում ամբողջական տեղեկություն մսամթերքի արտադրության և պահպանման վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 4

«ՀԱՎԻ ՄԻՍ» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1 ՀՀ «Հավի միս» ապրանքային շուկայի տնտեսվարող սուբյեկտներն ու շուկայի կառուցվածքային տեղաշարժերը

«Հավի միս» ապրանքային շուկայի մասնակիցների կազմը վերջին տարիներին ենթարկվել է որոշակի փոփոխությունների, ինչին զուգահեռ, փոփոխության են ենթարկվել նաև ներմուծման, արտադրության և իրացման ավելի մեծ ծավալներ ապահովող տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինները:



Գծապատկեր 4.1.1

Հավի միս ներմուծող տնտեսվարող սուբյեկտների թիվը և ներմուծման մեծ ծավալներ ապահովող տնտեսվարող սուբյեկտի մասնաբաժինը (ՄՊՀ տվյալների հիման վրա)

Վերջին տարիներին «Հավի միս» ապրանքային շուկայի մասնակիցների թիվը որոշակիորեն ավելացել է: Այսպես՝ 2014 թվականի համեմատությամբ 2016 թվականին ներմուծում իրականացնող տնտեսվարող սուբյեկտների քանակն ավելացել է 27-ով՝ 36-ից հասնելով 63-ի, ինչին նպաստել է ՀՀ անդամակցությունը ԵԱՏՄ-ին: Ուշագրավ է նաև այն, որ նույն ժամանակահատվածում զգալիորեն նվազել է ներմուծման մեծ ծավալներ ապահովող տնտեսվարող սուբյեկտի մասնաբաժինը: Մասնավորապես՝ 2014 թվականին դա կազմել է 68%, իսկ 2017 թվականին՝ 34%: 2017 թվականից մինչև 2020 թվականը ներմուծող տնտեսվարող սուբյեկտների թիվն էականորեն չի փոխվել՝ տատանվելով 50-ից մինչև 57-ի սահմաններում:

Հավի միս արտադրությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների թիվը վերջին տարիներին նույնպես ավելացել է, մասնավորապես՝ 2018 թվականին դա կազմել է 14, 2019-ին՝ 16, իսկ 2020-ին՝ 19 տնտեսվարող սուբյեկտ:

Որպես արդյունք՝ ավելացել է նաև առաջնային շուկայում հավի միս իրացնող տնտեսվարող սուբյեկտների թիվը: 2018 թվականի ընթացքում հավի մսի իրացման առաջնային շուկայում գործունեություն է ծավալել 59, 2019 թվականին՝ 65, իսկ 2020 թվականին՝ 66 տնտեսվարող սուբյեկտ:

Վերոնշյալ ցուցանիշների համադրությունից պարզ է դառնում, որ ապրանքային շուկայի կենտրոնացվածությունը վերջին տարիներին նվազման միտում է գրանցել, ինչը կարելի է դիտարկել որպես մրցակցային միջավայրի փոփոխության դրական ազդակ:

2018 թվականից մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածում իրացման ավելի մեծ ծավալներ ապահովող 3 տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինները միասին կազմել են համապատասխանաբար՝ 53%, 57% և 49%:

4.2

Հավի մսի ներմուծման, արտադրության և իրացման ծավալները ՀՀ-ում



Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տվյալների՝ ԱՏԳ ԱԱ 0207 1, 0207 2, 0207 4 և 0207 5 դասակարգիչներին դասվող թոչնամսի և դրանից պատրաստված ենթամթերքի ներկրման ծավալները 2018, 2019 և 2020 թվականների ընթացքում կազմել են համապատասխանաբար՝ 32 877 174, 43 587 571 և 34 239 064 կիլոգրամ:

Աղյուսակ 4.2.1

Թոչնամսի ներկրման ծավալները 2018-2020 թթ. ընթացքում՝ ըստ ԱՏԳ ԱԱ դասակարգման (ՀՀ ՊԵԿ-ի տվյալների հիման վրա)

Տարի	Թոչնամսի տեսակ								Ընդամենը
	Հավ (0207 1)		Բադ (0207 4)		Հարկահավ (0207 2)		Սագ (0207 5)		
	կգ	կշիռ	կգ	կշիռ	կգ	կշիռ	կգ	կշիռ	
2018	32,783,011	99.71%	3,148	0.01%	91,016	0.28%		0.00%	32,877,174
2019	43,370,125	99.50%	7,590	0.02%	208,920	0.48%	935	0.002%	43,587,571
2020	32,919,746	96.15%	3,949	0.01%	316,643	0.92%		0.00%	34,239,064

Թոչնամսի ներմուծման կառուցվածքը հիմնականում (որոշ տարիների՝ գրեթե ամբողջությամբ) կազմված է հավի մսի և դրանից պատրաստված ենթամթերքի ներմուծումից: Մասնավորապես՝ 2018 թվականին 0207 1 դասակարգչին (ընտանի հավեր, Gallus Domesticus) դասվող ապրանքատեսակների ներմուծման ծավալը թոչնամսի ներմուծման ծավալում կազմել է 99.7%, 2019 թվականին՝ 99.5%, իսկ 2020 թվականին՝ 96.1%:



Գծապատկեր 4.2.1. Թռչնամսի և դրա ենթամթերքի ներմուծման ծավալների տեսակարար կշիռը՝ ըստ տեսակների

Գծապատկեր 4.2.2. Հավի մսի և դրա ենթամթերքի ներմուծման ծավալները (կգ)՝ ըստ տարիների, ՊԵԿ-ի տվյալների հիման վրա

Վերոնշյալ ապրանքատեսակների ներմուծման կառուցվածքը ճշգրիտ գնահատելու և շեղման հնարավորությունը նվազեցնելու նպատակով ԱՏԳ ԱԱ 0207 1, 0207 2, 0207 4 և 0207 5 դիտարկված դասակարգիչներից տարանջատվել են այն ապրանքատեսակները, որոնք ներառված չեն «Հավի միս» ապրանքային շուկայում: Արդյունքում, 2018 թվականի ՊԵԿ-ի հիմնապաշարներից 0207 1 դասակարգչից հնարավոր է եղել նույնականացնել մոտ 452,082 կիլոգրամ ծավալով ապրանքներ (սառեցված կաշի, սառեցված քարաճիկ, հավի մսի թափոններ և այլն), որոնք ներառված չեն ապրանքային շուկայում: 2019 թվականին այդ ապրանքների ծավալը կազմել է 587,896, իսկ 2020 թվականին՝ 865,183 կիլոգրամ: Այնուամենայնիվ, վերոգրյալ ապրանքատեսակների մասնաբաժինը ներմուծման ընդհանուր ծավալում փոքր է, հետևաբար՝ դրանք չեն կարող էական ազդեցություն ունենալ ներմուծման կառուցվածքի վրա:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ներկրվող հավի մսի և դրա ենթամթերքի գրեթե ողջ ծավալը, ջերմային վերամշակման տեսանկյունից, եղել է սառեցված տեսակի:

Աղյուսակ 4.2.2

Հավի մսի և դրա ենթամթերքի ներկրման ծավալները 2018-2020 թթ. ընթացքում՝ ըստ ջերմային վերամշակման եղանակի (ՀՀ ՊԵԿ-ի տվյալների հիման վրա)

Տարի	Հավի միս				Ընդամենը
	Թարմ կամ պաղեղցված		Սառեցված		
	կգ	կշիռ	կգ	կշիռ	
2018	57,306	0.17%	32,725,705	99.83%	32,783,011
2019	18,224	0.04%	43,351,901	99.96%	43,370,125
2020	19,002	0.06%	32,900,745	99.94%	32,919,746


Թոշնամսի ներկրման գործընթացում մեկ այլ կարևոր գործոն է արտահանման երկրների աշխարհագրությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թոշնամսի, այդ թվում՝ հավի մսի գերակշիռ մասը ներկրվում է ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներից:

Աղյուսակ 4.2.3

Թոշնամսի և դրա ենթամթերքի ներկրման ծավալները 2018-2020 թթ. ընթացքում՝ ըստ արտահանման երկրների (ՀՀ ՊԵԿ-ի տվյալների հիման վրա)

ՀՀ	Արտ. երկիր	2018		Արտ. երկիր	2019		Արտ. երկիր	2020	
		Կգ	Կշիռ		Կգ	Կշիռ		Կգ	Կշիռ
1	Միացյալ Նահանգներ	10,061,042	30.6%	Ուկրաինա	15,738,134	36.1%	Ուկրաինա	10,071,540	29.4%
2	Ուկրաինա	5,972,811	18.2%	Միացյալ Նահանգներ	9,512,878	21.8%	Միացյալ Նահանգներ	8,705,981	25.4%
3	ՌԴ	4,877,459	14.8%	Վրաստան	6,065,840	13.9%	ՌԴ	5,297,023	15.5%
4	Բելգիա	3,222,000	9.8%	ՌԴ	5,062,553	11.6%	Վրաստան	5,225,667	15.3%
5	Բրազիլիա	3,133,362	9.5%	Բելգիա	1,969,500	4.5%	Գերմանիա	1,661,190	4.9%
6	Վրաստան	2,961,110	9.0%	Գերմանիա	1,762,700	4.0%	Բելգիա	1,031,085	3.0%
7	Գերմանիա	1,344,500	4.1%	Բրազիլիա	1,377,984	3.2%	Միացյալ Թագ.	926,529	2.7%
8	Ֆրանսիա	943,023	2.9%	Միացյալ Թագ.	1,026,725	2.4%	Նիդերլանդներ	356,445	1.0%
9	Բելառուս	314,567	1.0%	Ֆրանսիա	491,892	1.1%	Այլ 7 երկրներ	963,604	2.8%
10	Այլ 2 երկրներ ³⁸	47,300	0.1%	Այլ 4 երկրներ	579,366	1.3%			
	Ընդամենը	32,877,174	100%	Ընդամենը	43,587,571	100%	Ընդամենը	34,239,064	100%

Հավի մսի և դրա ենթամթերքի ներմուծման դեպքում ևս արտահանման երկրների աշխարհագրությունն ունի համանման պատկեր:



Գծապատկեր 4.2.3

Թոշնամսի և հավի մսի ներմուծման ծավալները 2020 թվականի ընթացքում՝ ըստ արտահանման երկրների

³⁸ Այլ երկրների շարքում են նրանք, որոնց ներմուծման տեսակարար կշիռն ընդհանուր ծավալում փոքր է 1%-ից:

Հավի մսի ներմուծման կառուցվածքի պարագայում նույնպես 2018-2020 թթ. տեղի են ունեցել փոփոխություններ, մասնավորապես՝ եթե 2018 թվականին ներմուծման 31 տոկոսը իրականացվել է ԱՄՆ-ից, 18 տոկոսը՝ Բրազիլիայից և 18 տոկոսը՝ Ուկրաինայից, ապա 2020 թվականին արդեն ներմուծման շուրջ 31 տոկոսը Ուկրաինայից է, 28 տոկոսը՝ ԱՄՆ-ից, 15 տոկոսը՝ Բրազիլիայից:

Նշված փոփոխությունը հիմնականում պայմանավորված է 3-րդ երկրներից ԵԱՏՄ տարածք հավի մսի ներմուծման մաքսատուրքերի անցումային մաքսային դրույքաչափերի փոփոխությամբ (18-ից 50, իսկ 2022 թվականից՝ 80, քվոտավորված ներմուծման դեպքում՝ 25 տոկոս), և քանի որ Ուկրաինայի հետ ՀՀ-ն ունի ազատ առևտրի համաձայնագիր, ըստ որի՝ գործում է 0 տոկոս մաքսատուրք, ուստի այս երկրից ներմուծման մասնաբաժինը զգալիորեն ավելացել է:

Ընդ որում, Ուկրաինայից հավի մսի ներմուծման 2019-2020 թթ. ծավալների վերաբերյալ, ըստ տարբեր աղբյուրների, որոշակի անհամապատասխանություն է առաջանում:

Աղյուսակ 4.2.4

Ուկրաինայից դեպի ՀՀ թռչնամսի մատակարարման ծավալները՝ ըստ տարբեր աղբյուրների (տոննա)

Ժամանակահատված	Արտահանում Ուկրաինայից դեպի ՀՀ՝ ըստ Ուկրաինայի հրապարակած պաշրոնական տվյալների ³⁹	Ներմուծում Ուկրաինայից՝ ըստ ՀՀ ՊԵԿ-ի տվյալների
2019	17 007	15 737,2
2020	10 882	10 071,5
2021 հունվար - հոկտեմբեր	12 144	13 412,3

Ընդ որում, ԱՄՆ-ից և Բրազիլիայից հավի մսի ներմուծման ծավալների կրճատումը և Ուկրաինայից ներմուծման աճը պայմանավորված են հիմնականում Ուկրաինայում հավի մսի իրացման գների համեմատաբար ցածր մակարդակով և Ուկրաինայից հավի մսի ներմուծման զրոյական մաքսային դրույքաչափի կիրառմամբ:

Ներմուծման ծավալների և աշխարհագրության այսպիսի փոփոխությունները կապված են նաև արտոնյալ մաքսային դրույքաչափով քվոտայի կիրառման հետ: ՀՀ թռչնամսի շուկայի համար դա առաջին անգամ կիրառվել է 2021 թվականին և կազմել 44,000 հազար տոննա: Հաշվարկը հիմնվել է նախորդ երեք տարիների միջին ցուցանիշների վրա:

Էկոնոմիկայի նախարարության տրամադրած տեղեկության համաձայն՝ 2021 թվականի հուլիսի դրությամբ բաշխվել է 36.7 հազ. տոննա, իսկ հետագայում՝ մինչև տարեվերջ՝ ամբողջ 44.0 հազար տոննա թռչնամսի քվոտա:

³⁹ Державна Митна Служба України. <https://customs.gov.ua/en/statistika-ta-reiestri>

Պետական եկամուտների կոմիտեի տվյալների համաձայն՝ 2021 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածի դրությամբ փաստացի ՀՀ է ներմուծվել **30.8 հազ տոննա** թոշնամիս:


Ընդ որում, 2021 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածի դրությամբ այն երկրներից, որոնց նկատմամբ քվոտա չի կիրառվում, ներմուծումները կազմել են. Ուկրաինայից՝ 13.4 հազար տոննա (44 տոկոս), ՌԴ-ից՝ 5.5 հազար տոննա (18 տոկոս), Բելառուսից՝ 0.2 հազար տոննա:

Այսինքն՝ քվոտավորված ներմուծման ծավալը 2021 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում կազմել է **11.8 հազար տոննա (38 տոկոս)**, մնացած **19.1 հազար տոննայի (62 տոկոս)** նկատմամբ քվոտայի կիրառման անհրաժեշտություն չի առաջացել (0 տոկոս մաքսատուրք):

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող թոշնամի նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու մասին» որոշմամբ **2022 թվականի համար նախատեսված քվոտայի ծավալը 30,000 տոննա է:**


Հավի մսի ներկրման ծավալները դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ վերջնարդյունքում հավի միս և դրա ենթամթերք ներմուծող ոչ բոլոր տնտեսվարող սուբյեկտներն են «Հավի միս» ապրանքային շուկայի մասնակիցներ, քանի որ մի շարք տնտեսվարող սուբյեկտներ իրենց ներկրած հավի միսն օգտագործում են արտադրական կամ այլ գործընթացներում և հանդես չեն գալիս որպես տվյալ ապրանքի իրացնողներ, ուստի, տնտեսական մրցակցության տեսանկյունից ևս, ազդեցություն չունեն «Հավի միս» ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պատկերի վրա:

Անդրադառնալով հավի մսի արտադրության ծավալներին՝ կարևոր է նշել, որ չնայած վերջին տարիներին դրանք դրսևորել են աճի միտում, այնուամենայնիվ զգալիորեն զիջում են ներմուծման ծավալներին:



Գծապարկեր 4.2.4


Հավի մսի արտադրության ծավալները և արտադրող տնտեսվարող սուբյեկտների թիվը 2018-2020 թթ. (կգ)՝ համաձայն ՀՀ ՊԵԿ-ի տվյալների




Գծապատկեր 4.2.5 | Հավի մսի արտադրության ծավալները 2015-2020 թթ. (կգ)¹ համաձայն ԱՎԿ տվյալների

Նշենք, որ ՊԵԿ-ի և ԱՎԿ տվյալները կարող են միմյանցից որոշակիորեն տարբերվել՝ ըստ ծավալների հաշվարկման մեթոդական առանձնահատկությունների: Մասնավորապես՝ ՊԵԿ-ի տվյալներում ներառված չեն գյուղացիական տնտեսություններում արտադրվող անձնական կամ ընտանեկան օգտագործման համար նախատեսված, ինչպես նաև գյուղատնտեսական շուկաներում իրացվող արտադրանքի վերաբերյալ տեղեկություններ:

Արտադրության ծավալների աճին համընթաց, հավի մսի իրացման և սպառման ծավալների շարժընթացը նույնպես ենթարկվել է որոշ փոփոխությունների:



Գծապատկեր 4.2.6 | Հավի մսի իրացման ծավալները 2018-2020 թթ. ընթացքում՝ համաձայն ՀՀ ՊԵԿ-ի տվյալների



Գծապատկեր 4.2.7

Հավի մսի սպառման ծավալները 2015-2020 թթ. ընթացքում՝ համաձայն ՀՀ ԱՎԿ տվյալների (հազ. տոննա)

4.3

ՀՀ «Հավի միս» ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը

Ուսումնասիրության շրջանակում հաշվարկվել է «Հավի միս» ապրանքային շուկայի կենտրոնացվածությունն առավել լայն տարածում ունեցող ինդեքսների միջոցով:

Մասնավորապես՝ գնահատվել է շուկայի կենտրոնացվածության աստիճանն ըստ շուկայում մեծ մասնաբաժին ունեցող 3 ընկերության մասնաբաժինների՝ CR3 (Concentration ratio).

$$CR3=S1+S2+S3,$$

որտեղ՝ S1-ը, S2-ը և S3-ը համապատասխանաբար՝ շուկայում ամենամեծ մասնաբաժինն ունեցող առաջին, երկրորդ և երրորդ ընկերությունների մասնաբաժիններն են: Տվյալ դեպքում շուկան համարվում է բարձր կենտրոնացված, եթե $70\% < CR3 < 100\%$: Ըստ այդմ՝

- 2018 թվականի ընթացքում CR3-ը, ըստ «Հավի միս» ապրանքային շուկայի իրացման ծավալների, կազմել է 53%:
- 2019 թվականի ընթացքում CR3-ը, ըստ ապրանքային շուկայի իրացման ծավալների, կազմել է 57%:
- 2020 թվականի ընթացքում CR3-ը, ըստ ապրանքային շուկայի իրացման ծավալների, կազմել է 49%:

Հաշվարկվել է նաև Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը, որը շուկայի կենտրոնացվածության գնահատման առավել տարածված և ճշգրիտ ցուցանիշներից է: Այն, ըստ էության, շուկայում գործող բոլոր տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինների քառակուսիների գումարն է: Ինդեքսի հիմնական

ատավելությունն այն է, որ վերջինս շատ զգայուն է մասնաբաժինների փոփոխության նկատմամբ շուկայում.

$$IHH=S_1^2+S_2^2+S_3^2+....+S_n^2,$$

որտեղ՝

S_1 -ը շուկայում ամենախոշոր մասնաբաժին ունեցող ընկերության մասնաբաժինն է,

S_2 -ը՝ երկրորդ ամենամեծ մասնաբաժինն ունեցող ընկերության մասնաբաժինը, և այսպես շարունակ:

Եթե $IHH < 1000$, ապա շուկան չի համարվում կենտրոնացված, եթե $1000 < IHH < 1800$, ապա դա համարվում է չափավոր, իսկ $IHH > 1800$ -ի դեպքում՝ բարձր կենտրոնացված:

- 2018 թվականի ընթացքում IHH-ն, ըստ իրացման, կազմել է 1418:
- 2019 թվականի ընթացքում IHH-ն, ըստ իրացման, կազմել է 1816:
- 2020 թվականի ընթացքում IHH-ն, ըստ իրացման, կազմել է 1349:

Նվաճ ինդեքսներով իրականացված հաշվարկների պարագայում շուկան ունի ցածր և/կամ չափավոր կենտրոնացվածության մակարդակ:


Հավի մսի ապրանքային շուկայի կառուցվածքի ընդհանուր պատկերը և դիտարկված ցուցանիշների շարժընթացը վկայում են մի շարք, այդ թվում՝ տնտեսական մրցակցությանն առնչվող գործընթացների դրական փոփոխությունների մասին:

ԳԼՈՒԽ 5

ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ԳՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՀԱՎԻ ՄՍԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

5.1 Հավի մսի միջազգային գների շարժընթացը

Հավի մսի գինն աշխարհում շարունակական աճի միտում է ցուցաբերում: Եթե դիտարկենք գների շարժընթացը 2000 թ. հունվարից մինչև 2021 թ. օգոստոս, ապա 12-ամյա աճի միջին տեմպը 3.8% է: Ամբողջ ժամանակահատվածում գնի ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2018 թ. մայիսին՝ 3.5 ԱՄՆ դոլար՝ 1 կգ-ի դիմաց, իսկ ամենացածրը՝ դիտարկվող ժամանակահատվածի առաջին եռամսյակում՝ 2020 թ. մարտին՝ 1.3 ԱՄՆ դոլար՝ 1 կգ-ի դիմաց: Դիտարկվող ժամանակահատվածում գների ստանդարտ շեղումը 0.5 ԱՄՆ դոլար է:



Գների վիճակագրական բնութագրիչները	
Աճի միջին տեմպ, %	3.8
Առավելագույն արժեք, ԱՄՆ դոլար (ժամանակ.)	3.5 (05/2018)
Նվազագույն արժեք, ԱՄՆ դոլար (ժամանակ.)	1.3 (03/2000)
Ստանդարտ շեղում	0.5


Գծապատկեր 5.1.1

Հավի մսի միջազգային գների շարժընթացը⁴⁰

Վերլուծելով վերջին տասնամյակի զարգացումները՝ կարելի է նկատել, որ 2010 թ.-ին մինչև 2021 թ. հուլիս հավի մսի գինը թեև դրսևորել է տատանողական վարքագիծ, այդուհանդերձ, գնի փոփոխության ընդհանուր ուղղությունն աճող է: Գինն աճել է 2010-2014 թթ. մայիսին՝ արտացոլելով համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո առաջարկի սահմանափակումների պայմաններում պահանջարկի վերականգնումը: 2014 թ. կեսերից մինչև 2015 թ. նոյեմբեր գնի նվազման միտում է արձանագրվել՝ պայմանավորված ՌԴ-ի կողմից ներմուծման պահանջարկի կրճատմամբ (հիմնականում այդ երկրում տնտեսական ճգնաժամի և արտաքին առևտրի սահմանափակումներ ընդգրկող պատժամիջոցների հետ կապված): Սակայն, սկսած 2016 թ. նոյեմբերից մինչև 2018 թ. հունիս, գնի էական աճ է գրանցվել, ինչին նպաստել են ցածր գնային միջավայրում առաջարկի աճի դանդաղումը և պահան-

⁴⁰ Աղբյուրը՝ FRED, <https://fred.stlouisfed.org/series/PPOULTUSDM> և հեղինակների հաշվարկներ:

ջարկի վերականգնումը: Այնուհետև՝ մինչև կորոնավիրուսի համավարակի բռնկումը, առաջարկի ավելացմամբ պայմանավորված, գինը ցուցաբերել է թույլ նվազման միտում: Կորոնավիրուսի համավարակի բռնկման պայմաններում գները կտրուկ անկում են ապրել պահանջարկի և ներմուծումների կտրուկ կրճատման պայմաններում, սակայն, սկսած 2020 թ. մայիսից, աճել են վերականգնվող պահանջարկի պայմաններում մատակարարման շղթաների խաթարման և լոգիստիկ ծախսերի բարձրացման հետևանքով: Այսպիսի օրինաչափություն, կապված համավարակի ազդեցությունների հետ, գրանցվել է սննդամթերքի միջին գների դեպքում ևս, սակայն մյուս սննդային ապրանքների գների հետ հավի մսի գնի կոռելյացիան թույլ է եղել⁴¹:



Գծապատկեր 5.1.2


Սննդամթերքի միջազգային գների փոփոխության միտումները 2010 թ. հունվար – 2021 թ. հուլիս ընկած ժամանակահատվածում, 2010 հունվար = 100⁴²

Դիտարկենք նաև հավի միս արտադրողների սահմանած գները ՀՀ-ում և այլ երկրներում՝ ըստ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տվյալների: Տեղական արտադրության հավի մսի գները ներկայացվում են երկու տարբերակով՝ ըստ կենդանի քաշի (Meat live weight, chicken) և որպես վաճառքի ենթակա (Meat, chicken)՝ երբեմն շեշտակիր են տարբերվելով միմյանցից: Գծապատկեր 5.2.3-ում տեղ գտած երկրներից (ներկայացված են այն երկրները, որտեղից Հայաստանը հավի միս է ներմուծում, ինչպես նաև տարածաշրջանային կամ համադրելի որոշ երկրներ) Հայաստանի արտադրողների գները, ըստ կենդանի քաշով հավի մսի, ամենացածր են՝ շուրջ 900 ԱՄՆ դոլար՝ 1 տոնայի համար, մինչդեռ, օրինակ, ՌԴ-ի դեպքում, որտեղից Հայաստանը հավի միս է ներմուծում, արտադրող-

⁴¹ Աղբյուրը՝ Food Outlook – Biannual Report on Global Food Markets. 2010-2021. FAO.

⁴² Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ. Commodity Markets, Pink Sheet <https://www.worldbank.org/en/research/commodity-markets>

ների գները տոննայի դիմաց շուրջ 1450 ԱՄՆ դոլար են: Պատկերը լիովին այլ է վաճառքի ենթակա հավի մսի գների պարագայում. Հայաստանը համեմատվող երկրների շարքում բնորոշվում է ամենաբարձր գնով՝ շուրջ 4200 ԱՄՆ դոլար՝ 1 տոննայի դիմաց (օրինակ՝ ՌԴ-ի 1950 ԱՄՆ դոլար գնի համեմատությամբ): Այսինքն՝ ՀՀ-ում վաճառքի ենթակա հավի միս արտադրողների գները 4.7 անգամ բարձր են կենդանի քաշով հավի գներից, մինչդեռ համեմատվող երկրների դեպքում տարբերությունը միջինում 33% է (առավելագույնը՝ 54%): Սա ցույց է տալիս, որ ՀՀ-ի համար FAO-ի հրապարակած վիճակագրությունը ոչ լիարժեքորեն է արժանահավատ կամ համադրելի այլ երկրների տվյալների հետ:



Գծապատկեր 5.1.3


Որոշ երկրներում հավի միս արտադրողների միջին գները 2010-2019 թթ. (ԱՄՆ դոլարով՝ 1 տոննայի դիմաց)⁴³

5.2

Հավի մսի հայաստանյան շուկայի գների միտումները: Ընդհանուր գներ

Հավի միսը ՀՀ սպառողական շուկայում էականորեն մատչելի է մսի մյուս տեսակներից: Այսպես՝ 2021 թ. երկրորդ եռամսյակի դրությամբ հավի մսի գինը գիջում է ոչխարի մսի գնին 2.5, խոզի մսի գնին՝ 2.1, իսկ տավարի մսի գնին՝ 1.8 անգամ: Ընդ որում, այս հարաբերակցություններն աճել են վերջին տասը տարում, քանի որ հավի մսի գինը ժամանակի ընթացքում ավելի կայուն վարքագիծ է դրսևորել (2010 թվականին նշված հարաբերակցությունները կազմել են համապատասխանաբար՝ 2.2, 1.7 և 1.5):


⁴³ Աղբյուրը՝ <http://www.fao.org/faostat/en/#data/PP>:



Գծապատկեր 5.2.1

Մսի տարբեր տեսակների գները ՀՀ-ում՝ 1 կգ-ի համար (ՀՀ դրամ)⁴⁴

Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում հավի մսի գինը 2010 թ. հունվարից մինչև 2021 թ. հունիսն ընկած ժամանակահատվածում ընդգծված փոփոխությունների չի ենթարկվել, իսկ 2012 թ. օգոստոսից մինչև 2015 թ. մայիս՝ կտրուկ աճից հետո տատանվել է 1 կգ-ի դիմաց՝ 1400-1700 դրամի միջակայքում: Հաշվի առնելով նշված ժամանակահատվածում գրանցված մոտ 280 դրամ աճը՝ կարող ենք արձանագրել, որ գների միջին աճի տեմպը կազմել է 1.1%: Գնի ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2015 թ. ապրիլին՝ 1713 դրամ՝ 1 կգ-ի դիմաց, իսկ ամենացածրը՝ 2020 թ. հուլիսին՝ 1342 դրամ՝ 1 կգ-ի դիմաց: Ըստ վերլուծության՝ գների ստանդարտ շեղումը կազմել է 91.6 դրամ:



Գների վիճակագրական բնութագրիչները	
Աճի միջին տեմպ, %	1.1
Առավելագույն արժեք, ՀՀ դրամ (ժամանակ)	1713 (015/4)
Նվազագույն արժեք, ՀՀ դրամ (ժամանակ)	1342 (2020/7)
Ստանդարտ շեղում, ՀՀ դրամ	91.6


Գծապատկեր 5.2.2

ՀՀ-ում թռչնամսի գների շարժընթացը (ՀՀ դրամ) և դրա վիճակագրական բնութագրիչները

Ընդհանուր առմամբ, վերջին տասնամյակում հավի մսի գինն ավելի դանդաղորեն է աճել, քան պարենային և ոչ պարենային այլ ապրանքների գները: Այսպես՝ 2011 թ. հունվարից մինչև 2021 թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում հավի մսի գնի 12-ամսյա միջին աճի տեմպը կազմել է 0.9 տոկոս,

⁴⁴ Աղբյուրը՝ Պարենային ապահովություն և աղքատություն, 2021 թ., տեղեկագրեր, <https://www.armstat.am/am/?nid=82&year=2021>:

մինչդեռ սպառողական գների 12-ամսյա միջին աճը՝ 2.9 տոկոս, սննդամթերքի գների միջին աճը՝ 3.3 տոկոս, իսկ մսի գնի աճը՝ 3.6 տոկոս: Մսի տեսակներից գնի ամենաարագ աճ արձանագրվել է խոզի մսի դեպքում՝ 4.3 տոկոս:



Գծապատկեր 5.2.3

Հավի մսի, սպառողական գների ինդեքսի և այլ սննդամթերքի գների շարժընթացը ՀՀ-ում


Հավի մսի գնի աճը կոռելացված չէ մսի մյուս տեսակների գների, մինչդեռ կոռելացված է սննդամթերքի և սպառողական գների փոփոխության հետ (աղյուսակ 5.2.1):

Աղյուսակ 5.2.1

Թոշնամսի գնի կոռելյացիան սպառողական, սննդամթերքի և մսի այլ տեսակների գների հետ

	Սպառողական գների ինդեքս	Սննդամթերքի գներ	Մսամթերքի գներ	Տավարի մսի գին	Խոզի մսի գին	Գառան մսի գին
Թոշնամսի գին	0.5	0.5	0.3	-0.1	0.1	0.0

Սա վկայում է, որ հավի մսի գնագոյացման կառուցակարգը քիչ ընդհանրություններ ունի մսի մյուս տեսակների գնագոյացման կառուցակարգերի հետ, սակայն որոշակի ընդհանրություններ ունի տնտեսությունում գների մակարդակի ձևավորման հետ, ինչը կարող է պայմանավորված լինել ամբողջական պահանջարկից փոխանցվող ազդեցություններով կամ ներմուծման գների աճի գործոնով, ինչպես նաև հանրապետության սպառողական զամբյուղում հավի մսի ապրանքային խմբի տեսակարար կշռով, ինչը բավական ազդեցիկ է՝ 1.1%: Արդյունքում, հավի մսի ապրանքային խմբի ազդեցությունն ընդհանուր սպառողական զամբյուղի գների շարժընթացի վրա գրեթե մշտապես էական է:



Գծապատկեր 5.2.4

Հավի մսի գնի փոփոխության ազդեցությունը ՀՀ ՍԳԻ-ի վրա (2014-2020 թթ.)

Ինչպես տեսնում ենք, հավի մսի գնի փոփոխությունն էական ազդեցություն ունի ՍԳԻ-ի վրա. հատկապես 2019 թ. դրա աճը նախորդ տարվա նկատմամբ շուրջ 0.2 տոկոսային կետով դրական ազդեցություն է ունեցել 12-ամսյա ՍԳԻ-ի վրա, իսկ արդեն 2020 թ. գնանկումը՝ հակառակը, գրեթե նույնքան բացասական նպաստում:

5.3

Հավի մսի իրացման գնի շարժընթացը և իրացման մակարդակները

Շուկայում հավի մսի դիտարկումների և շարժընթացի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է բացահայտել շուկայի համապատասխան մակարդակները: Մասնավորապես՝ հավի մսի պարագայում շուկայի առաջին մակարդակում գործունեություն են ծավալում հավի միս արտադրող և իրացնող, ինչպես նաև հավի միս ներկրող և իրացնող տնտեսվարող սուբյեկտները: Երկրորդ մակարդակում են շուկայի առաջին մակարդակում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտներից ձեռքբերողներն ու իրացնողները, որոնք կարող են լինել ինչպես միջնորդ կազմակերպություններ, այնպես էլ վերջնական սպառողին իրացում իրականացնողներ:


Շուկայի երկրորդ մակարդակը մրցակցային է և ապակենտրոնացած, ինչի մասին վկայում է այն, որ հավի միս իրացվում է գրեթե բոլոր իրացման կետերում, և շուկայի երկրորդային մակարդակում հավի մսի իրացմանն առնչվող հնարավոր խոչընդոտներ առկա չեն: Ուստի սույն ուսումնասիրության

շրջանակում հատկորոշված ապրանքային շուկայի սահմաններում դիտարկվել են առաջին մակարդակում տեղի ունեցող շուկայական գործընթացները:

Ապրանքային շուկայի մասնակիցները հավի միսն իրացնում են երկու հիմնական տարբերակներով՝ մեծածախ և մանրածախ, ընդ որում, այս տարբերակների միջև ևս առկա է իրացման գնի տարբերություն: Մասնավորապես՝ հավի մսի մեծածախ և մանրածախ իրացման ծավալների և գների տարբերությունները գնահատելու համար դիտարկվել են ապրանքային շուկայում գործունեություն ծավալող՝ առավել խոշոր իրացման ծավալներ ունեցող 10 տնտեսվարող սուբյեկտների ցուցանիշները: Նշենք, որ 2020 թվականի ընթացքում դիտարկված տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինը միասին իրացման ընդհանուր ծավալում կազմել է շուրջ 80%, ինչը հնարավորություն է տալիս գրեթե ամբողջական պատկեր ստանալու ողջ ապրանքային շուկայի մասով:

Դիտարկված տնտեսվարող սուբյեկտները 2019 թ. իրացրել են 23,939,424 կգ սառեցված և 9,665,316 կգ թարմ կամ պաղեցված հավի միս: Սառեցված հավի մսի շուրջ 66%-ն իրացվել է մեծածախ, իսկ 34%-ը՝ մանրածախ տարբերակով: Թարմ կամ պաղեցված հավի մսի 81%-ն իրացվել է մեծածախ, իսկ 19%-ը՝ մանրածախ տարբերակով:

2020 թվականի ընթացքում նույն տնտեսվարող սուբյեկտներն իրացրել են 23,378,362 կգ սառեցված և 10,688,574 կգ թարմ կամ պաղեցված հավի միս: Սառեցված հավի մսի 63%-ն իրացվել է մեծածախ, իսկ 37%-ը՝ մանրածախ տարբերակով: Թարմ կամ պաղեցված հավի մսի 79%-ն իրացվել է մեծածախ, իսկ 21%-ը՝ մանրածախ տարբերակով:



Գծապատկեր 5.3.1

Հավի մսի իրացման մասնաբաժինները 2019-2020 թթ.՝ ըստ իրացման ձևի (ՄՊՀ տվյալների հիման վրա)


Գծապատկերում ներկայացված ցուցանիշների համադրությունից երևում է, որ հավի միսն առավելապես իրացվել է մեծածախ եղանակով, ինչը շուկայի առաջին մակարդակում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբ-

յեկտների վարքագծին բնորոշ դրսևորում է, այդ թվում՝ նաև այլ ապրանքային շուկաներում:

Անդրադառնալով իրացման գներին՝ նշենք, որ իրացման առավել մեծ ծավալներ ունեցող 10 տնտեսվարող սուբյեկտների շրջանում իրականացված դիտարկումները ցույց են տվել, որ, կախված մեծածախ կամ մանրածախ իրացման ձևից, գների տարբերությունը (միջին տարեկան ցուցանիշների հիման վրա) տատանվում է միջինում 10-20%-ի սահմաններում՝ հոգուտ մանրածախ իրացման ձևի: Դիտարկված տնտեսվարող սուբյեկտներից ոմանք հավի միսն իրացնում են բացառապես մեծածախ ձևով: Չնայած այն հանգամանքին, որ հավի մսի տարբեր տեսակներ սպառողական տեսանկյունից փոխարինելի են միմյանցով, այնուհանդերձ, դրանց իրացման գները որոշակիորեն տարբերվում են:

Թարմ կամ պաղեցված և սառեցված հավի մսի տեսակների գնային տարբերություններին անդրադառնալիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ-ում սառեցված հավի միս ոչ միայն ներկրվում է, այլև արտադրվում տեղական արտադրող ընկերությունների կողմից: Ընդ որում, սառեցված և ներկրված տեղական հավի մսի իրացման գները ևս որոշակիորեն տարբերվում են միմյանցից, թեև երկու դեպքում էլ հավի միսը սառեցված վիճակում է:

Հավի մսի վերոնշյալ տեսակների իրացման գների շարժընթացն ուսումնասիրելու նպատակով դիտարկվել են 4 առավել խոշոր արտադրող-իրացնող և ներկրող-իրացնող տնտեսվարող սուբյեկտների միջին ամսական իրացման ցուցանիշները:



Գծապատկեր 5.3.2


Հավի մսի իրացման գների (ներառյալ հարկերը) շարժընթացն ըստ արտադրող և ներկրող 4 առավել խոշոր ընկերությունների ցուցանիշների (ՄՊՀ փվյալների հիման վրա)

Միջին ամսական ցուցանիշների հիման վրա՝ իրացման առավել բարձր գին ունի թարմ կամ պաղեցված, այնուհետև տեղական արտադրության սառեցված, իսկ ցածր իրացման գին՝ ներկրված հավի միսը: Այնուհանդերձ, ըստ միջին ամսական ցուցանիշների, իրացման գների համադրություն իրա-

կանացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ, կախված տնտեսվարող սուբյեկտի ներկրած կամ արտադրած հավի մսի վերամշակման ձևից (մասնատված կամ ամբողջական), վերջինիս իրացման գնի միջին ամսական ցուցանիշը կարող է էականորեն փոփոխվել: Հավի մսի տարբեր հատվածներ հաճախ ունեն իրացման տարբեր գներ և համապատասխանաբար՝ ինքնարժեք. մասնավորապես՝ սառեցված կրծքամսի իրացման գինն ավելի բարձր է սառեցված ազդրամսի իրացման գնից: Ուստի այն դեպքում, երբ տնտեսվարող սուբյեկտը ներկրում է, օրինակ, առավելապես ազդրամիս, վերջինիս միջին ամսական իրացման գնի ցուցանիշն ավելի ցածր է, քան այն տնտեսվարող սուբյեկտինը, որն արտադրում կամ ներկրում է կրծքամիս: Այս համատեքստում կարևոր է ընդգծել, որ, այնուամենայնիվ, ամբողջական հավի իրացման գների համադրության կամ հավի մսի մասնատված հատվածների հանրագումարի դեպքում իրացման գների միջև տարբերություններն էականորեն նվազում են:

Իրացման գների ձևավորման գործընթացն առավել ճշգրիտ ձևով գնահատելու նպատակով անհրաժեշտ է անդրադառնալ հավի մսի տարբեր տեսակների ինքնարժեքներին և յուրաքանչյուր տեսակի շահութաբերության մակարդակին:


Հավի մսի ինքնարժեքի և իրացման գնի շարժընթացի համաչափության և շահութաբերության միջին մակարդակի գնահատման նպատակով դիտարկվել են հավի մսի արտադրության և ներմուծման խոշոր ծավալներ ունեցող 4-ական տնտեսվարող սուբյեկտների միջին ամսական ցուցանիշները: Դիտարկված տնտեսվարող սուբյեկտներն արտադրության և ներմուծման ընդհանուր ծավալներից յուրաքանչյուրում, համապատասխանաբար, միասին զբաղեցնում են շուկայի 70% և ավելի մասնաբաժինը:



Գծապատկեր 5.3.3

Հավի մսի արտադրության խոշոր ծավալներ ունեցող 4 տնտեսվարող սուբյեկտների միջին կշռված ինքնարժեքները (ըստ 1 կգ-ի), իրացման գները և ծավալները (ՄՊՀ տվյալների հիման վրա)

Գծապատկեր 5.3.3-ում ներկայացված ցուցանիշներից կարող ենք տեսնել, որ 2019 և 2020 թվականներին ՀՀ-ում արտադրված հավի մսի միջին ինքնարժեքի և միջին իրացման գնի միջև տարբերությունները տարբեր ժամանակահատվածներում էականորեն փոփոխվել են: Առավել ուշագրավ են 2020 թվականի առաջին կիսամյակում տեղի ունեցած փոփոխությունները, երբ դիտարկված ողջ ժամանակահատվածում ինքնարժեքի և իրացման գնի միջև տարբերությունը հասել է նվազագույն սահմանին, իսկ իրացման գնից ԱԱՀ-ն դուրս բերելու պարագայում պարզ է դառնում, որ որոշ ամիսների ընթացքում ինքնարժեքը միջինում գերազանցել է իրացման գինը: Այս երևույթը կարող է պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով, այդ թվում՝ ապրանքային շուկայում գործունեություն ծավալող խոշոր տնտեսվարող սուբյեկտներից որևէ մեկի՝ հնարավոր գնային նվազեցման չհիմնավորված քաղաքականություն վարելով: Գնային այսպիսի դրսևորումների պատճառների բացահայտման համար անհրաժեշտ է ուսումնասիրել իրացման ծավալների փոփոխությունը միևնույն ժամանակահատվածում: Հատկանշական է, որ նշված ժամանակահատվածում նկատելի է իրացման ծավալների բացասական տատանում, ինչն իր հերթին կարող է կապված լինել ՀՀ-ում համաճարակային իրավիճակի հետևանքով առաջ եկած խնդիրների և վերջնարդյունքում՝ պահանջարկի կրճատման հետ: Ուստի արձանագրված իրավիճակը կարելի է համարել շուկայական բնականոն գործընթացների արդյունք, սակայն հակամրցակցային հնարավոր գործընթացները բացատրելու համար անհրաժեշտ է նաև միկրոմակարդակում գնահատել խոշոր իրացման ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարած գնային քաղաքականության հիմնավորվածությունը:




Գծապատկեր 5.3.4

Հավի մսի ներմուծման առավել խոշոր ծավալներ ունեցող 4 տնտեսվարող սուբյեկտների միջին կշռված ինքնարժեքները (ըստ 1 կգ-ի), իրացման գները և ծավալները (ՄՊՀ տվյալների հիման վրա)

Ներմուծված հավի մսի միջին կշռված ինքնարժեքի (շուկայում ներմուծման մեծ ծավալներ ապահովող 4 մասնակցի միջին ամսական ցուցանիշների հիման վրա) և իրացման գների փոփոխությունները դիտարկված ժամանակահատվածում տեղի են ունեցել համաչափորեն: Մասնավորապես՝ գծապատկեր 5.3.4-ում ներկայացված տվյալներից տեսանելի է, որ առկա չեն էական շեղումներ և գնային անհամաչափ փոփոխություններ:

Արտադրված և ներմուծված հավի մսի տեսակների առումով, նույնպես առկա են գնային քաղաքականության որոշ տարբերություններ՝ պայմանավորված այդ գործընթացների էական տարբերությամբ: Մասնավորապես՝ արտադրությունն ավելի բազմագործոն գործընթաց է և, ըստ այդմ, ավելի շատ է ենթակա արտաքին մի շարք ազդեցությունների, այն դեպքում, երբ ներմուծման գործընթացն իր բնույթով և դրա վրա հնարավոր ազդեցություն ունեցող գործոնների բազմազանության տեսանկյունից, ավելի պարզ է: Իհարկե, այս ամենին համապատասխան՝ տարբեր են նաև հավի միս արտադրող և ներմուծող տնտեսվարող սուբյեկտների շահութաբերության մակարդակները: Շահութաբերության մակարդակը (անկախ նրանից՝ տնտեսվարող սուբյեկտը ներմուծող է, թե արտադրող) յուրաքանչյուր սուբյեկտի դեպքում տարբեր է, սակայն, ընդհանրացնելով կարելի է փաստել, որ արտադրող տնտեսվարող սուբյեկտների պարագայում միջին շահութաբերության մակարդակը տարբեր ամիսների կարող է զգալիորեն բարձր լինել, քան ներկրողներինը:

Նշենք նաև, որ վեջին տարիներին ներմուծված հավի մսի իրացման գնի փոփոխությունները ՀՀ-ում համահունչ են միջազգային գների փոփոխություններին:



Գծապատկեր 5.3.5

1 կգ ներմուծված հավի մսի միջին իրացման գնի և համապատասխան միջազգային գների (ըստ 1 կգ ամբողջական հավի մսի) շարժընթացը ՀՀ-ում⁴⁵


⁴⁵ Աղբյուր՝ ՄՊՀ, US Department of Agriculture, Bloomberg, World Bank: <https://www.indexmundi.com/commodities/?commodity=chicken&months=60>

Գծապատկեր 5.3.5-ից տեսանելի է, որ 2020 թվականի ընթացքում ՀՀ ներմուծված հավի մսի իրացման և միջազգային գների փոփոխության շարժ-ընթացը համաչափ է: Որոշակի շեղում նկատելի է 2019 թվականի 2-րդ կի-սամյակում:

5.4

Հավի մսի ինքնարժեք և իրացման գին ձևավորող բաղադրիչները ՀՀ-ում

Հավի մսի իրացման գնի ձևավորումն առավել հստակ գնահատելու նպա-տակով անհրաժեշտ է ուսումնասիրել նաև իրացման գին և ինքնարժեք ձևա-վորող բաղադրիչները: Իհարկե, յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտի պարագայում հավի մսի ինքնարժեքը ձևավորող բաղադրիչների արժեքները և դրանց տեսակարար կշիռներն ինքնարժեքում և իրացման գնում կարող են տարբեր լինել, ինչը պայմանավորված է տնտեսվարման առանձնահատկու-թյուններով, գործարար հնտություններով և մի շարք այլ գործոններով: Այնուամենայնիվ, այս ամենի հետ մեկտեղ, կան նաև մի շարք ընդհանրու-թյուններ: Ուստի հավի մսի ինքնարժեք և իրացման գին ձևավորող բաղադ-րիչների ուսումնասիրության նպատակով դիտարկվել են խոշոր արտադրող և ներկրող համապատասխան տնտեսվարող սուբյեկտների միջին ցուցա-նիշները:



Գծապատկեր 5.4.1


Ներմուծված հավի մսի միջին իրացման գնի և ինքնարժեքի կառուցվածքը 2019-2020 թթ. ընթացքում՝ ըստ խոշոր ներկրող ընկերությունների միջին ցուցանիշների (ՄՊՀ տվյալների հիման վրա)

Ինչպես արդեն նշել ենք, հավի մսի արտադրության և ներմուծման գործընթացներն էականորեն տարբերվում են միմյանցից՝ չնայած այն հանգամանքին, որ վերջնարդյունքում երկու դեպքում էլ հավի միսն իրացվում է միևնույն ապրանքային շուկայում: Ուստի ներմուծված և արտադրված հավի մսի ինքնարժեքները և իրացման գները ձևավորող բաղադրիչները դիտարկվել են առանձին:

Ներմուծված հավի մսի ինքնարժեքը և իրացման արժեքն ունեն պարզ կառուցվածք: Մասնավորապես՝ ներկրվող հավի մսի իրացման գինը ձևավորվում է մի քանի հիմնական բաղադրիչներից, որոնցից ավելի մեծ մասնաբաժին ունի հավի մսի ձեռքբերման գինը, որը 2019-2020 թթ. ընթացքում իրացման գնի մեջ միջինում կազմել է 69%:

Դիտարկված ցուցանիշներում 3-րդ երկրներից ներմուծված հավի մսի ձեռքբերման արժեքում ներառված են նաև համապատասխան մաքսատուրքերը: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է քննարկել նաև ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում մաքսային դրույքաչափերի ավելացման պարագայում հավի մսի ձեռքբերման միջին արժեքի հնարավոր փոփոխության աստիճանը՝ քվոտավորման միջոցով 3-րդ երկրներից արտոնյալ պայմաններով ներմուծման գործընթացի դադարեցման պարագայում: Հետազոտության 5.8 բաժնում ներկայացված են թռչնամսի գների հնարավոր փոփոխությունները՝ քվոտավորման միջոցով 3-րդ երկրներից արտոնյալ պայմաններով ներմուծման գործընթացի դադարեցման պարագայում:


Ուշագրավ են նաև հավի միս ներմուծող երկրների ձեռքբերման արժեքների տարբերությունները:



Գծապատկեր 5.4.2

Ներմուծված հավի մսի միջին մաքսային արժեքները 2019-2020 թթ. ընթացքում (1 կգ հավի մսի հաշվով)՝ ըստ ներմուծման երկրների (ՀՀ ՊԵԿ-ի տվյալների հիման վրա)

Միջին մաքսային արժեքների համադրությունը ցույց է տալիս, որ միջինում ձեռքբերման գինն ավելի ցածր է Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի ու ավելի բարձր՝ Բրազիլիայի և Բելառուսի պարագայում:



Գծապատկեր 5.4.3

Արտադրված հավի մսի միջին իրացման գնի և ինքնարժեքի կառուցվածքը 2019-2020 թթ. ընթացքում՝ ըստ արտադրող խոշոր ընկերությունների միջին ցուցանիշների (ՀՀ ՊԵԿ-ի տվյալների հիման վրա)

Արտադրված հավի մսի իրացման գինն ունի բարդ կառուցվածք, որտեղ զգալի է կերի ծախսի մասնաբաժինը: 2019-2020 թթ. ընթացքում ինքնարժեքի կառուցվածքում կերի ծախսի մասնաբաժինը շուրջ 45% է: Նույն ժամանակահատվածում իրացման գնի կառուցվածքում վերադիր գումարի մասնաբաժինը շուրջ 18% է: Իրացման գնի կամ ինքնարժեքի կառուցվածքում, ընդհանուր առմամբ, 2019 և 2020 թվականներին էական փոփոխություններ չեն արձանագրվել:

Արդյունքում, կարելի է գրակասնել, որ արտադրված և ներմուծված հավի մսի գնագոյացման գործընթացները քիչ ընդհանրություններ ունեն: Ներմուծվող հավի մսի ինքնարժեքի և իրացման գինը ձևավորող բաղադրիչների վրա մեծ ազդեցություն ունեն այնպիսի արտաքին գործոններ, ինչպիսիք են հավի մսի միջազգային գները, բեռնափոխադրումների գները, փոխարժեքը և այլն, այն դեպքում, երբ արտադրված հավի մսի պարագայում այս գործոնների ազդեցությունն ավելի փոքր է, հիմնականում՝ կերային բաղադրիչի մասով:


5.5

ՀՀ հավի մսի շուկայում գնային տատանումներ առաջացնող գործոնների մոդելավորումը

«Հավի միս» ապրանքային խումբը ՀՀ շուկայում ներկայացված է տեղական արտադրության և ներմուծված, ինչպես նաև թարմ և սառեցված ապրանքատեսակների տեսքով: Առաջին մոտեցմամբ, ինչպես արդեն նշել ենք, ապրանքատեսակների գների դիտարկումը ցույց է տալիս, որ միջինում տե-

ղական արտադրության հավի միաը 1.7 անգամ ավելի թանկ է ներմուծվածից: Ընդ որում, այդ ապրանքատեսակների գները կոռելացված չեն միմյանց հետ, ինչը վկայում է, որ վերջիններիս գնագոյացման կառուցակարգերը տարբեր են և, ազդող գործոնների տեսանկյունից, քիչ ընդհանրություններ ունեն: Այսպես, ըստ հարցումների և ՀՀ ՄՊՀ տվյալների, եթե ներմուծվող հավի մսի ինքնարժեքի գերակշիռ մասը՝ շուրջ **65-70%-ը**, հավի մսի ձեռքբերման ծախսերն են, ապա տեղական արտադրության հավի մսի ինքնարժեքի հիմնական տարրը կերային բազան է, որ կազմում է ինքնարժեքի մինչև 30-40%-ը:

Ներմուծված և տեղական արտադրության հավի մսի գների միջև կոռելյացիա նկատելի է 2020 թ.-ի կեսերից, երբ երկու տեսակների գներն էլ աճի միտում են ցուցաբերել, ինչը, սակայն, կարող է բացատրվել ընդհանուր սպառողական գների աճով: Մինչդեռ հավի մսի թարմ և սառեցված տեսակների միջև միջին գների հարաբերակցությունը 1.1 է (հոգուտ թարմի), ընդ որում, այդ հարաբերակցությունը ժամանակի մեջ տատանվում է 1-1.2 միջակայքում: Միաժամանակ, այդ երկու տեսակների գները կոռելացված են, ինչը հուշում է, որ դրանց գնագոյացման կառուցակարգերն ընդհանրություններ ունեն:



Գծապատկեր 5.5.1 | Հավի մսի գների շարժընթացն ըստ առանձին տեսակների

ՀՀ-ում հավի մսի գների վրա ազդող գործոնները մոդելավորելուց առաջ նախ՝ ուսումնասիրվել է այդ ուղղությամբ մասնագիտական գրականությունը: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ, որպես սննդամթերքի գների վրա ազդող գործոններ, հիմնականում դիտարկվում են տնտեսությունում գների ընդհանուր մակարդակը և բնակչության եկամուտները, իսկ մյուս գործոն-

⁴⁶ Հիմնվում է ՀՀ ՄՊՀ-ի կողմից «Երևան Միթի» (տեղական և ներմուծված ապրանքատեսակների համար) և «Նոր Զովք» (միայն տեղական ապրանքատեսակների համար) խանութների ցանցերում կատարված դիտարկումների արդյունքների վրա, որոնք միջինացվել են մեր կողմից: 2019 թ. նոյեմբերի, դեկտեմբերի և 2020 թ. հունվարի գները հաշվարկել ենք ինտերպոլյացիայի միջոցով:

ների ազդեցությունն ավելի սահմանափակ է գնահատվում: Այսպես՝ Ահսանը և գործընկերները տնտեսաչափական մոդելների օգնությամբ գնահատել են սննդամթերքի գների վրա ազդող գործոնները և բացահայտել դրանցից ամենակարևորները՝ սպառողական գներ, եկամուտների մակարդակ և փողի պահանջարկ⁴⁷: Հուիը և Պարկը, վեկտոր-ավտոռեգրեսիոնների օգնությամբ հետազոտելով սննդամթերքի գների տատանումները բացատրող գործոնները զարգացող ասիական երկրներում, հանգել են այն եզրակացության, որ գների տատանումներն ավելի շատ բացատրվում են ներքին գործոններով (այդ թվում՝ ՀՆԱ, փողի առաջարկ), քան միջազգային գներով (միջազգային պարենային գներ, նավթի գներ)⁴⁸: Իսկ Նորթոնը, ուսումնասիրելով տավարի մսի գների վրա ազդող գործոնները Կանադայում, որպես հիմնական ազդող գործոններ է առանձնացրել սպառողական պահանջարկը, կերի գները և առաջարկի շուկերը (ինչպիսին է, օրինակ, կենդանիների հիվանդությունների տարածումը)⁴⁹:

Այն աշխատություններում, որտեղ գնահատվում են հենց թռչնամսի գների վրա ազդող գործոնները, որպես կարևոր փոփոխականներ, առանձնացվում են փոխարինող ապրանքների գները, սպառման ծավալները և արտադրության կամ ներմուծման ծախսերի վրա ազդող ցուցանիշները: Այսպես՝ Նարոդը, Տիոնգոն և Կոստալեսը, ուսումնասիրելով թռչնամսի արտադրության ոլորտում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների շարժիչ ուժերը, բացահայտել են, որ ոլորտի աճը պայմանավորված է ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի գործոններով, այդ թվում՝ թռչնամսի փոխարինողների գների բարձրացմամբ, թռչնամսի հավելումների գնի նվազմամբ, սպառողների եկամուտների աճով և սպառման նախասիրությունների դրական տեղաշարժով⁵⁰: Փարսեյը և Փիերսը, տնտեսաչափական եղանակով ուսումնասիրելով թռչնամսի մեծածախ գնի վրա ազդող գործոնները, որպես բացատրող գործոններ են ընտրել թռչնամսի և մսի այլ տեսակների սպառման ծավալներն ու մարքեթինգային ծախսերը: Արդյունքում, բացահայտվել է, որ թռչնամսի սպառման ծավալների աճը նպաստում է գների նվազմանը, իսկ տավարի և խոզի մսի սպառման ծավալները վիճակագրորեն նշանակալի կերպով չեն փոխառնչվում հավի մսի գների հետ⁵¹: Դեմիրը և գործընկերները, որպես թռչնամսի գնի վրա ազդող գործոններ, դիտար-

⁴⁷ Ahsan, H., Iftikhar, Z., & Kemal, M. A. (2011). The determinants of food prices: A case study of Pakistan.

⁴⁸ Huh, Hyeon-Seung and Park, Cyn-Young, Examining the Determinants of Food Prices in Developing Asia (September 1, 2013). Asian Development Bank Economics Working Paper Series No. 370, Available at SSRN: <https://ssrn.com/abstract=2323202> or <http://dx.doi.org/10.2139/ssrn.2323202>

⁴⁹ Norton, M. (2005). Factors affecting beef and cattle producer prices movements. *Monthly Lab. Rev.*, 128, 32.

⁵⁰ Narrod, C., Tiongco, M., & Costales, A. (2007, November). Global poultry sector trends and external drivers of structural change. In *Poultry in the 21st Century, Avian Influenza and Beyond Conference, Bangkok, Thailand* (pp. 5-7).

⁵¹ Parcell, J. L., & Pierce, V. (2000). Factors affecting wholesale poultry prices. *Journal of Agricultural and Applied Economics*, 32(3), 471-478.

կում են ներմուծման ծախսերը, եկամտի մակարդակը, գնողունակությունը և սպառողական նախընտրությունները, փոխարինող ապրանքների գները, տնտեսական իրավիճակը և արտաքին առևտուրը⁵²:

Հաշվի առնելով մասնագիտական գրականության ուսումնասիրությունը և ՀՀ առանձնահատկությունները, որպես ՀՀ սպառողական շուկայում հավի մսի մանրածախ գների վրա ազդող հնարավոր գործոններ, մենք ընտրել ենք հավի մսի միջազգային գները՝ արտահայտված ՀՀ դրամով, միջազգային ծովային փոխադրումների գների ինդեքսը (Baltic dry), ՀՀ արդյունաբերական արտադրողների և գյուղատնտեսական արտադրական միջոցների գնման գները, կերային մշակաբույսերի գները, ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը, սպառողական գների ինդեքսը: Ընտրված գործոններից միջազգային գները, փոխադրումների գների ինդեքսը, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրողների գները պայմանականորեն կարելի է համարել առաջարկի գործոններ, մինչդեռ տնտեսական ակտիվության ցուցանիշը կարող է արտացոլել պահանջարկի փոփոխությունները: Սպառողական գների ինդեքսն արտացոլում է գների ընդհանուր մակարդակի բարձրացումը տնտեսությունում, հետևաբար՝ և՛ առաջարկի, և՛ պահանջարկի գործոնների ցուցիչ է: Տնտեսաչափական վերլուծության ընթացքում կիրառված տվյալները և դրանց աղբյուրները ներկայացված են աղյուսակ 5.5.1-ում:

Աղյուսակ 5.5.1

Տնտեսաչափական վերլուծության ընթացքում կիրառված տվյալները և դրանց աղբյուրները


	<i>Աղբյուր</i>
Կահլայ փոփոխականներ	
Հավի մսի գների 12-ամսյա աճ	ՀՀ ՎԿ, Սպառողական գների ինդեքսը (գները) Հայաստանի Հանրապետությունում (https://www.armstat.am/am/?nid=82&year=2021)
Տեղական հավի մսի գների 12-ամսյա աճ	ՀՀ ՏՄՊՊՀ տրամադրած տվյալներ և հեղինակների հաշվարկներ
Ներմուծված հավի մսի գների 12-ամսյա աճ	ՀՀ ՏՄՊՊՀ տրամադրած տվյալներ և հեղինակների հաշվարկներ
Անկախ փոփոխականներ	
Սպառողական գների ինդեքս, 12-ամսյա	ՀՀ ՎԿ, Սպառողական գների ինդեքսը (գները) Հայաստանի Հանրապետությունում (https://www.armstat.am/am/?nid=82&year=2021)
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	ՀՀ ՎԿ, Ազգային հաշիվների վիճակագրություն (https://www.armstat.am/am/?nid=202)
Արդյունաբերական արտադրողների գների 12-ամսյա աճ	ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ տնտեսական վիճակը (https://www.armstat.am/am/?nid=82&year=2021)

⁵² Demir, P., Aral, Y., Cevger, Y., & Aydin, E. (2010). An economic assessment of the chicken meat/feed price interactions in Turkish broiler sector. *2nd Mediterranean Summit of WPSA, Prospects of World Poultry: A Mediterranean Perspective*, 04-07.

Գյուղատնտեսական արտադրության միջոցների ձեռքբերման գների 12-ամսյա աճ	ՀՀ ՎԿ, Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, տեղակայգրեր (https://www.armstat.am/am/?nid=82&year=2021)
Կերային մշակաբույսերի գների 12-ամսյա աճ	ՀՀ ՎԿ, Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, տեղակայգրեր (https://www.armstat.am/am/?nid=82&year=2021)
Հավի մսի միջազգային գներ՝ դրամային արտահայտությամբ	Համաշխարհային բանկ. Commodity Markets, Pink Sheet (https://www.worldbank.org/en/research/commodity-markets), ՀՀ ԿԲ, Արտաքին հատվածի վիճակագրություն, Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին փոխարժեքներ. (https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx)
Ծովային փոխադրումների ինդեքս (Baltic Dry Index)	https://www.investing.com/indices/baltic-dry

Մինչ էկոնոմետրիկ մոդելների կառուցումը՝ դիտարկել ենք թոչնամսի, ինչպես նաև տեղական և ներմուծված հավի մսի գների և դրանց վրա ազդող առանձին գործոնների վիճակագրական փոխառնչությունները՝ առանձին-առանձին: Մասնավորապես՝ թոչնամսի գների համար դիտարկել ենք ընդհանուր սպառողական գների ինդեքսը, տեղական արտադրության հավի մսի գների համար՝ արդյունաբերական արտադրողների գների ինդեքսը (որպես ծախսերի ցուցիչ), իսկ ներմուծված հավի մսի գների համար՝ հավի մսի միջազգային բորսայական գները՝ արտահայտված ՀՀ դրամով:



Թոչնամսի և սպառողական գների միջև առկա է էական կոռելյացիա: Միաժամանակ, թոչնամսի գները 2015 թ. հունվարից մինչև 2021 թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում նվազել են 3.6 տոկոսով, մինչդեռ սպառողական գների աճը կազմել է 8.5 տոկոս: Արդյունքում, թոչնամսի գների միջին էլաստիկությունը սպառողական գների փոփոխությունից կազմել է 0.15, ինչը նշանակում է, որ սպառողական գների 1% աճը միջինում համընկնում է թոչնամսի գների 0.15% աճին: Գների նման օրինաչափությունը սպառողների համար էլ ավելի է գրավիչ դարձնում թոչնամսի սպառումը:



Գծապատկեր 5.5.2

Թռչանմանի գները և սպառողական գների ինդեքսը ՀՀ-ում


Տեղական արտադրության հավի մսի և արդյունաբերական արտադրողների գների դիտարկումից պարզ է դառնում, որ դրանց միջև առկա է որոշակի թույլ կոռելյացիա: Դիտարկվող ժամանակահատվածում առաջինը տատանողական շարժընթաց է դրսևորել և էական աճ չի արձանագրել, երկրորդը կայուն աճի միտում է ունեցել, որն արագացել է՝ սկսած 2020 թ. կեսերից, երբ էականորեն աճել են նաև հավի մսի գները:



Գծապատկեր 5.5.3

Տեղական արտադրության հավի մսի և արդյունաբերական արտադրողների գները ՀՀ-ում

Ներմուծված հավի մսի գների աճի և միջազգային գների միջև կոռելյացիան ավելի ուժեղ է, քան տեղական արտադրության հավի մսի և արդյունաբերական արտադրողների գների միջև: Այս դեպքում արդեն միտումներն ավելի շատ են համընկնում: Այսպես՝ դիտարկվող ժամանակահատվածում ներմուծված հավի մսի գներն աճել են 24.4, իսկ դրանային արտահայտությամբ միջազգային գները՝ 29.9 տոկոսով: Միտումները գրեթե ճշգրտորեն համընկնում են 2020 թ. կեսերից սկսած, իսկ մնացած ժամանակահատվածներում առկա է թույլ կոռելյացվածություն: Ընդհանուր առմամբ, միջազգային գներից հավի մսի՝ դրանային արտահայտությամբ գների միջին էլաստիկությունը դիտարկվող ժամանակահատվածում կազմել է 1.95, ինչը նշանակում է, որ միջինում անփոփոխ փոխարժեքի պայմաններում միջազգային գների 1% փոփոխությանը նույն ուղղությամբ համընկնում է ներմուծված հավի մսի գնի 1.95% փոփոխություն: Սակայն, այս գնահատականը ցույց չի տալիս միջազգային գնի ազդեցությունը ՀՀ գների վրա, քանի որ հաշվի չի առնում այլ գործոնների ազդեցությունը, ազդեցության փոխանցման ժամանակային խզումները և այլն, հետևաբար՝ ազդեցության չափի վերաբերյալ գնահատականներ ստանալու համար անհրաժեշտ է իրականացնել ռեգրեսիոն վերլուծություն:



Գծապատկեր 5.5.4

Հավի մսի միջազգային գները (արտահայտված ՀՀ դրամով) և ներմուծված հավի մսի գները ՀՀ-ում

Ըստ աղյուսակ 5.5.1-ում ներկայացված գործոնների՝ փորձարկվել են տարբեր հատուկացումներով տնտեսաչափական մոդելներ՝ հերթականությամբ դուրս թողնելով վիճակագրորեն ոչ նշանակալի փոփոխականները:

Որպես թռչանմանի գների աճը բացատրող գործոններ են ընդունվել սպառողական գների աճը, տնտեսական ակտիվության ցուցանիշը և արդյունաբերական արտադրողների գների աճը: Ամենաբարձր ազդեցությունը դրսևորում է սպառողական գների աճը, որն արտացոլում է տնտեսությունում ամբողջական պահանջարկի և արտադրության ձեռքբերման միջոցների գների փոփոխությունը միաժամանակ, իսկ ազդեցության գործակիցը մոտ է 1-ին, այսինքն՝ սպառողական գների 1 տոկոսային կետով փոփոխությունն այլ հավասար պայմաններում հանգեցնում է նույն չափով և նույն ուղղությամբ թռչանմանի գների փոփոխությանը: Արդյունաբերական արտադրողների գների աճը, որն արտացոլում է արտադրության միջոցների գների փոփոխությունը, ազդում է 0.5 գործակցով, իսկ պահանջարկի փոփոխությունն արտացոլող տնտեսական ակտիվության ցուցանիշը՝ 0.4 գործակցով: Մոդելի դետերմինացիայի գործակիցը 0.4 է, այսինքն՝ բացատրվող փոփոխականի տատանումների 40%-ը բացատրվում է նշված գործոններով:

Տեղական արտադրության հավի մսի գների փոփոխությունը բացատրվում է տնտեսական ակտիվության ցուցանիշով և արդյունաբերական արտադրողների գների փոփոխությամբ, որոնցից ավելի մեծ ազդեցություն ունի տնտեսական ակտիվության ցուցանիշը: Վերջինիս գործակիցը 1.3 է, իսկ արդյունաբերական արտադրողների գների աճը՝ 0.7: Այստեղ դետերմինացիայի գործակիցը չափազանց ցածր է՝ 0.14, ինչը ցույց է տալիս, որ գների տատանումների մեծ մասը հնարավոր չէ բացատրել հիմնարար գործոններով:

Ներմուծված հավի մսի գների աճը բացատրվում է դրամային արտահայտությամբ՝ հավի մսի միջազգային գների աճով և միջազգային ծովային բեռ-

նափոխադրումների գներն արտացոլող Baltic Dry ինդեքսով: Առաջինի ազդեցության գործակիցը 0.2 է, իսկ երկրորդինը՝ 0.05: Դետերմինացիայի գործակիցը 0.34 է, ինչը նշանակում է, որ ներմուծված հավի մսի գների տատանումները, հիմնարար գործոնների տեսակետից, շատ ավելի հասկանալի են, քան տեղական արտադրության դեպքում:

Աղյուսակ 5.5.2

Հավի մսի գների վրա ազդող գործոնների տնտեսաչափական մոդելավորումը⁵³

	Մոդել 1 Թոչնամսի գների 12-ամսյա աճ	Մոդել 2 Տեղական հավի մսի գների 12-ամսյա աճ	Մոդել 3 Ներմուծված հավի մսի գների 12-ամսյա աճ
Սպառողական գների ինդեքս, 12-ամսյա	0.98**		
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	0.35***	1.25*	
Արդյունաբերական արտադրողների գների 12-ամսյա աճ	0.51***	0.65**	
Հավի մսի միջազգային գնե- րի (դրամային արտահայ- տությամբ) 12-ամսյա աճ (-1)			0.23**
Ծովային փոխադրումների գների ինդեքս (Baltic Dry)			0.05**
C	-90.00***	-94.19	70.18***
Մոդելի բացատրողականություն	0.40	0.14	0.34
Ընտրանք (դիտարկումների քանակ)	2015 հունվ.- 2021 հուն. (78)	2017 հունվ.- 2021 հուն. (54)	2017 հունվ.- 2021 հուն. (55)

5.6


Հավի մսի միջազգային և ՀՀ ներքին գների միջև
խզումների գնահատումը

Մեր կողմից գնահատված մոդելի օգնությամբ նախ՝ բացահայտվել են միջազգային և ՀՀ թոչնամսի շուկաներում գների շարժընթացի շեղումները, ապա մոդելի այլ հատուկացումների միջոցով ներկայացվել, թե ինչ որակա-
կան ազդեցություն են ունեցել թոչնամսի միջազգային գները ՀՀ-ում ձևա-
վորվող գների վրա:

Կարող ենք նկատել, որ միջազգային զարգացումները, այդ թվում՝ միջազ-
գային շուկաներում հավի մսի և միջազգային ծովային բեռնափոխադրում-

⁵³ *** Նշանակալի է 1% մակարդակում (99% հավանականությամբ), ** նշանակալի է 5% մակարդակում (95% հավ.), * նշանակալի է 10% մակարդակում (90% հավ.):

ների գների փոփոխությունները, ինչպես նաև ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը հնարավորություն են տալիս ընդհանուր պատկերացում կազմելու ՀՀ սպառողական շուկայում ներմուծված հավի մսի գնի միտումների վերաբերյալ:



Գծապատկեր 5.6.1 Գնահատված գների շարժընթացն ըստ ներմուծված թռչնամսի գնի փաստացի և միջազգային զարգացումների (ՀՀ դրամ)

Այսպես՝ մոդելի գնահատումները որոշակիորեն արտացոլել են 2017 թ. ընթացքում ՀՀ սպառողական շուկայում նկատված որոշակի աճը, ապա 2018 թ. կեսերից դրսևորված անկման միտումը՝ մինչև 2020 թ.-ի կեսերը: Ուշագրավ է, որ ՀՀ սպառողական շուկան միջազգային գործոններից բխող շատ ավելի կտրուկ գնաճին արձագանքել է աստիճանական բարձրացմամբ, ընդ որում՝ սկզբնապես փոքր չափով: Այնուհետև կանխատեսվել է միջազգային գործոններից բխող որոշակի նվազում, որը ՀՀ սպառողական շուկայում չի գրանցվել, ինչի արդյունքում 2021 թ. կեսերին ձևավորված գինը համարժեք է եղել 2017 թ. հունվարից 2021 թ. հուլիս ժամանակահատվածում թռչնամսի միջազգային շուկայի, միջազգային բեռնափոխադրումների գների և ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի հետ կապված զարգացումներին:

Դիտարկելով նաև վերջին տարիներին ՀՀ ներմուծված հավի մսի գների վրա միջազգային գործոնների՝ հավի մսի միջազգային և ծովային փոխադրումների գների ազդեցությունների որակական փոփոխությունները՝ կիրառել ենք երկու մոտեցում:

Ըստ առաջին մոտեցման՝ ներմուծված հավի մսի գնի 12-ամսյա աճը «բացատրող» մոդելում (աղյուսակ 5.5.2, մոդել 3) ավելացրել ենք երկակի փոփոխական, որը «0» արժեքն է ընդունում 2017 թ. հունվարից մինչև 2018 թ. մայիս և «1» արժեքը՝ 2018 թ. հունիսից մինչև 2021 թ. հուլիս: Երկակի փոփոխականը վիճակագրորեն նշանակալի է եղել, իսկ մոդելի բացատրողականությունը (դետերմինացիայի գործակիցը) բարձրացել է՝ նախկին 0.34-ի փոխարեն՝

0.41: Միաժամանակ, ավելացված փոփոխականի գործակիցը բացասական է եղել, իսկ հավի մսի միջազգային գների գործակիցը նվազել է, ինչը նշանակում է, որ 2018 թ. հունիսին ազդեցության որակական փոփոխություն է գրանցվել, որի արդյունքում ՀՀ շուկայում միջազգային գների աճը հասնել է ավելի փոքր աճի, քան մինչ այդ:

Ըստ երկրորդ մոտեցման՝ ընտրանքը բաժանել ենք երկու ենթաընտրանքի, որից առաջինն ընդգրկել է 2017 թ. հունվարից մինչև 2018 թ. դեկտեմբեր, իսկ երկրորդը՝ 2019 թ. հունվարից մինչև 2021 թ. հուլիս ժամանակահատվածը: Աղյուսակ 5.6.1-ում, համաձայն մոդել 3-ի, գնահատել ենք նշված երկու ենթաընտրանքը: Առաջինի դեպքում մոդելում հավի մսի միջազգային գների գործակիցը բարձրացել է, ծովային փոխադրումների գների ինդեքսը դարձել ոչ նշանակալի փոփոխական, իսկ մոդելի բացատրողականությունը կրճատվել է: Երկրորդ ենթաընտրանքի պարագայում մոդելում հավի մսի միջազգային գների գործակիցը նվազել է, միջազգային ծովային փոխադրումների գների ինդեքսը դարձել վիճակագրորեն նշանակալի փոփոխական, իսկ մոդելի բացատրողականությունն աճել է՝ հասնելով 0.49-ի:

Բերված գնահատումները ցույց են տալիս, որ, սկսած 2019 թ.-ից, ՀՀ ներմուծվող հավի մսի շուկան ավելի համահունչ է դարձել միջազգային զարգացումներին՝ զուգորդվելով միջազգային գների ազդեցության չափի նվազմամբ: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ 2018 թ. երկրորդ կիսամյակում այդ շուկայում կարող է արձանագրված լինել մրցակցային իրավիճակի բարելավում:

Աղյուսակ 5.6.1

Ներմուծվող հավի մսի գների վրա ազդող գործոնների մոդելավորումն ըստ տարբեր հատուկացումների⁵⁴

	<i>Մոդել 1</i>	<i>Մոդել 2</i>	<i>Մոդել 3</i>
Հավի մսի միջազգային գներ՝ դրամային արտահայտությամբ	0.17*	0.89**	0.20*
Ծովային փոխադրումների գների ինդեքս (Baltic Dry)	0.06***	0.03	0.06**
Dummy 2018 հունիս - 2021 հուլիս	-9.45**		
C	82.59***	-1.16	73.77***
Մոդելի բացատրողականություն	0.41	0.25	0.49
Ընտրանք (դիտարկումների քանակ)	2017 հունվ.- 2021 հուն. (55)	2017 հունվ.- 2018 դեկտ. (24)	2019 հունվ.- 2021 հուլ. (31)

54 *** Նշանակալի է 1% մակարդակում (99% հավանականությամբ), ** նշանակալի է 5% մակարդակում (95% հավ.), * նշանակալի է 10% մակարդակում (90% հավ.):

5.7

ՀՀ-ում հավի մսի գների փոփոխության ազդեցությունն իրացման ծավալների վրա

Ինչպես վերը ներկայացրինք, եթե հավի մսի տեղական արտադրությունը 2018-2020 թթ. ընկած ժամանակաշրջանում համաչափ աճի ընդգծված միտում է ունեցել, ապա ներմուծման ծավալներն ավելի տատանողական են եղել: Ինչ վերաբերում է հավի մսի գներին, ապա թե՛ արտադրված, թե՛ ներմուծված հավի մսի գները, ինչպես նաև միջին գների մակարդակը ՀՀ-ում տատանվել են բավական մեծ միջակայքում, ինչը կարող էր ազդեցություն ունենալ նաև իրացման ծավալների վրա: Սույն հետազոտության շրջանակում փորձ է արվել գնահատելու նաև, թե որքանով են հավի մսի իրացման ծավալների փոփոխությունները պայմանավորված գնային տատանումներով, որքան էլաստիկ է, ընդհանրապես, հավի մսի պահանջարկը գնի նկատմամբ և ինչպիսի զգայունություն ունի ներմուծված հավի մսի պահանջարկը տեղական արտադրության հավի մսի գնի փոփոխությունների նկատմամբ: Այս ցուցանիշների հաշվարկմամբ հնարավոր կլինի հավի մսի գների տարբեր իրավիճակների պարագայում հնարավորինս կանխատեսել իրացման ծավալների շարժընթացը, բացի դրանից, նշված ցուցանիշների հաշվարկը լրացուցիչ հիմնավորում կհանդիսանա «Հավի միս» ապրանքային շուկայի հատկորոշման՝ վերը բերված մոտեցման ապացույցի համար:

Սովորաբար, երկու փոփոխականի միջև առկա փոխկապվածության գնահատման նպատակով կիրառվող հիմնական ցուցանիշներից է **Պիրսոնի գործակիցը**:

Հավի մսի իրացման ծավալների և վերջինիս իրացման գների միջև կախվածության աստիճանը պարզելու համար հետևյալ բանաձևով հաշվարկվել է Պիրսոնի կոռելյացիայի գործակիցը⁵⁵.

$$r_{xy} = \frac{\sum(x_i - \bar{x})(y_i - \bar{y})}{\sqrt{\sum(x_i - \bar{x})^2 \times \sum(y_i - \bar{y})^2}}$$

որտեղ՝ x_i -ն առաջին, y_i -ը՝ երկրորդ փոփոխականի արժեքն է, \bar{x} -ն առաջին, \bar{y} -ը՝ երկրորդ փոփոխականի միջին թվաբանականն է: r_{xy} -ի արժեքները տատանվում են -1-ից մինչև +1-ի միջակայքում: Եթե r_{xy} -ի արժեքը մոտ է -1-ին կամ +1-ին, նշանակում է, որ ցուցանիշների միջև կախվածությունն ուժեղ է: Այս դեպքում, գործակցի բացասական արժեքը վկայում է փոփոխականների միջև հակադարձ համեմատական կախվածության, իսկ դրական արժեքը՝ ուղիղ կախվածության մասին:

⁵⁵ Պիրսոնի կոռելյացիայի գործակիցը հաշվարկվել է արտադրող-իրացնող և ներմուծող-իրացնող 4 խոշոր տնտեսվարող սուբյեկտների տվյալների հիման վրա, որոնք արտադրության և ներմուծման ընդհանուր ծավալներից յուրաքանչյուրում համապատասխանաբար զբաղեցնում են շուկայի 70% և ավելի մասնաբաժինը:

2019 թ. հունվարից մինչև 2020 թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում հավի մսի իրացման ծավալների և գների տվյալների հիման վրա հաշվարկել է Պիրսոնի կոռելյացիայի գործակիցը:

Արդյունքում, $r_{xy} = -0.216$, հետևաբար՝ հավի մսի իրացման ծավալների և գների միջև առկա է թույլ հակադարձ համեմատական կախվածություն, այսինքն՝ գների բարձրացումը հանգեցնում է իրացման ծավալների փոքր կրճատման, և հակառակը:

Հավի մսի գնի փոփոխության նկատմամբ սպառողների զգայունությունը որոշելու նպատակով հաշվարկվել է նաև **պահանջարկի գնային ճկունությունը կամ էլաստիկությունը**: Ճկունության գործակիցը՝ Ed-ն, հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Ed = \frac{X \text{ ապրանքի իրացման ծավալի } \% \text{-ային փոփոխություն}}{X \text{ ապրանքի գնի } \% \text{-ային փոփոխություն}}$$

Պահանջարկը ճկուն է, եթե գնի տոկոսային փոփոխությունն առաջացնում է պահանջարկի ավելի մեծ տոկոսային փոփոխություն (Ed>1): Պահանջարկը ոչ ճկուն է, եթե Ed<1:

Հաշվարկների արդյունքում պարզ է դարձել, որ Ed=2.27, այսինքն՝ հավի մսի պահանջարկը միջինում ճկուն է նրա գնի փոփոխության նկատմամբ, և գնի 1% բարձրացումը միջինում հանգեցնում է պահանջարկի 2.2% նվազման:

ՀՀ-ում արտադրված և ներկրված (ստեղծված) հավի մսերի միջև առկա փոխկապվածության աստիճանը պարզելու նպատակով հաշվարկվել է նաև պահանջարկի խաչաձև ճկունության գործակիցը: Ըստ այդմ՝ գնահատվել է ներմուծված հավի մսի պահանջարկի զգայունության աստիճանն արտադրված հավի մսի գնի փոփոխության նկատմամբ: Պահանջարկի խաչաձև ճկունությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Exy = \frac{X \text{ արտադրանքի պահանջարկի մեծության } \% \text{-ային փոփոխություն}}{y \text{ արտադրանքի գնի } \% \text{-ային փոփոխություն}}$$

Եթե Exy-ը մեծ է մեկից, ապա գործ ունենք փոխադարձ փոխարինելի ապրանքների հետ: 0-ական կամ գրեթե 0-ական Exy-ը ցույց է տալիս, որ այդ ապրանքների միջև փոխկապվածություն առկա չէ:

Այսպիսով՝ հաշվարկվել է ներմուծված հավի մսի պահանջարկի ճկունությունն ըստ արտադրված հավի մսի գնի: Ըստ այդմ՝ Exy=1,54, այսինքն՝ ներմուծված հավի մսի պահանջարկը ճկուն է արտադրված հավի մսի գնի փոփոխության նկատմամբ, և արտադրված հավի մսի գնի 1% բարձրացումը միջինում հանգեցնում է ներմուծված հավի մսի պահանջարկի 1,54% բարձրացման:

Միաժամանակ, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ապրանքի պահանջարկի գնային ճկունության վրա ազդում են նաև մի շարք այլ գոր-


ծոններ, օրինակ՝ սպառողի եկամտում այդ ապրանքի համար կատարված ծախսերի տեսակարար կշիռը, փոխադարձ փոխարինելի ապրանքների առկայությունը, ժամանակի գործոնը և այլն:

5.8

ՀՀ ներմուծվող հավի մսի գների հնարավոր փոփոխությունները զարգացման տարբեր սցենարների պարագայում

5.8.1. Բազային սցենարի մշակում

Հիմք ընդունելով ներմուծվող հավի մսի գները բացատրող մոդելի գնահատման արդյունքները և Համաշխարհային բանկի կողմից հավի մսի միջազգային գների կանխատեսումները⁵⁶ մշակել ենք ՀՀ ներմուծվող հավի մսի գների բազային սցենար: Բացի հավի մսի միջազգային գների կանխատեսվող զարգացումներից, սցենարը հիմնվում է նաև միջազգային բեռնափոխադրումների գների և դոլար/դրամ փոխարժեքի՝ 2021 թ. հոկտեմբերի վերջի դրությամբ գրանցված իրավիճակի պահպանման ենթադրության վրա: Ըստ այդմ՝ 2021 թ. ներմուծվող հավի մսի միջին գինը 15.2%-ով ավելի բարձր կլինի, քան նախորդ տարի՝ կազմելով շուրջ 850 դրամ, իսկ հաջորդ տարիներին կդրսևորվի աստիճանական նվազման միտում: Ընդ որում, տնտեսաչափական գնահատումները թույլ են տվել արձանագրել բազային կանխատեսումների անորոշությունները, համաձայն որոնց՝ ներմուծվող հավի մսի գինը 700-950 դրամի միջակայքում կենթարկվի հնարավոր տա-տանումների (գծապատկեր 5.8.1):




Գծապատկեր 5.8.1

Ներմուծվող հավի մսի գների զարգացումների բազային սցենարը

⁵⁶ St' u Commodity Markets Outlook, October 2021, World Bank: <https://www.worldbank.org/en/research/commodity-markets>:

Բազային սցենարն արտացոլում է գնի հիպոթեզային զարգացումները քաղաքականության անփոփոխ սցենարի պայմաններում: Վերջինս ենթադրում է, որ մաքսային քաղաքականության՝ 2021 թվականին գործող ռեժիմը կպահպանվի, և դրանից բխող լրացուցիչ ազդեցություններ գնի վրա չեն դրսևորվի: Մասնավորապես՝ հայտնի է, որ 2021 թվականին, չնայած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հաստատած մաքսատուրքերի փոփոխման ժամանակացույցով նախատեսված 50% դրույքաչափին, տնտեսվարողներին տրված քվոտայի շրջանակում գործող դրույքաչափը պահպանվել է 25% մակարդակում⁵⁷: Հետևաբար՝ բազային սցենարի շրջանակում ենթադրվում է երրորդ երկրներից ներմուծվող հավի մսի ծավալների չափով քվոտայի, ինչպես նաև քվոտայի շրջանակում գործող 25% մաքսային դրույքաչափի պահպանում: Սակայն, հայտնի է, որ 2022 թվականի հունվարի 1-ից երրորդ (ոչ ԵԱՏՄ անդամ) երկրներից հավի մսի ներմուծման մաքսատուրքերի համար նախատեսվում է դրույքաչափի բարձրացում՝ մինչև 80%-ի չափով: Միաժամանակ, հաշվի առնելով, որ քվոտայի կիրառումը կարճաժամկետ գործիք է, որի հիմնական նպատակը սպառողների շահերի պաշտպանությունն է, կարևոր է դիտարկել դրա չկիրառման արդյունքում ներմուծվող հավի մսի գնի վրա հնարավոր ազդեցությունները: Ինչպես կարելի է տեսնել գծապատկեր 5.8.2-ից, դրանք բավական զգալի են:



Գծապատկեր 5.8.2

Ներմուծվող հավի մսի ինքնարժեքն ըստ երկրների՝ կախված մաքսատուրքի մակարդակից

⁵⁷ Քվոտայի շրջանակը որոշվում է միջկառավարական ամենամյա համաձայնագրով՝ հիմնվելով նախորդ տարվա ներմուծման ծավալների վրա՝ -10%+10% շեղման միջակայքում: Քվոտան սահմանում են ներմուծողներն ըստ տարեսկզբին նախապես տրվող հայտարարությունների: 2021 թ.-ին ՀՀ-ի համար սահմանվել է 44 հազար տոննա քվոտա, որը գերազանցելու դեպքում ներմուծողներն արդեն ստիպված կլինեն վճարել ոչ թե 25%, այլ 50% ներմուծման մաքսատուրք:

5.8.2. Մաքսատուրքերի բարձրացման ազդեցությունների սցենարներ

Մաքսային քաղաքականության և դրանից բխող՝ ներմուծվող հավի մսի ինքնարժեքի նման կտրուկ վերանայումը կարող է էականորեն փոխել տնտեսվարողների՝ և՛ ներմուծողների, և՛ արտադրողների վարքագիծը՝ առաջացնելով ինչպես ներմուծման աշխարհագրական կառուցվածքի փոփոխություններ, այնպես էլ տեղական արտադրության ընդլայնման հնարավորություններ: Բացահայտելու համար նման զարգացումների ազդեցությունը ներմուծվող հավի մսի գների վրա իրականացվել է սցենարային վերլուծություն: Մասնավորապես՝ երրորդ երկրներից հավի մսի ներմուծման մաքսային դրույքաչափերի՝ մինչև 80% բարձրացման և քվոտայի չկիրառման պայմաններում դիտարկվել է ներքին սպառման պահանջարկի բավարարման երեք սցենար.

- **Սցենար 1:** Անկախ մաքսային դրույքաչափերի փոփոխությունից, ԵԱՏՄ և երրորդ երկրներից, ինչպես նաև ներքին արտադրության հաշվին սպառման պահանջարկի բավարարման համար ենթադրվել են անփոփոխ համամասնություններ: Ընդ որում, վերջիններս հաշվարկվել են որպես 2018-2020 թվականների միջին ցուցանիշներ:
- **Սցենար 2:** Ներմուծման և տեղական արտադրության համամասնությունները պահպանվում են, սակայն երրորդ երկրներից ներմուծումն ամբողջությամբ փոխարինվում է ԵԱՏՄ-ից ներմուծմամբ:
- **Սցենար 3:** Երրորդ երկրներից ներմուծման 50%-ն անմիջապես փոխարինվում է ԵԱՏՄ երկրներից ներմուծմամբ, իսկ մյուս 50%-ը՝ տեղական արտադրությամբ՝ աստիճանաբար, մինչև 2025 թվականը:⁵⁸

Կախված դիտարկվող սցենարից՝ ներմուծվող հավի մսի ինքնարժեքը տարբեր վարքագծեր է ունենում (զծապատկեր 5.8.3): Սցենար 1-ի պարագայում գինը շուրջ 30%-ով ավելանում է 2022 թվականին՝ կայունանալով բարձր մակարդակում: Սակայն, այս սցենարը անիրատեսական է, քանի որ բաց են թողնվում գնի փոփոխության արդյունքում առևտրի շեղման և փոխարինման հնարավորությունները:


⁵⁸ Պարզության համար բոլոր սցենարներում ենթադրվել է, որ երրորդ երկրներից լայն սպառման հավի մսի ներմուծումը դադարում է: Այս ենթադրության հիմքում հետևյալ փաստն է. արտաքին առևտրի քաղաքականության վերաբերյալ մասնագիտական գրականությունը ցույց է տալիս, որ որևէ երկրի հետ առևտրի ծախսերի 1 տոկոս աճը միջինում հանգեցնում է առևտրի ծավալների 4 տոկոս նվազման (տե՛ս The Impact of Tariff Changes on Armenia's Foreign Trade, ADB, 2021, էջ 18: <https://www.adb.org/publications/tariff-changes-armenia-foreign-trade>): Նման էլաստիկությունը հաշվի առնելով, մաքսատուրքերի քննարկվող փոփոխությունը ենթադրում է երրորդ երկրներից ներմուծման ամբողջական փոխարինում ԵՏՄ երկրներից ներմուծմամբ կամ ներքին արտադրությամբ:

Աղյուսակ 5.8.1

Հավի մսի պահանջարկի բավարարման համամասնություններն ըստ երեք սցենարի

	2021	2022	2023	2024	2025
Սցենար 1					
Ներմուծում ԵՏՄ-ից, %	11.4	11.4	11.4	11.4	11.4
Ներմուծում երրորդ երկրներից, %	66.6	66.6	66.6	66.6	66.6
Տեղական արտադրություն, %	22.0	22.0	22.0	22.0	22.0
Սցենար 2					
Ներմուծում ԵՏՄ-ից, %	11.4	78.0	78.0	78.0	78.0
Ներմուծում երրորդ երկրներից, %	66.6	0	0	0	0
Տեղական արտադրություն, %	22.0	22.0	22.0	22.0	22.0
Սցենար 3					
Ներմուծում ԵՏՄ-ից, %	11.4	44.7	44.7	44.7	44.7
Ներմուծում երրորդ երկրներից, %	66.6	25.0	16.7	8.3	0.0
Տեղական արտադրություն, %	22.0	30.3	38.7	47.0	55.3

Սցենար 2-ի պարագայում երրորդ երկրներից ներմուծումն ամբողջությամբ փոխարինվում է ԵՏՄ-ից ներմուծմամբ, ինչի արդյունքում գինը 2022 թվականին 9.2%-ով նվազում է: Սակայն, այս սցենարը ևս կարող է ոչ իրատեսական թվալ այն առումով, որ բաց է թողնում տեղական արտադրողների կողմից ներմուծման փոխարինման հնարավորությունների օգտագործման և տեղական արտադրության ընդլայնման հավանականությունը: Այդ իսկ պատճառով դիտարկված երրորդ սցենարում արդեն տեղական արտադրությամբ փոխարինման ժամանա-կային խզման պատճառով գինը շարունակում է աճել նաև 2022 թվականին, որից հետո սկսում է նվազել:



Գծապատկեր 5.8.3

Մաքսատուրքերի փոփոխության արդյունքում ներմուծվող հավի մսի գների հնարավոր զարգացումների սցենարները

Ընդհանուր առմամբ, մշակված սցենարներն ընդգծում են, որ մաքսատուրքերի փոփոխության ազդեցությունը հավի մսի գնի վրա կարող է լինել ժամանակավոր, քանի որ ԵՏՄ անդամ երկրներից ներմուծման հնարավորությունների առկայության պայմաններում պետք է ակնկալել ներմուծման աշխարհագրական կառուցվածքի փոփոխություն, ինչպես նաև տեղական արտադրության որոշակի ընդլայնում: Այդ գործընթացների հարաբերական չափը և արագությունը կպայմանավորեն գնի աճի չափը և հորիզոնը, որից հետո գինը կնվազի: Ընդ որում, բազայինի համեմատ ավելի իրատեսական սցենարներում ենթադրվում է, որ ներմուծվող հավի մսի ինքնարժեքի ավելի ցածր մակարդակ կապահովվի 2025 թվականին:

Թոչնամսի շրջանառության ոլորտում, մասնավորապես՝ «Հավի միս» ապրանքային շուկայում իրականացված ուսումնասիրության արդյունքները թույլ են տվել կատարել որոշ եզրահանգումներ, որոնք առնչվում են ոլորտում և ապրանքային շուկայում տեղի ունեցող մի շարք տնտեսական գործընթացների, այդ թվում՝ ապրանքային շուկայի մրցակցային միջավայրին:

Ապրանքային շուկայի հատկորոշում

Սույն ոլորտային ուսումնասիրության առանցքային հատվածներից մեկն ապրանքային շուկայի հատկորոշումն է, որի հիմնական նպատակն ուսումնասիրության շրջանակի հստակեցումն է: Ու թեև այս գործընթացը, ըստ էության, տնտեսական մրցակցության գնահատման մասնագիտական-մեթոդական գործողությունների ամբողջություն է՝ միտված ավելի հստակ և առարկայական արդյունք ստանալուն, այնուհանդերձ, կարծում ենք՝ անհրաժեշտ է նաև ամփոփ եզրահանգում կատարել ապրանքային շուկայում հավի մսի տարբեր տեսակների փոխադարձ փոխարինելիությանն առնչվող հարցերի (ապրանքատեսակային սահմանի) վերաբերյալ:

Ապրանքային շուկայի հատկորոշման գործընթացում իրականացվող գործողությունները և դրանց մեթոդներն ու եղանակները բավական հստակ են և հիմնականում սահմանված են համապատասխան նորմատիվ իրավական ակտերով: Չնայած մեթոդական սահմանումների առկայությանը՝ երբեմն գործնականում բավական դժվար է գնահատել և միմյանցից տարանջատել տարբեր ապրանքատեսակներն ու ապրանքախմբերն այնպես, որ մի կողմից այդ գործողությունները մեթոդաբանական և մասնագիտական տեսանկյունից լինեն ճշգրիտ, իսկ մյուս կողմից՝ փաստացի կերպով արտացոլեն իրական շուկայական գործընթացները և սպառողների մեծամասնության մոտեցումներն ու վարքագիծը:

Ուսումնասիրությունում «Հավի միս» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման են ճանաչվել հավի մսի բոլոր տեսակները: Այսինքն՝ հնարավոր է եղել եզրակացնել, որ հավի մսի տարբեր տեսակներ, մասնավորապես՝ սառեցված, պաղեցված, մասնատված և այլն, իրենց հատկանիշների ամբողջության մեջ դիտարկելիս, ինչպես նաև սպառողների մեծամասնության վարքագծի դրսևորումների վրա հիմնվելով, փոխադարձ փոխարինելի են: Նաև այս պատճառով պետք է մանրամասն քննարկել հավի մսի տարբեր տեսակների փոխադարձ փոխարինելիության հարցը, քանի որ սպառողների մեկ այլ՝ նեղ շրջանակի տեսանկյունից, փոխադարձ փոխարինելիության վերաբերյալ որոշ մոտեցումներ կարող են աներկբա չհամարվել: Այս համատեքստում նախ՝ անհրաժեշտ է ընդգծել, որ, չնայած կարող են լինել արձանագրվածից տարբերվող տեսակետներ, ինչպես նաև սպառողների այնպիսի խմբեր, որոնք տարակարծիք են հավի մսի տարբեր տեսակ-

ների փոխարինելիության հարցում, այնուամենայնիվ, ոլորտային ուսումնասիրության և ապրանքային շուկայի հատկորոշման ժամանակ փորձ է արվում հնարավորինս ամբողջական և բազմակողմանի կերպով գնահատելու այդ մոտեցումը՝ առավելապես հիմնվելով ոչ թե որոշակի խմբերի կարծիքների կամ առանձին արդյունքների, այլ շուկայական գործընթացների վրա ազդող, մի շարք տվյալների համակարգային դիտարկմամբ ստացվող արդյունքների վրա: Ուստի կատարված եզրահանգումներն արտացոլում են մի շարք տնտեսական գործընթացների հնարավորինս լայն և ամբողջական պատկերը, ինչպես նաև սպառողների մեծամասնության մոտեցումները:

Ապրանքային շուկայի հատկորոշումը, այդ թվում՝ ապրանքատեսակային սահմանի որոշումը աշխարհում մրցակցային մարմինների կողմից իրենց տարբեր լիազորությունների կատարման համար պարտադիր կիրառվող գործընթաց է, ուստի, ժամանակին զուգընթաց, զարգացել և կատարելագործվել են նաև դրա իրականացման մեթոդներն ու եղանակները: Հիմնվելով առկա փորձի և մեթոդական փաստաթղթերով սահմանված տեղեկությունների վրա՝ կարելի է տարանջատել ապրանքատեսակային սահմանի որոշման մի քանի հիմնական գործիքակազմեր, որոնք լայնորեն կիրառվում են ապրանքների փոխադարձ փոխարինելիության գնահատման ժամանակ:

Միևնույն ապրանքային շուկայում շրջանառվող, փոխարինող չունեցող կամ փոխադարձ փոխարինելի ապրանքները հնարավոր է հայտնաբերել.

1) նախապես որոշված ապրանքի սպառման կամ արտադրական նպատակներով օգտագործման ընթացքում՝ ըստ դրա գործածության նշանակության, կիրառման, որակական, տեխնիկական, գնային կամ այլ հատկանիշների, ինչպես նաև հնարավոր փոխադարձ փոխարինելի ապրանքների միևնույն հատկանիշների գնահատմամբ,

2) եթե հատկանիշների համեմատությամբ արձանագրվող արդյունքն անկասկած չէ, ապա կարելի է դիմել «Հիպոթեզային մենաշնորհյալ» թեստի օգնությամբ,

3) թեստի հետ մեկտեղ, անհրաժեշտության դեպքում կարելի է կիրառել տնտեսաչափական գործիքակազմ՝ փոփոխականների միջև կախվածությունների գնահատման և փոխարինելիության բացահայտման նպատակով (հաճախ կիրառվող եղանակներից մեկը ծավալի և գնի միջև խաչաձև առաձգականության գնահատումն է):

Հենց այս մեթոդական գործիքակազմի կիրառումը, ինչպես նաև առաջադեմ երկրների՝ նույն ոլորտի ուսումնասիրությունների արդյունքները թույլ են տալիս սահմանել «Հավի միս» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանները:

Վերոնշյալ բոլոր գործողությունները վկայել են, որ հավի մսի բոլոր տեսակները, ի վերջո, փոխադարձ փոխարինելի են:

Հետևաբար՝ ապրանքային շուկայի հատկորոշման գործընթացի առու-

մով, կարելի է եզրակացնել, որ հենց այս սկզբունքով կատարվող ուսումնասիրությունները կարող են առավելագույնս արդյունավետ և թիրախային լինել մրցակցային միջավայրի գնահատման համար:

Կարգավորումներ

Ուսումնասիրությունում մանրամասն դիտարկվել են թոչնամսի շրջանառության ոլորտին և «Հավի միս» ապրանքային շուկային ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող մի շարք փաստաթղթերով սահմանված կարգավորումներ, այդ թվում՝ ՀՀ թոչնամսի շուկան կարգավորող ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը, ՀՀ օրենքները և այլ իրավական ակտեր, Պարենի և գյուղատնտեսության համաշխարհային կազմակերպության (FAO) և Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից հաստատված, միջազգային ստանդարտներին համապատասխանող՝ թոչնամսի արտադրության և ներմուծման հետ կապված սանիտարահիգիենիկ անվտանգության նորմեր:

Դիտարկումներից պարզ են դառնում օրենսդրական որոշ բացթողումներ, մասնավորապես՝ ԵԱՏՄ «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի (09.10.2013) 4-րդ հոդվածի գ) կետի պահանջները չեն տարածվում թոչնամսի վրա: Ըստ այդմ՝ սահմանվում են Մաքսային միության մաքսային տարածքում պարտադիր կիրառման և կատարման՝ սպանդային մթերքի և մսամթերքի անվտանգությանը, դրանց արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման և ուտիլիզացման գործընթացների անվտանգությանը, ինչպես նաև Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող արտադրանքի ազատ տեղաշարժի ապահովման նպատակով սպանդային մթերքի և մսամթերքի մականշվածքին ու փաթեթվածքին ներկայացվող պահանջները, որոնք լրացվում են Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ հաստատված՝ «Մսնդամթերքի մականշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի թիվ 881 և Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ հաստատված՝ «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի թիվ 769 պահանջներով, և որոնք չեն հակասում միմյանց: Միաժամանակ, վերոգրյալ կարգավորմանը զուգահեռ, գործում է ՀՀ կառավարության «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» որոշումը, որով կարգավորվում են նաև ԱՏԳԱԱ 0207 կոդով ապրանքների (ընտանի թռչնի միս և սննդային ենթամթերք) սպանդային անվտանգության, պահպանման, իրացման ու ուտիլիզացման պայմանները: Արդյունքում, ԵԱՏՄ անդամ յուրաքանչյուր պետություն ինքնուրույն է սահմանում թոչնամսի և թոչնամթերքի անվտանգության հատուկ նորմերը և պահանջները, քանի որ ԵԱՏՄ շրջանակում միասնական կարգավորում առկա չէ:

ԵԱՏՄ-ում միասնական կարգավորման բացակայության հետևանքով՝ ներմուծվող և տեղական արտադրության թռչնամսի նկատմամբ տարբեր պահանջները գործնականում կարող են տարբեր լինել, ինչը, իր հերթին, կարող է հանգեցնել ինչպես սննդամթերքի անվտանգությանն առնչվող հնարավոր ռիսկերի, այնպես էլ թռչնամսի շրջանառության ոլորտի և/կամ «Հավի միս» ապրանքային շուկայի մրցակցային միջավայրի խաթարմանը, քանի որ վերոնկարագրյալ միասնական կարգավորումների բացակայության պատճառով ապրանքային շուկայում գործունեություն ծավալող որոշ տնտեսվարող սուբյեկտներ կարող են գտնվել ոչ հավասար մրցակցային պայմաններում: Ուստի, ի թիվս այլնի, մրցակցային միջավայրի բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք կանխելու և բացառելու նպատակով առավել արդիական է դառնում լիազոր մարմնի կողմից ԵԱՏՄ միասնական կանոնակարգի ձևավորման աշխատանքների իրականացումը:

Մեկ այլ կարևոր դրվագ վերաբերում է իրացվող հավի մսի մակնշման և փաթեթավորման գործընթացներին: Կարգավորումներով սահմանված են և՛ ներմուծված, և՛ արտադրված թռչնամսի մակնշմանը ներկայացվող պահանջները: Մակայն, մյուս կողմից, կարգավորող իրավական ակտի համապատասխան հավելվածի դրույթները չեն տարածվում վաճառքի կետերում վերջնական սպառողին հանձնված՝ չփաթեթավորված թռչնամսի վրա:

Մանրածախ առևտրի վաճառակետերում վաճառվում է և՛ սառեցված, և՛ թարմ կամ պաղեցված չփաթեթավորված թռչնամիս, որը կամ մակնշված չէ, կամ դրա վրա բացակայում են արտադրության ամսաթիվը (նշվում է փաթեթավորման ամսաթիվը), արտադրողի վերաբերյալ տեղեկությունները:

Փաստորեն, չնայած ներմուծված թռչնամսի նկատմամբ հայատառ պարտադիր մակնշման իրավական կարգավորման առկայությանը, մանրածախ իրացման վաճառակետերում վաճառվում է ներմուծված սառեցված թռչնամիս՝ առանց պատշաճ մակնշման (ծագման երկիր, արտադրության, պահպանման տարեթիվ, պահպանման պայմաններ և այլն):

Տեղական արտադրության չփաթեթավորված հավի մսի տարբերակիչ նշանները (գունային տարբերակմամբ օղակներ) սպառողին հստակ պատկերացում չեն տալիս արտադրության ժամկետների և արտադրող ընկերության մասին:

Մասնատված չփաթեթավորված հավի միսը հիմնականում ներկայացված է առանց տարբերակիչ նշանների:

Մանրածախ առևտրի վաճառակետերում տեղադրված սառնարանային ցուցափեղկերում ներմուծված սառեցված ու չփաթեթավորված թռչնամիսը և ՀՀ-ում արտադրված թարմ կամ պաղեցված ու չփաթեթավորված թռչնամիսը սպառողին են ներկայացվում միմյանցից առանց հստակ տարանջատման՝ կողք կողքի, այն պարագայում, երբ դրանց պահպանման պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, և դրանք չեն կարող ներկայացվել նույն սառնարանային պայմաններում:


Ուստի կարծում ենք՝ մակնշման և ներկայացված մի շարք այլ պահանջների պարտադիր պահպանումը հավասարապես պետք է գործի մասնատված ու չփաթեթավորված մսի և մսամթերքի նկատմամբ:

Ապրանքային շուկայի կառուցվածք

«Հավի միս» ապրանքային շուկայի կառուցվածքի ընդհանուր պատկերը և դիտարկված ցուցանիշների շարժընթացը վկայում են մի շարք, այդ թվում՝ տնտեսական մրցակցությանն առնչվող գործընթացների դրական փոփոխությունների մասին:

Վերջին տարիներին շարժընթացն աճող է ինչպես արտադրվող, այնպես էլ ներկրվող հավի մսի ծավալների դեպքում: Միաժամանակ, աճման շարժընթացին զուգահեռ, որոշակիորեն մեծանում է տնտեսվարող սուբյեկտների թիվը, ինչը վկայում է, որ արտադրության և ներմուծման ծավալների աճն առավելապես պայմանավորված է ապրանքային շուկայում նոր խաղացողների մուտքով և նրանց հետագա գործունեությամբ: Վերոգրյալը հաստատվում է վերջին տարիներին իրացման առավել խոշոր ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինների համեմատական կրճատմամբ: Նոր տնտեսվարող սուբյեկտների ավելացումը դրական ազդակ է՝ ապրանքային շուկայի մուտքի խոչընդոտների բացակայության տեսանկյունից:

Այնուհանդերձ, ապրանքային շուկայում արձանագրված դրական գործընթացներին զուգահեռ, առկա են նաև որոշակի ռիսկային գործոններ, որոնք հետագայում կարող են բացասաբար դրսևորվել: Մասնավորապես՝ ապրանքային շուկայի կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, չնայած վերջին տարիներին արտադրության ծավալներն աճող են, այնուամենայնիվ, ներկրվող հավի մսի ծավալները զգալիորեն գերազանցում են դրանք՝ 2018-2020 թթ.-ի ընթացքում 2.6-ից մինչև 3 անգամ:



Հավի մսի արտադրության և ներմուծման ծավալներն ըստ ՀՀ ՊԵԿ-ի փոխյալների

Բացի այն, որ հավի մսի ներմուծումը զգալիորեն գերազանցում է տեղական արտադրության ծավալները, միաժամանակ, պետք է նշել, որ դրա գերակշիռ մասը ներկրվում է երրորդ երկրներից: 2018-2020 թթ. երրորդ

երկրներից հավի մսի և դրա ենթամթերքի ներմուծման ծավալները ներմուծման ընդհանուր ծավալում կազմել են համապատասխանաբար՝ 84.2%, 88.0% և 87.3%:

Այս համատեքստում առանցքային նշանակություն ունեն ԵԱՏՄ համաձայնագրի շրջանակում նախատեսվող սակագնային կարգավորումները, համաձայն որոնց՝ 2021 թվականից ընտանի թռչնի մսի և մսամթերքի ներմուծման մաքսատուրքը 22%-ից պետք է բարձրանար՝ կազմելով 50%, իսկ 2022 թվականից երրորդ երկրներից հավի մսի ներմուծման մաքսատուրքը նախատեսվում է սահմանել 80%:

ԵԱՏՄ միանական մաքսային դրույքաչափերի կիրառմամբ պայմանավորված փոփոխությունների արդյունքում ներկրվող հավի մսի մաքսատուրքերը կարող են զգալիորեն բարձրանալ: Իհարկե, քվոտավորման կառուցակարգի կիրառմամբ հավի մսի մաքսային սակագները դեռևս պահպանվում են նախատեսվածից ավելի ցածր մակարդակում, սակայն պետք է հաշվի առնել, որ նման քաղաքականության իրականացման շարունակականությունը որոշվում է յուրաքանչյուր տարի, և այս եղանակով ներքին սպառման ծավալների ապահովումը կարող է ընդամենը ժամանակավոր միջոց լինել՝ մինչև ապրանքային շուկայի կառուցվածքային փոփոխությունների արդյունքում կկայունանա հավի մսի առաջարկը:

Վերը նկարագրված փոփոխությունները կարող են ապահովել ինչպես դրական, այնպես էլ բացասական արդյունք: Մաքսատուրքերի բարձրացումը հնարավոր է՝ հանգեցնի երրորդ երկրներից ներկրվող հավի մսի ծավալների զգալի կրճատմանը՝ միաժամանակ, դրականորեն անդրադառնալով տեղական արտադրության զարգացման վրա: Սակայն, այս դեպքում կարևոր է գնահատել տեղական արտադրության արտադրողական հնարավորությունները և բացահայտել՝ արդյոք առկա է սպառման ծավալները տեղական արտադրությամբ բավարարելու ներուժ, այլապես ոչ համաչափ և կտրուկ փոփոխությունների ընթացքը կարող է հանգեցնել կարճաժամկետ կտրվածքում առաջարկի և պահանջարկի զգալի շեղման, որպես հետևանք՝ նաև իրացման գների բարձրացման:

Ամփոփելով նշենք, որ վերջին տարիներին, մրցակցության տեսանկյունից, ապրանքային շուկայի կառուցվածքն առավելապես դրական փոփոխությունների է ենթարկվել: Միաժամանակ, դրական փոփոխությունների հետ մեկտեղ, մաքսային սակագնային քաղաքականության առումով առկա է անորոշություն: Սակագների փոփոխությունը կարող է հանգեցնել ապրանքային շուկայի կառուցվածքի զգալի, ընդ որում, կախված զարգացման սցենարներից, նաև բացասական փոփոխությունների: Տնտեսական մրցակցության տեսանկյունից, մաքսատուրքերի բարձրացումը կարող է հանգեցնել արտահանման երկրների շրջանակի կրճատման, տնտեսվարող սուբյեկտնե-

րի թվի նվազման և, որպես վերջնարդյունք, ապրանքային շուկայի կենտրոնացվածության մակարդակի, ինչպես նաև իրացման գների բարձրացման:

Գնեք

Ուսումնասիրությունում առանձնակի կարևորվել է հավի մսի գների ձևավորման գործընթացի հետազոտումը, քանի որ այս ապրանքատեսակն ունի սոցիալական կարևոր նշանակություն, և վերջինիս գների փոփոխությունների նկատմամբ սպառողներն առանձնակի զգայուն են: Միաժամանակ, մրցակցության տեսանկյունից, խոշոր խաղացողների կողմից իրացման գների տնտեսապես չհիմնավորված փոփոխություններով մրցակցության խաթարումն առավել տարածված հակամրցակցային իրավախախտումներից մեկն է:

Ինչպես արդեն նշել ենք, ներմուծված հավի մսի ծավալները զգալիորեն գերազանցում են տեղական արտադրվածին, ուստի ապրանքային շուկայում իրացվող հավի մսի գերակշիռ մասի գների ձևավորման վրա ուղղակի ազդեցություն ունեն նաև միջազգային համապատասխան գները: Ուսումնասիրությունում մանրամասն անդրադարձ է կատարվել հավի մսի միջազգային գներին, դրանց փոփոխություններին, այդ փոփոխությունների ազդեցություններին ՀՀ շուկայի վրա և այլն:

Միջազգային ասպարեզում վերջին տասնամյակում մեծացել են թոչնամսի արտադրության բացարձակ ծավալն ու դրա կշիռը մսի արտադրության մեջ, միաժամանակ, թոչնամսի համաշխարհային գնի աճը համադրելի է սննդամթերքի համաշխարհային գների աճի հետ: Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա սպառողական շուկայում հավի միսը զգալիորեն ավելի մատչելի է մսի մյուս տեսակներից, իսկ վերջին տասնամյակում դրա գինն ավելի քիչ է աճել պարենային ապրանքների գների միջին աճի համեմատությամբ, ինչը նպաստում է դրա գրավչության բարձրացմանը:

Հաշվի առնելով գների կոռելյացիայի բացակայությունը՝ ՀՀ-ում հավի մսի գնագոյացումը քիչ ընդհանրություններ ունի մսի մյուս տեսակների գնագոյացման հետ, սակայն տնտեսությունում գների ընդհանուր մակարդակի ձևավորմանն առնչվում է՝ ընդհանուր պահանջարկի և ներմուծման գների գործոններով պայմանավորված:

Միջազգային և ՀՀ սպառողական շուկա ներմուծված հավի մսի գները կոռելացված են, և ընդհանուր առմամբ, ՀՀ համապատասխան շուկան բավական զգայուն է միջազգային գների փոփոխությունների նկատմամբ:

ՀՀ-ում թոչնամսի գների ձևավորումն առավելապես բացատրվում է այնպիսի ներքին գործոններով, ինչպիսիք են սպառողական պահանջարկը և արտադրության գները: Մինչդեռ ներմուծվող հավի մսի գների ձևավորումը պայմանավորվում է արտաքին գործոններով՝ տվյալ ապրանքատեսակի միջազգային գներ, բեռնափոխադրումների գներ, փոխարժեք և այլն:

Ներմուծվող հավի մսի գնային միտումները ՀՀ սպառողական շուկայում, ընդհանուր առմամբ, բացատրելի են ըստ միջազգային գործոնների, ընդ որում, 2017 թ. հունվարից մինչև 2021 թ. հուլիս ժամանակահատվածում ՀՀ

սպառողական շուկայում ներմուծվող հավի մսի գնի փոփոխությունները համահունչ են եղել այդ գործոնների փոփոխություններին:

Ինչպես մի շարք այլ պարենային ապրանքային շուկաներում, «Հավի միս» ապրանքային շուկայում նույնպես գների ձևավորման գործընթացն ունի որոշակի օրինաչափ կառուցվածք: Մասնավորապես՝ իրացման մակարդակի և ձևի (մեծածախ, մանրածախ) վերաբերյալ արձանագրված ցուցանիշները բնական են նմանօրինակ ապրանքային շուկաների համար: Առավել ուշագրավ է հավի մսի տարբեր տեսակների իրացման միջին գների ձևավորման գործընթացը: Մասնավորապես՝ ՀՀ-ում արտադրված հավի մսի միջին ինքնարժեքի և իրացման գնի վերաբերյալ դիտարկված ցուցանիշները 2020 թ.-ի ընթացքում ունեցել են որոշակի անհամաչափ շարժընթաց: Ներմուծված հավի մսի պարագայում միջին ինքնարժեքի և իրացման գնի ցուցանիշների շարժընթացն առավել համաչափ է եղել, ավելին, 2020 թվականի ընթացքում դրանց փոփոխությունները համաչափ են եղել նաև միջազգային գների փոփոխություններին:

Ամփոփելով կարելի է ասել, որ միջազգային շուկաներում տեղի ունեցող գործընթացներն առանց էական շեղումների դրսևորվել են նաև ՀՀ շուկայում, և այս տեսանկյունից, հավի մսի ապրանքային շուկան բավական զգայուն է նշված փոփոխությունների նկատմամբ, ինչի մասին են վկայում նաև տնտեսաչափական հաշվարկների արդյունքները:

Ընդհանուր առմամբ, արտադրված հավի մսի դեպքում միջին կշռված ինքնարժեքի և իրացման գնի շարժընթացներում նկատվել են որոշ անհամաչափություններ, սակայն պետք է նշել, որ վերջիններս զուգորդվել են իրացման ծավալների բացասական տատանումներով, որոնք էլ, իրենց հերթին, հնարավոր է՝ պայմանավորված են եղել ՀՀ-ում համաճարակային իրավիճակի սկզբնական ժամանակահատվածում սպառողական պահանջարկի կտրուկ նվազմամբ և արտադրական գործընթացներում խնդիրների առաջացմամբ: Այնուհանդերձ, կարծում ենք՝ հակամրցակցային հավանական գործողությունների առկայությունը բացառելու նպատակով անհրաժեշտ է միկրոմակարդակում իրացման մեծ ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտների գնային քաղաքականության հիմնավորվածությունը դիտարկել առանձին:

Ապրանքային շուկայի հնարավոր զարգացումներ

Հաշվի առնելով ուսումնասիրության շրջանակում ձեռք բերված արդյունքները, ինչպես նաև նախատեսվող մաքսային դրույքաչափերի հնարավոր փոփոխությունների մակարդակները և դրանց հետագա հնարավոր ազդեցությունները՝ մշակվել է հավի մսի գնի բազային սցենար, ինչպես նաև գնահատվել են ՀՀ ներմուծվող հավի մսի մաքսային սակագների փոփոխությունների համատեքստում կանխատեսվող սցենարները:

Այսպես՝ մշակված բազային սցենարն արտացոլում է գնի հիպոթեզային զարգացումներն անփոփոխ քաղաքականության պայմաններում: Ըստ այդմ՝ 2021 թ.-ի արդյունքներով, նախորդ տարվա համեմատությամբ, ներմուծվող

հավի մսի միջին գինը 15.2%-ով ավելի բարձր կլինի՝ կազմելով մոտ 850 դրամ, իսկ հաջորդող տարիներին դա աստիճանական նվազման միտում կունենա: Ընդ որում, ըստ տնտեսաչափական գնահատումների, բազային կանախատեսումներից հնարավոր շեղումների հաշվարկման արդյունքները վկայում են 700-ից մինչև 950 դրամի միջակայքում հնարավոր տատանումների մասին:

Մաքսային դրույքաչափերի փոփոխության համատեքստում մշակվել է հնարավոր զարգացումների 3 սցենար: Դրանցից ավելի իրատեսական է համարվում երրորդը, որի պարագայում հավի մսի իրացման գինը տեղական արտադրությամբ փոխարինման ժամանակային խզման պատճառով շարունակում է աճել 2022 թվականին, որից հետո սկսում է նվազել: Ընդհանուր առմամբ, ըստ մշակված սցենարների, մաքսատուրքերի փոփոխության ազդեցությունները հավի մսի գների վրա կարող են լինել ժամանակավոր, քանի որ ակնկալվում է ներմուծման աշխարհագրական կառուցվածքի, ինչպես նաև տեղական արտադրության որոշակի ընդլայնում: Այդ գործընթացների հարաբերական չափը և արագությունը կայանանավորեն գնի աճի չափը և հորիզոնը, որից հետո գները կնվազեն: Ընդ որում, համաձայն իրատեսական սցենարների, 2025 թ.-ի համար կանխատեսվում է ներմուծվող հավի մսի ինքնարժեքի ավելի ցածր մակարդակ, քան ենթադրվում էր բազային սցենարում:

Հաշվի առնելով գների հնարավոր փոփոխությունները՝ ուսումնասիրության մեջ գնահատվել են դրանց ազդեցություններն իրացման ծավալի վրա: Պիրսոնի կոռելյացիայի գործակցի հաշվարկը ցույց է տալիս, որ հավի մսի իրացման ծավալների և գների միջև առկա է թույլ հակադարձ համեմատական կախվածություն, այսինքն՝ գների բարձրացումը հանգեցնում է իրացման ծավալների փոքր կրճատմանը, և հակառակը:

Հավի մսի գնի փոփոխության նկատմամբ սպառողների զգայունությունը որոշելու նպատակով կիրառված պահանջարկի առաձգականության գործակիցը ևս ցույց է տալիս, որ հավի մսի պահանջարկը միջինում ճկուն է նրա գնի փոփոխության նկատմամբ, և գնի 1% բարձրացումը միջինում հանգեցնում է պահանջարկի 2.2% նվազման:

Ամփոփելով անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրության շրջանակում մշակված «Հավի միս» ապրանքային շուկայի վերաբերյալ սցենարները կանխատեսում են հետագա զարգացումների հիմնական ընթացքը, ուստի դրանց կիրառմամբ հնարավոր կլինի վարել ոլորտի էլ ավելի արդյունավետ քաղաքականություն, որը թույլ կտա խուսափել փոփոխությունների հետևանքով ի հայտ եկող բացասական դրսևորումներից, որոնք կարող են անդրադառնալ նաև մրցակցային միջավայրի վրա:

1. Համաշխարհային բաժնի. Commodity Markets, Pink Sheet
<https://www.worldbank.org/en/research/commodity-markets>
2. Պարենային ապահովություն և աղքատություն, 2021 թ., տեղեկագրեր,
<https://www.armstat.am/am/?nid=82&year=2021>:
3. Державна Митна Служба України, <https://customs.gov.ua/en/statistika-ta-reiestri>
4. FAO, World Agriculture: Towards 2015/2030. An FAO Perspective,
<http://www.fao.org/docrep/005/y4252e/y4252e07.htm>
5. World Agriculture: Towards 2015/2030 An FAO Perspective.
6. https://stats.oecd.org/viewhtml.aspx?datasetcode=HIGH_AGLINK_2021&lang=en#
7. OECD-FAO Agricultural Outlook 2016-2025.
8. Swatland, H.J., 2010, Meat Products and Consumption Culture in the West, Meat Science, 86,
http://ssu.ac.ir/cms/fileadmin/user_upload/Mtahghighat/food/ARTICLES/meat/Meat_products_and_consumption_culture_in_the_East.pdf
9. OECD-FAO Agricultural Outlook 2016-2025.
10. FRED, <https://fred.stlouisfed.org/series/PPOULTUSDM>
11. Food Outlook – Biannual Report on Global Food Markets. 2010-2021. FAO.
12. US Department of Agriculture, Bloomberg, World Bank:
<https://www.indexmundi.com/commodities/?commodity=chicken&months=60>
13. Ahsan, H., Iftikhar, Z., & Kemal, M. A. (2011). The determinants of food prices: A case study of Pakistan.
14. Huh, Hyeon-Seung and Park, Cyn-Young, Examining the Determinants of Food Prices in Developing Asia (September 1, 2013). Asian Development Bank Economics Working Paper Series No. 370,
Available at SSRN: <https://ssrn.com/abstract=2323202>, <http://dx.doi.org/10.2139/ssrn.2323202>
15. Norton, M. (2005). Factors affecting beef and cattle producer prices movements. *Monthly Lab. Rev.*, 128, 32.
